Հաստատված է

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2026 թվականի N 2-L հրամանով

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Բովանդակություն

Ներածություն 3

1. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ 4

2. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 8

3. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 38

4. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ, ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 55

5. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՎՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ 68

6. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԴՐԱ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ 75

7. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 84

8. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 101

9. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 113

10. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ 125

Ներածություն

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) նպատակն օրենքով սահմանված դեպքերում և կարգով քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման, տիեզերական գործունեության բնագավառներում անվտանգության և օրենսդրության պահանջների պահպանման ապահովումն է:

Տեսչական մարմնի խնդիրներն են քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանումը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման, տիեզերական գործունեության բնագավառներում:

Իր առջև դրված խնդիրները կարգավորելու նպատակով Տեսչական մարմինը 2025 թվականի ընթացքում հետևողականորեն իրականացրել է «ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» 11.06.2018թ. թիվ 730-Լ ՀՀ վարչապետի որոշմամբ իրեն վերապահված և 2025 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված գործառույթները:

1. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Տեսչական մարմնի կողմից 2025 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված հետևյալ միջոցառումները կատարվել են ամբողջ ծավալով՝

- ✓ հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում պլանային ստուգումների իրականացում, արդյունքների բազավորում.
- ✓ էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պլանային ստուգումների իրականացում, արդյունքների բազավորում.
- ✓ կանոնավոր ուղևորափոխադրում իրականացնող տնտեսավարողների մոտ պլանային ստուգումների իրականացում, արդյունքների բազավորում.
- ✓ քաղաքաշինության բնագավառում պլանային ստուգումների իրականացում, արդյունքների բազավորում.
- ✓ հրդեհավտանգավորության աստիճանի գնահատման նպատակով հրդեհատեխնիկական հետազոտությունների իրականացում.
- ✓ ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 08-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» թիվ 1025-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.
- ✓ մասնակցություն ՀՀ-ում գործող տեխնիկական կանոնակարգերի, համապատասխանության գնահատման ընթացակարգերի և ստանդարտների վերանայման, ԵԱՏՄ նոր մշակվող տեխնիկական կանոնակարգերի, համապատասխանության գնահատման ընթացակարգերի և ստանդարտների մշակման,

արտադրանքի անվտանգության ապահովման նպատակով նոր տեխնիկական կանոնակարգերի նախագծերի վերաբերյալ առցանց քննարկումներին.

✓ մասնակցություն «Տեխնիկական վիճակից ելնելով բնակելի, հասարակական և արտադրական նշանակության շենքերը/շինությունները շահագործման համար ոչ պիտանի (կազմաքանդման ենթակա) ճանաչելու կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի քննարկմանը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, առաջարկությունների ներկայացում.

✓ մասնակցություն ավտոմոբիլային ճանապարհների հարակից տարածքներում առանց ճանապարհը տնօրինողի համաձայնության կառուցված կամ կառուցվող օբյեկտների գույքագրում և ճանապարհային երթևեկության անվտանգությանը սպառնացող օբյեկտների ապամոնտաժման նպատակով ՀՀ պետական բյուջեում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագծի քննարկմանը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, առաջարկությունների ներկայացում.

✓ մասնակցություն քաղաքաշինական գործունեության գործընթացների բարելավման վերաբերյալ հարցերի քննարկմանը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, առաջարկությունների ներկայացում.

✓ տարածքային ստորաբաժանումների կողմից ընթացիկ և նախորդող տարիների ընթացքում կատարած աշխատանքի ուսումնասիրություն.

✓ իրազեկում-հանդիպումների կազմակերպում պետական կառավարման համակարգի ներկայացուցիչների, տնտեսավարող սուբյեկտների հետ.

✓ 2 իրազեկող տեսանյութերի պատրաստում և հրապարակում.

✓ Տեսչական մարմնի ղեկավարի և ղեկավարի տեղակալների, կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարների հետ 1 մամուլի ասուլիսի կազմակերպում և անցկացում, հարցազրույցների կազմակերպում և անցկացում.

✓ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ համագործակցության արդյունքում կանխարգելիչ միջոցառումների իրականացում.

✓ ամառային դպրոցական արձակուրդների ժամանակաշրջանում իրազեկման աշխատանքների իրականացում ՀՀ տարածքում գործող մանկական հանգստյան ճամբարներում.

✓ Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանումների դասընթացների կազմակերպում:

Տեսչական մարմնի 2025 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված հետևյալ միջոցառումներն իրականացվել են ոչ ամբողջ ծավալով.

✓ ոլորտային անվտանգության կանոնների պահպանման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում, վերահսկողական աշխատանքների վերաբերյալ մամուլի հաղորդագրությունների տարածում.

✓ ստացված բողոքների, ահազանգերի, հարցումների (այդ թվում՝ թեժ գծով) վիճակագրության վարում, ամփոփում.

✓ ուսումնական տարվա ընթացքում դպրոցներում (Երևանում և յուրաքանչյուր մարզում՝ 2-ական) իրազեկման աշխատանքների իրականացում:

Տեսչական մարմնի 2025 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված հետևյալ միջոցառումները չեն իրականացվել.

✓ «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին առաջարկության ներկայացում.

✓ «Էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների դասակարգումը, դրանց մասնագիտական քննությունն իրականացնելու կարգը» հաստատելու մասին ՀՀ կառավարության 2007 թվականի ապրիլի 17-ի թիվ 580-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկության ներկայացում.

✓ ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 1-ի «6 կՎ և բարձր լարման նոր կառուցվող և վերակառուցվող էլեկտրատեղակայանքների գործարկման եզրակացություն

տալու կարգի մասին» թիվ 739-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկության ներկայացում.

✓ ՀՀ կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 5-ի «Միջին ու բարձր ճնշման գազի համակարգերի՝ նոր կառուցվող և վերակառուցվող էներգատեղակայանքների գործարկման եզրակացություն տալու կարգը հաստատելու մասին» թիվ 1423-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկության ներկայացում.

✓ ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 596-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկության ներկայացում.

✓ ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.

✓ ՀՀ ԲՈՒՀ-երի, դատարանների, այլ կառույցների հետ համագործակցության շրջանակում վերապատրաստումների կազմակերպում:

2. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2025 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից իրականացվել է ընդհանուր առմամբ 670 ստուգում, որից 494-ը (73,7%)՝ 2025 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված, 35-ը (5,2%)՝ 2024 թվականի Ստուգումների տարեկան ծրագրից տեղափոխված, 73-ը (10,9%)՝ ոչ պլանային ստուգումներ և 68-ը (10,2%)՝ վերստուգումներ: Ըստ բնագավառների ստուգումների բաշխվածությունն ունի հետևյալ պատկերը.



Ստուգումների արդյունքում արձանագրվել է ընդհանուր առմամբ 6985 խախտում, ընդ որում 4466-ը՝ էներգետիկայի, 1178-ը՝ հրդեհային և տեխնիկական անվտանգության, 741-ը՝ քաղաքաշինության, 462-ը՝ հողօգտագործման և 150-ը՝ տրանսպորտի բնագավառներում:



ՀՐԴԵՀԱՅԻՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2025 թվականի ընթացքում Տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրով հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում նախատեսված էր կատարել ստուգումներ 192 (որից 1 տնտեսավարող սուբյեկտի մոտ կարգավիճակի փոփոխություն է գրանցվել) տնտեսավարող սուբյեկտներին պատկանող 198 արտադրական նշանակության օբյեկտներում, բենզալցակայաններում, գազալցավորման կայաններում, առևտրի և հասարակական սննդի օբյեկտներում, գիտական, ուսումնական, առողջարարական հաստատություններում, հյուրանոցներում, ընդհանուր նշանակության, նավթամթերքների, գյուղատնտեսական նշանակության պահեստներում, մանկական նախադպրոցական, մշակութային և կառավարման հիմնարկներում, սոցիալական ապահովության և գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող կազմակերպություններում: Նախատեսված ստուգումներից ավարտվել են 162 սուբյեկտին պատկանող 167 օբյեկտների ստուգումներ (նախատեսված քանակի 84,34%): Տարեկան ծրագրով նախատեսված 31 օբյեկտ չի ստուգվել փաստացի չգործելու (այդ թվում՝ ժամանակավոր դադարեցման), վերանորոգման, վերակառուցման, գործունեությունը դադարեցված կամ սնանկ լինելու պատճառով: Իրականացվել է ոչ պլանային 1 ստուգում հանրությունից ստացված բողոքի հիման վրա: Տարեկան ծրագրով նախատեսված, սակայն չիրականացված ստուգումներից 12-ի դեպքում փաստացի գործողների մոտ իրականացվել են հրդեհատեխնիկական հետազոտություններ (այսուհետ՝ ՀՏՀ): Տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրով իրականացված 9 ստուգման արդյունքներն ամփոփման փուլում են: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 3 վերստուգում:

2024 թվականի ընթացքում Տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված 163 տնտեսավարող սուբյեկտներին պատկանող 183 օբյեկտների ստուգումներից ավարտվել էին 115 սուբյեկտին պատկանող 123 օբյեկտների ստուգումներ (նախատեսված քանակի 67,21%): Իրականացվել էր ոչ պլանային 8 ստուգում, որից մեկը՝ ՀՀ վարչապետի հանձնարարականի, իսկ 7-ը՝ պետական մարմիններից ստացված գրությունների հիման վրա: 2024 թվականի ընթացքում ընդհանուր առմամբ իրականացվել էր 131 ստուգում և 182 վերստուգում:

2023 թվականի ընթացքում Տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված 252 տնտեսավարող սուբյեկտներին պատկանող 294 օբյեկտների ստուգումներից ավարտվել էին 192 սուբյեկտին պատկանող 210 օբյեկտների ստուգումներ (նախատեսված քանակի 71,4%): Ոչ պլանային 8 ստուգում իրականացվել էր ՀՀ վարչապետի հանձնարարականի հիման վրա: 2023 թվականի ընթացքում ընդհանուր առմամբ իրականացվել էր 220 ստուգում և 218 վերստուգում:

2023-2025 թվականների ընթացքում կատարված ստուգումների և վերստուգումների համեմատությունն ունի հետևյալ գրաֆիկական պատկերը.



2025 թվականի ընթացքում կատարած ստուգումներ/վերստուգումներն ըստ տարածքային միավորների բաշխված են հետևյալ կերպ.



2025 թվականի ստուգումների արդյունքում պարզվել է, որ առանց թերությունների շահագործվում է 32 օբյեկտ, իսկ մնացած օբյեկտներում արձանագրվել է 1178 խախտում:

Արձանագրված խախտումներն ըստ ոլորտների ունեն հետևյալ բաշխվածությունը.



<u>Ընդհանուր նշանակության 17 պահեստներում և բազաներում</u> բացահայտվել է 176 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 14,9%-ը: 1 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների: Հիմնական խախտումներն են.

✓ *փարահանման ճանապարհներին մոնտաժված չեն վթարային լուսավորության լուսատուներ և ելք ցույց տվող ցուցանակներ – 13 դեպք,*

✓ *ներքին հակահրդեհային ջրամատակարարման ցանցի վրա տեղակայված հրշեջ ծորակները համալրված չեն փողակով և փողրակով – 12 դեպք,*

✓ *500 մ³-ից ավելի ծավալով պահեստային շենքերը սարքավորված չեն հրշեջ ծորակներով կահավորված ներքին հակահրդեհային ջրացանցով այնպես, որ յուրաքանչյուր կետ ցողվի 2X2,5 լ/վրկ ջրի շիթով – 12 դեպք,*

✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի փագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 11 դեպք,*

✓ *էլեկտրամատակարարումն անջատող սարքերը (անջատիչները) չեն գտնվում պահեստից դուրս – 10 դեպք,*

✓ *էլեկտրասարքավորումները չեն մոնտաժվել և չեն շահագործվում էլեկտրական սարքավորումների տեղակայման կանոնների համաձայն – 10 դեպք,*

✓ *կախված մակերեսի չափերից պահեստները սարքավորված չեն հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգով – 10 դեպք:*

Նշված ժամանակահատվածում ստուգվել է <u>200 մ² և ավելի մակերեսով առևտրի և հասարակական սննդի 19 օբյեկտ</u>: Ստուգումների արդյունքում բացահայտվել է 118 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 10%-ը: 2 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների: Հիմնական խախտումներն են.

✓ *փարահանման ճանապարհներին մոնտաժված չեն վթարային լուսավորության լուսատուներ և ելք ցույց տվող ցուցանակներ – 14 դեպք,*

✓ *առևտրի և հասարակական սննդի օբյեկտները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով – 10 դեպք,*

✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի փագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 10 դեպք,*

✓ *արտաքին հրդեհաշիջման համար օբյեկտների տարածքում կամ դրանց մոտակայքում (200 մ շառավղով) նախատեսված չէ առնվազն 1 հրշեջ հիդրանտ կամ նվազագույնը 54 մ³ տարողությամբ հակահրդեհային ջրավազան – 9 դեպք,*

✓ *ներքին հակահրդեհային ջրամատակարարման ցանցի վրա տեղակայված հրշեջ ծորակները համալրված չեն փողակով և փողրակով – 8 դեպք,*

✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը մոնտաժված չեն նորմերին համապատասխան և չեն գտնվում սարքին վիճակում – 8 դեպք:*

Մինչև 200 մ^2 մակերեսով առևտրի և հասարակական սննդի 9 օբյեկտի ստուգման արդյունքում բացահայտվել է 6 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,5%-ը: 8 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների:

200 մ^2 և ավելի մակերեսով արտադրական կազմակերպությունների 35 օբյեկտներում բացահայտվել է 165 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 14%-ը: Առանց թերությունների շահագործվող օբյեկտները 8-ն են: Հիմնական խախտումներն են.

- ✓ *տարահանման ճանապարհներին մոնտաժված չեն վթարային լուսավորության լուսատուներ և ելք ցույց տվող ցուցանակներ – 19 դեպք,*
- ✓ *500 մ^3-ից ավելի ծավալով արտադրական շենքերն ու շինություններն սարքավորված չեն հրշեջ ծորակներով կահավորված ներքին հակահրդեհային ջրացանցով այնպես, որ յուրաքանչյուր կետ ցողվի 2X2,5 լ/վրկ ջրի շիթով – 17 դեպք,*
- ✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 16 դեպք,*
- ✓ *Հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը մոնտաժված չեն նորմերին համապատասխան և չեն գտնվում սարքին վիճակում – 15 դեպք,*
- ✓ *ներքին հակահրդեհային ջրամատակարարման ցանցի վրա տեղակայված հրշեջ ծորակները համալրված չեն փողակով և փողրակով – 14 դեպք,*
- ✓ *էլեկտրասարքավորումները չեն մոնտաժվել և չեն շահագործվում էլեկտրական սարքավորումների տեղակայման կանոնների համաձայն – 14 դեպք:*

Մինչև 200 մ^2 մակերեսով 1 արտադրական կազմակերպությունում բացահայտվել է 4 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,3%-ը:

12 բենզալցակայանի ստուգումների արդյունքում բացահայտվել է 42 խախտում, ինչը կազմում է արձանագրված խախտումների 3,6%-ը: Ստուգումներից 1-ն իրականացվել հանրությունից ստացված դիմում-բողոքի հիման վրա: Միաժամանակ պարզվել է, որ 3 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների: Հիմնական խախտումներն են.

✓ հեղուկ վառելիքի ստորգետնյա տարողություններով բենզալցակայանից մինչև այլ շենքերի և շինությունների միջև պահանջվող միջտարածությունները պահպանված չեն – 7 դեպք,

✓ արտաքին հրդեհաշիջումն ապահովված չէ տարողություններից 40 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա գտնվող ոչ պակաս 2 հրշեջ հիդրանտների կամ ոչ պակաս 100 մ³ տարողությամբ հակահրդեհային ջրավազանի միջոցով – 5 դեպք,

✓ բենզալցակայանի տարածքն ապահովված չէ շանթարգելման համակարգով – 4 դեպք:

Երկու հյուրանոցնում բացահայտվել է 9 խախտում, ինչը կազմում է բացահայտված ընդհանուր խախտումների 0,8%-ը:

Նշված ժամանակահատվածում ստուգվել է 7 գազալցավորման կայան: Ստուգումներից 1-ն իրականացվել հանրությունից ստացված դիմում-բողոքի հիման վրա: Ստուգումների արդյունքում բացահայտվել է 40 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 3,4%-ը: Մեկ օբյեկտ շահագործվում է առանց թերությունների:

Գիտական և ուսումնական 7 հաստատությունում բացահայտվել է 66 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 5,6%-ը: Մեկ օբյեկտ շահագործվում է առանց թերությունների: Հիմնական խախտումներն են.

✓ տարահանման ճանապարհներին մոնտաժված չեն վթարային լուսավորության լուսատուներ և ելք ցույց տվող ցուցանակներ – 6 դեպք,

✓ 15 մարդուց ավելի միաժամանակյա ներկայությամբ սենքերի դռները չեն բացվում դեպի դուրս, բացի Ա և Բ կարգի սենքերից – 5 դեպք,

✓ էլեկտրասարքավորումները չեն մոնտաժվել և չեն շահագործվում էլեկտրական սարքավորումների տեղակայման կանոնների համաձայն – 5 դեպք,

✓ կախված մակերեսի չափերից գիտական և ուսումնական հաստատությունների շինությունները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով – 4 դեպք,

✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 4 դեպք:*

Գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող 2 օբյեկտում իրականացված ստուգումների արդյուքում խախտումներ չեն բացահայտվել:

Գյուղատնտեսական նշանակության 2 պահեստ շահագործվում է առանց թերությունների:

34 հիվանդանոցում, պոլիկլինիկայում և ամբուլատորիայում բացահայտվել է 217 խախտում, ինչը կազմում է բացահայտված ընդհանուր խախտումների 18,4%-ը: 6 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների: Հիմնական խախտումներն են.

✓ *հիվանդանոցները, պոլիկլինիկաները, ամբուլատորիաները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով – 23 դեպք,*

✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 23 դեպք,*

✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը մոնտաժված չեն նորմերին համապատասխան և չեն գտնվում սարքին վիճակում – 23 դեպք,*

✓ *տարահանման ճանապարհներին մոնտաժված չեն վթարային լուսավորության լուսատուներ և ելք ցույց տվող ցուցանակներ – 21 դեպք,*

✓ *շինարարական հիմնատարրերը մշակված (տոգորված) չեն հրապաշտպան լուծույթով կամ պատվածքով և չեն գտնվում մշակման (տոգորման) ներգործության ժամկետների մեջ – 18 դեպք:*

Կառավարման 11 հիմնարկում բացահայտվել է 48 խախտում, ինչը կազմում է բացահայտված ընդհանուր խախտումների 4,1%-ը: 3 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների: Հիմնական խախտումներն են.

✓ *տարահանման ճանապարհներին մոնտաժված չեն վթարային լուսավորության լուսատուներ և ելք ցույց տվող ցուցանակներ – 6 դեպք,*

✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 6 դեպք,*

✓ *արտաքին հրդեհաշիջման համար օբյեկտների տարածքում կամ դրանց մոտակայքում (200 մ շառավղով) նախատեսված չէ առնվազն 1 հրշեջ հիդրանտ կամ նվազագույնը 54 մ³ տարողությամբ հակահրդեհային ջրավազան – 4 դեպք,*

✓ *5000 մ³-ից ավելի ծավալով շենքերը սարքավորված չեն հրշեջ ծորակներով կահավորված ներքին հակահրդեհային ջրացանցով այնպես, որ յուրաքանչյուր կետ ցողվի 1X2,5 լ/վրկ ջրի շիթով – 4 դեպք,*

✓ *ներքին հակահրդեհային ջրամատակարարման ցանցի վրա տեղակայված հրշեջ ծորակները համալրված չեն փողակներով և փողրակներով – 4 դեպք:*

Նշված ժամանակահատվածում ստուգվել է 27 <u>մանկական նախադպրոցական հիմնարկում:</u> Արդյունքում բացահայտվել է 216 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 18,3%-ը: 1 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների: Հիմնական խախտումներն են.

✓ *տարահանման ճանապարհներին մոնտաժված չեն վթարային լուսավորության լուսատուներ և ելք ցույց տվող ցուցանակներ - 23 դեպք,*

✓ *մանկական նախադպրոցական հիմնարկները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով – 22 դեպք,*

✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 21 դեպք,*

✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը մոնտաժված չեն նորմերին համապատասխան և չեն գտնվում սարքին վիճակում – 21 դեպք,*

✓ *շինարարական հիմնատարրերը մշակված (տոգորված) չեն հրապաշտպան լուծույթով կամ պատվածքով և չեն գտնվում մշակման (տոգորման) ներգործության ժամկետների մեջ - 17 դեպք:*

<u>Մինչև 800 նստատեղով մշակութային</u> 7 հիմնարկում բացահայտվել է 40 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 3,4%-ը: 1 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների: Հիմնական խախտումներն են.

✓ *տարահանման ճանապարհներին մոնտաժված չեն վթարային լուսավորության լուսատուներ և ելք ցույց տվող ցուցանակներ – 5 դեպք,*

✓ *15 մարդուց ավելի միաժամանակյա ներկայությամբ սենքերի դռները չեն բացվում դեպի դուրս, բացի Ա և Բ կարգի սենքերից – 4 դեպք,*

✓ *գերծանրաբեռնվածության և կարճ միացման հոսանքներից պաշտպանելու համար օգտագործվում են ոչ ստանդարտ սարքեր – 4 դեպք,*

✓ *էլեկտրասարքավորումները չեն մոնտաժվել և չեն շահագործվում էլեկտրական սարքավորումների տեղակայման կանոնների համաձայն – 4 դեպք,*

✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգը չի գտնվում սարքին վիճակում – 4 դեպք:*

Նավթամթերքների 1 պահեստ շահագործվում է առանց թերությունների:

Սոցիալական ապահովության 7 կազմակերպությունում բացահայտվել է 31 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 2,6%-ը: 1 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների:

2025 թվականի ընթացքում իրականացված ստուգումների արդյունքում կազմվել և տրամադրվել է պարտադիր կատարման միջոցառումները և դրանց կատարման ժամանակացույցը սահմանող 121 կարգադրագիր:



Իրականացված 3 վերստուգման արդյունքում արձանագրվել է խախտումների քանակի նվազում 74%-ով: Վերստուգումներով հաստատվել է, որ 2 օբյեկտ (66,7%) ամբողջությամբ վերացրել է ստուգումներով բացահայտված թերությունները:



Ստուգումների և վերստուգումների արդյունքում պարզվել է, որ առանց թերությունների շահագործվում է 34 սուբյեկտի 34 օբյեկտ, դրանք են՝ «ԵՂՎԱՐԴԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ԿԵՐԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ, «ՀԵՐՄԻՆԵ ՂՈՒԿԱՍՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» Ա/Ձ, «ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՄԻ» Ա/Ձ, «ՌԱԴԻԿ ՂԵՎՈՆԴՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» Ա/Ձ, «ՊՐՈՖ ԱԼ» ՍՊԸ, «ՆԱՐԻՆԵ ՇԵԿՈՅԱՆ ԶԱՎԵՆԻ» Ա/Ձ, «ԱՍՅԱ ԱՍՐՅԱՆ ՎԱՐԴԳԵՍԻ » Ա/Ձ, «ԷՐԻԿ ԱՅՎԱԶՅԱՆ ԼԵՎՈՆԻ» Ա/Ձ, «ԳՐԻԳՈՐ ՋԻՆԱՆՅԱՆ ԱԼԲԵՐՏԻ» Ա/Ձ, «ՕՇԱԿԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀՈԱԿ, «ԱՅՆԹԱՊԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀՈԱԿ, «ԽԱՉԿԱՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀՈԱԿ, «ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊՈԱԿ, «ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՏԱՐԱՅԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀՈԱԿ, «ՀՈՎՏԱՇԱՏԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ, «ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Ա/Կ, «ՄԵՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ» Ա/Ձ, «ՆՈՐԱՅՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ» Ա/Ձ, «Ս ԸՆԴ Ս» ՍՊԸ, «ԳՆԴԵՎԱՋ ՖԱՐՄ» ՍՊԸ, «ՎԱՍԻԼ ՉՈԲԱՆՅԱՆ» Ա/Ձ, «ԱՐԶՆՈՒ ՏՈՀՄԱՅԻՆ ԹՏԽ» ԲԲԸ, «ՔԱՐԱԿԵՐՏԻ ՔԱՐԱՁՈՒԼՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ, «ՍԱԹԵՆԿԱՐ» ՍՊԸ, «ԳՅՈՒՄՐՈՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՏՈՒՆ» ՊՈԱԿ, «ԵՂԵԳՆՈՒՏ» ՍՊԸ, «ԳՏՆՎԱԾ ԵՐԱՋ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ, «ԷՐՐԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏԻ» Ա/Ձ, «ՌԱՉԻԿ ՊԵՏՈՆՅԱՆ» Ա/Ձ, «ԼՈՒՄԱ» ՍՊԸ, «ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ Վ.ԱԲԱՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ,

«ԶՈՀՐԱԲ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՌՈՍՏՈՄԻ» Ա/Ձ, «ՈՍՏԱՆ ՌԵՍՏՈՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՍՊԸ, «ԱՇՏԱՐԱԿԻ ԹԻՎ 5 ԱՐԱՔՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ:

2025 թվականի կատարված ստուգումների 97,66%-ը կազմում են տարեկան ծրագրով նախատեսված ստուգումները, 0,59%-ը՝ ոչ պլանային ստուգումները և 1,75%-ը՝ վերստուգումները:

2025 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 2,95 օր (2024 թվականին՝ 2,97 օր, 2023 թվականին՝ 3,26 օր): Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 2,18-ը (2024 թվականին՝ 2,2-ը, 2023 թվականին՝ 2,18-ը): Ոչ պլանային ստուգումների 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 3 օր (2024 թվականին՝ 3,13 օր, 2023 թվականին՝ 2,25 օր): Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 3,0-ը (2024 թվականին՝ 2,75-ը, 2023 թվականին՝ 2-ը): 1 վերստուգման միջին տևողությունը կազմել է 1,33 օր (2024 թվականին՝ 1,45 օր, 2023 թվականին՝ 1,34 օր): Յուրաքանչյուր վերստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 3-ը (2024 թվականին՝ 2,2-ը, 2023 թվականին՝ 2,33-ը):

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱՍՊԱՌՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2025 թվականի ստուգումների տարեկան ծրագրով էներգետիկայի և էներգասպառման բնագավառում նախատեսված էր կատարել ստուգումներ 138 տնտեսավարող սուբյեկտներին պատկանող 144 օբյեկտում: Հաշվետու ժամանակահատվածում 116 տնտեսավարող սուբյեկտի մոտ իրականացվել է 124 (նախատեսված ընդհանուր քանակի 86,1%-ը) ստուգում, որից թվով 10 ստուգման արդյունք ամփոփման փուլում է, այդ թվում՝ ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ և ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ ՓԲ ընկերությունների տարածքային բոլոր 11 մասնաճյուղերում իրականացված ստուգումների, ինչպես նաև ընթացքի մեջ է 1 հանձնարարագրի կատարում: Պլանավորված 19 ստուգում (13,2%) չի իրականացվել օբյեկտների չգործելու (6 օբյեկտ), գազամատակարարման դադարեցման (2 օբյեկտ), վարձակալության (6

օբյեկտ) և սնանկության (2 օբյեկտ), շահագործման արգելանքի (1 օբյեկտ), շինարարական աշխատանքների (1 օբյեկտ), չծանուցվելու (1 օբյեկտ) պատճառով: Տնտեսավարող սուբյեկտից ստացված գրության հիման վրա իրականացվել է 1 ոչ պլանային ստուգում: Ամփոփվել է 2024 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված 3 օբյեկտի ստուգում: Միաժամանակ իրականացվել է 41 վերստուգում: Այսպիսով, Տեսչական մարմնի կողմից էներգետիկայի և էներգասպառման բնագավառում 2025 թվականին ընդհանուր առմամբ իրականացվել է 123 ստուգում և 41 վերստուգում:

2024 թվականին նախատեսված էր կատարել ստուգումներ 124 տնտեսավարող սուբյեկտին պատկանող 127 օբյեկտներում, որից ավարտվել էին 101 տնտեսավարող սուբյեկտներին պատկանող օբյեկտների ստուգումները (նախատեսած քանակի 79,5%-ը): Միաժամանակ ավարտվել էր 2023 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված 10 օբյեկտի ստուգում: Իրականացվել էր 25 վերստուգում: Ավարտված 1 ստուգման արդյունքներ դեռ ամփոփման փուլում էին:

2023 թվականին նախատեսված 135 տնտեսավարող սուբյեկտի 137 օբյեկտների ստուգումներից տարվա ընթացքում ավարտվել էր 92-ը (66,4%), ևս մեկը 2022 թվականի տարեկան ծրագրից: Միաժամանակ իրականացվել էր 84 վերստուգում:

2023-2025 թվականների ստուգումների և վերստուգումների ընդհանուր քանակի բաշխվածությունն ըստ տարիների ունի հետևյալ պատկերը.



Ստուգումների և վերստուգումների ընդհանուր քանակն ըստ տարածքային միավորների ունի հետևյալ բաշխվածությունը.



2025 թվականի ստուգումների արդյունքում արձանագրվել է 4466 խախտում (2024 թվականին՝ 3664 խախտում, 2023-ին՝ 2124 խախտում): Հաշվարկներում ներառված չեն ՀՀ ամբողջ տարածքում գործող ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ և ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ ՓԲ ընկերությունների օբյեկտներում իրականացված ստուգումների արդյունքում բացահայտված խախտումները, քանի որ ստուգումների ամփոփումը դեռ ընթացքի մեջ է:

Վերջին երեք տարիներին ստուգումներով բացահայտված խախտումների քանակական բաշխվածությունն ունի հետևյալ տեսքը.



Հաշվետու տարվա ընթացքում հայտնաբերված խախտումների հանրագումարն ըստ տարածքային միավորների ունի հետևյալ գրաֆիկական պատկերը.



Ստուգումների արդյունքում կազմվել և տնտեսավարող սուբյեկտներին է տրամադրվել պարտադիր կատարման միջոցառումները և դրանց կատարման ժամանակացույցը սահմանող 115 կարգադրագիր (2024 թվականին՝ 96 կարգադրագիր, 2023 թվականին՝ 92 կարգադրագիր):



<u>Էլեկտրաէներգետիկայի բնագավառում և էլեկտրասպառման ոլորտում 67 տնտեսավարող սուբյեկտի (կամ դրա մասնաճյուղերի)</u> տեխնիկական ստուգումների արդյունքում գրանցվել է 977 խախտում, ինչը կազմում է բացահայտված ընդհանուր 4466 խախտումների 21,9%-ը: Հիմնական խախտումներն են.

✓ *նշված չի աշխատատեղի պաշտոնական հրահանգներում տվյալ պաշտոնի համար պարտադիր իմացության հրահանգների, սխեմաների ցանկը – 54 դեպք,*

✓ *նշանակված չի էլեկտրամատակարարի հետ օպերատիվ խոսակցությունների վարման իրավունք և պարտականություն ունեցող պատասխանատու անձ (անձինք) – 52 դեպք,*

✓ չեն ներկայացվել էլեկտրամատակարար կազմակերպություն էլեկտրամատակարարի հետ օպերատիվ խոսակցությունների վարման իրավունք և պարտականություն ունեցող պատասխանատու անձի տվյալները և հեռախոսահամարները – 52 դեպք,

✓ կազմակերպված չեն ԲՍ-ի էլեկտրասարքավորման փորձարկումներն՝ ըստ համապատասխան նորմերի -50 դեպք,

✓ գնահատված չեն գործող էլեկտրատեղակայանքներում աշխատանքի անվտանգության ապահովման համար վտանգավոր և վնասակար գործոնների ազդեցության ռիսկերն՝ ըստ համապատասխան չափանիշների – 49 դեպք:

Գազի համակարգի 107 տնտեսավարող սուբյեկտի (կամ դրա մասնաճյուղի) տեխնիկական ստուգումների արդյունքում բացահայտվել է 2377 խախտում, ինչը կազմում է բացահայտված խախտումների՝ 53,2%-ը: Հիմնական խախտումներն են.

✓ շահագործման ընթացքում գազատարները չեն ենթարկվել պարբերական պրոֆիլակտիկ ստուգման - 92 դեպք,

✓ չեն անցկացվել վերգետնյա և ստորգետնյա գազատարների պարբերական պրոֆիլակտիկ ստուգումներն ըստ հաստատված ժամանակացույցի - 92 դեպք,

✓ չի իրականացվել ըստ հաստատված ժամանակացույցերի գազատարների և նրանց կառույցների վիճակի շրջայցը, և արդյունքները չեն գրանցվել շրջայցման մատյաններում - 82 դեպք,

✓ առկա չեն կազմակերպության գլխավոր ինժեների կողմից հաստատված գազի տնտեսության շահագործման, գազի սարքավորումների տեխ.սպասարկման և վերանորոգման հատուկ հրահանգները - 79 դեպք,

✓ չեն վերանայվել և չեն ճշտվել գազի տնտեսության շահագործման, գազի սարքավորումների տեխ. սպասարկման և վերանորոգման հատուկ հրահանգները - 78 դեպք,

✓ աշխատողներին վարչական անձնակազմի կողմից չեն հանձնվել իրենց մասնագիտություններին վերաբերող աշխատանքների անվտանգ մեթոդների վերաբերյալ հրահանգները - 78 դեպք:

Գազաբաշխման և գազասպառման միջին և բարձր ճնշման 107 էներգատեղակայանքի տեխնիկական ստուգումների արդյունքում բացահայտվել է 879

խախտում, ինչը կազմում է բացահայտված խախտումների 19,7%-ը: Հիմնական խախտումներն են.

✓ կատարված չի գազատարի տեխնիկական շահագործման պրոֆիլակտիկ պլանային նորոգում - 90 դեպք,

✓ չի իրականացվել գազատարի տեխնիկական շահագործման շրջայցային կամ տեխնիկական սպասարկում (զննում, կարգաբերում և մասնակի նորոգում) - 88 դեպք,

✓ առկա չեն գազատարների տեխ.սպասարկման աշխատանքների կատարման հրդեհային անվտանգության հրահանգները - 73 դեպք,

✓ առկա չեն գազատարների տեխ.սպասարկման աշխատանքների կատարման անվտանգ մեթոդների հրահանգները - 72 դեպք,

✓ առկա չէ շահագործման ընդունված գազատարի համար կազմված գազատարը բնութագրող հիմնական ցուցանիշներով տեխնիկական անձնագիրը - 66 դեպք:

Այլ էներգատեղակայանքների տեխնիկական ստուգումները բերված են աղյուսակում.

Տեխնիկական ստուգման տեսակը	Էներգա-տեղակայանքի քանակը	Խախտումների քանակը	Ընդհանուր խախտումներից տոկոս
Գազի համակարգի՝ գազափոխադրման բարձր ճնշման էներգատեղակայանք	3	62	1,4%
110կՎ և բարձր լարման էլեկտրատեղակայանքի՝ էլեկտրահաղորդման օդային գիծ	4	61	1,4%
110կՎ և բարձր լարման 8 էլեկտրատեղակայանքի՝ ենթակայան և բաշխիչ սարքվածք	8	110	2,5%

2025 թվականի ստուգումների արդյունքում պարզվել է, որ առանց թերությունների շահագործվում է 1 օբյեկտ՝ Տավուշի մարզում («Ա-ՏԵԳ» ՍՊԸ) (2024 թվականին՝ 2 օբյեկտ, 2023-ին՝ 1 օբյեկտ):

2025 թվականին իրականացված 41 վերստուգման արդյունքում պարզվել է, որ 14 օբյեկտում թերություններն ամբողջովին վերացվել են (2024 թվականին՝ 25 վերստուգված օբյեկտից 10-ն առանց խախտումների, 2023-ին՝ 84-ից 25-ն առանց խախտումների): Դրանցից.

- Տավուշի մարզում՝ «ԼԵՎՈՆ ԵՐԿՐՈՐԴ» ՍՊԸ, ԳՐԵՏԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ ՍԵԴՐԱԿԻ Ա/Ձ, «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ» ԱՍ, «ԱՐԱՐԱՏ ԳԻՇՅԱՆ» ՍՊԸ, «Հ ԵՎ Տ ՀԱԿՈԲՅԱՆՆԵՐ» ՍՊԸ, ՀՐԱՆԻԿ ԹՈՒՄԱՆՅԱՆ Ա/Ձ,
- Շիրակ մարզում՝ «ԲԱԳԱՐԻՈ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ, «ՀՈՎԳԱԶ» ՍՊԸ, «Ժ.ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ» ՍՊԸ, «ԱԴԱ-ԳՐԻԳ» ՍՊԸ,
- Լոռու մարզում՝ «ՎԱՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ, «ՍՊԻՏԱԿԻ ԹՌՉՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՍՊԸ, «ԲՈՋՈՅԱՆ» ՍՊԸ,
- Կոտայքի մարզում՝ «ՎԱՂԱՐՇ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ:

2025 թվականի վերստուգումների արդյունքում պարզվել է, որ նախորդ ստուգումների ընթացքում արձանագրված 1349 խախտումից 563-ը (խախտումների ընդհանուր քանակի 41,7%) տնտեսավարող սուբյեկտների կողմից վերացվել են:



2025 թվականի իրականացված ստուգումների 74,4%-ը կազմում են պլանային, 0,6%-ը՝ ոչ պլանային ստուգումները, իսկ 25%-ը՝ վերստուգումները (2024 թվականին 80,2% ստուգումները և 19,8% վերստուգումները, 2023-ին՝ 51,7% ստուգումները և 48,3% վերստուգումները): 2025 թվականին իրականացված 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 3,5 օր: Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 1,8-ը (2024 թվականին՝ 3,2 օր և 1,5 մարդ, 2023-ին՝ 3,2 օր և 1,7 մարդ): 2025 թվականին իրականացված 1 վերստուգման միջին տևողությունը կազմել է 1,2 օր:

Յուրաքանչյուր վերստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 1,4-ը (2024 թվականին՝ 1 օր և 1,5 մարդ, 2023-ին՝ 2 օր և 1,7 մարդ):

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Տրանսպորտի բնագավառում 2025 թվականին իրականացվել է 77 ստուգում/վերստուգում, որից 19-ը՝ տարեկան ծրագրով նախատեսված (ստուգումների 24,7%-ը), 34-ը՝ ոչ պլանային (ստուգումների 44,1%-ը) և 24-ը՝ վերստուգում (ստուգումների 31,2%-ը): Իրականացված ստուգումների և վերստուգումների տոկոսային բաշխվածությունն ըստ տարածքային միավորների ունի հետևյալ գրաֆիկական պատկերը.



Տեսչական մարմնի 2025 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված էր կատարել 24 ստուգում կանոնավոր ուղևորափոխադրումների բնագավառում: Փաստացի իրականացվել է 19 ստուգում, ինչը կազմում է նախատեսվածի 79,2%-ը: 5 ստուգում չի իրականացվել, քանի որ կազմակերպությունները դադարեցրել են իրենց գործունեությունը:

2024 թվականին տարեկան ծրագրով 28 նախատեսված ստուգումներից ավարտվել էր 20-ը (նախատեսված քանակի 71,4%-ը), իսկ 2023 թվականին 39 նախատեսված ստուգումներից՝ 28-ը (նախատեսված քանակի 71,8%-ը):

2023-2025 թվականների ստուգումների և վերստուգումների քանակն ըստ տարիների ունի հետևյալ բաշխվածությունը.



Ստուգումների արդյունքում 18 տնտեսավարող սուբյեկտներին տրվել են պարտադիր կատարման ենթակա կարգադրագրեր (2024 և 2023 թվականներին՝ 15-ական), բացահայտվել է 113 (2024 թվականին՝ 79, 2023-ին՝ 66) խախտում, որոնցից առավել կրկնվողներն են.

✓ *հավաքակայանում չի իրականացվում տրանսպորտային միջոցների նախաուղերթային տեխնիկական զննումը – 11 տնտեսավարող սուբյեկտի մոտ,*

✓ *որոշակի վազքից (աշխատատևողությունից) հետո չի կատարվում տեխնիկական սպասարկում – 10 տնտեսավարող սուբյեկտի մոտ,*

✓ *փոխադրումներ իրականացնողի այլ տեսակի վառելիքով շահագործվող տրանսպորտային միջոցը (ները) շահագործվում է՝ ավտոտրանսպորտային միջոցի վրա տեղադրված գազաբալոնային սարքավորման անվտանգության պահանջներին համապատասխանության վկայականի հիման վրա – 10 տնտեսավարող սուբյեկտի մոտ,*

Ստուգումների արդյունքում պարզվել է, որ 1 տնտեսավարող սուբյեկտ՝ «ԵՐԿՈՒ ԸՆԿԵՐ» ՍՊԸ, գործում է առանց խախտումների (2024 թվականին՝ 5, 2023-ին՝ 14):

2025 թվականին կանոնավոր ուղևորափոխադրումների բնագավառում իրականացվել է 16 վերստուգում (2024-ին՝ 16, 2023-ին՝ 18), որոնց արդյունքում 12 տնտեսավարող սուբյեկտների ղեկավարներին տրվել են տեղեկանքներ թերությունների բացակայության վերաբերյալ: Դրանք են. «ՅԱԽՇ» ՍՊԸ, «ՀԵԼԼԱ ՈՒԵՅ» ՍՊԸ, «ԲՈՔՈՆԻԿ» ՍՊԸ, «ԼԱՍՏ» ՍՊԸ, «ՇԱՀ-ՆԱՆ» ՍՊԸ, «ՈՒՂԵԾԻՐ» ՍՊԸ, «ԿԱՐԵՆ» ՍՊԸ, «ՕՆԱՆ» ՍՊԸ, «ՍԱՄՎԵԼ- ՄԵՍՐՈՊ» ՍՊԸ, «ԷՋՄԻԱԾՆԻ ԲԵՌՆԱՈՒՂԵՎՈՐԱ-ՏԱՐ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ» ԲԲԸ, «ՀԱԿՈԲ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ» Ա/Ձ, «ԿԱՐԻՆԵ-85» ԱԿ: Վերստուգումների արդյունքում պարզվել է, որ վերացվել է ընդհանուր առմամբ 76 խախտում:



2025 թվականին տեխնիկական զննության կայաններում իրականացվել է 34 ոչ պլանային ստուգում: Ստուգումների արդյունքում 8 տնտեսավարող օբյեկտներին տրվել են պարտադիր կատարման ենթակա կարգադրագրեր, 7 օբյեկտում խախտումներ չեն հայտնաբերվել, իսկ 18 սուբյեկտների համար կայանների գործունեության կասեցման առաջարկով գրություններ են ուղարկվել Լիազոր մարմին՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, թվով 1 կայանում ստուգման արդյունքում տրվել է ակտ, որը բողոքարկվել է վերադասության կարգով, կայացվել է բողոքը բավարարելու մասին որոշում: Բացահայտվել է 37 խախտում: Հիմնական խախտումն է *Տեխնիկական զննության իրականացման գործընթացի չտեսաձայնագրվելը, և ձայնագրությունները պահպանելը* (27 տնտեսավարող սուբյեկտի մոտ): Իրականացվել է 8 վերստուգում, որոնց արդյունքում 6 տնտեսավարող սուբյեկտների ղեկավարներին տրվել են տեղեկանքներ թերությունների

բացակայության վերաբերյալ: Վերստուգումների արդյունքում պարզվել է, որ վերացվել է ընդհանուր առմամբ 11 խախտում:

1 պլանային ստուգման միջին տևողությունը կազմել է 2 օր (2024 թվականին՝ 2,2, 2023-ին՝ 2,3), այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 1,7-ը (2024 թվականին՝ 1,9, 2023-ին՝ 1,9): 1 ոչ պլանային ստուգման միջին տևողությունը կազմել է 3 օր (2024 թվականին՝ 3, 2023-ին՝ 1), այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր, հատկացված մարդկային ռեսուրսը կազմել է 1,8 (2024 թվականին՝ 1,5, 2023-ին՝ 3): 1 վերստուգման միջին տևողությունը կազմել է 1,4 օր (2024 թվականին՝ 1,1, 2023թ.՝ 1,2), այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր վերստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 1,4-ը (2024 թվականին՝ 1,7, 2023-ին՝ 1,6):

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Քաղաքաշինության բնագավառում 2025 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված 265 ստուգումներից իրականացվել է 176-ը, ինչը կազմում է նախատեսված ընդհանուր քանակի 66%-ը: 89 օբյեկտ (նախատեված քանակի 34%) չի ստուգվել հետևյալ պատճառներով.

- ավարտական ակտի կամ այն ստանալու դիմումի, դրական եզրակացության, շահագործման թույլտվության առկայության՝ 20 օբյեկտ.
- փաստացի շինարարական աշխատանքների բացակայության՝ 34 օբյեկտ, որից 4-ի շինարարության թույլտվության ժամկետն ավարտվել է.
- պատասխանատու անձին և/կամ շինարարության վայրը չհայտնաբերելու՝ 1 օբյեկտ.
- խոչընդոտելու՝ 1 օբյեկտ, որի շինարարության թույլտվության ժամկետն ավարտվել է.
- շինարարական աշխատանքներն ավարտված լինելու հիմքով՝ 7 օբյեկտ, որից 1-ի շինարարության թույլտվության ժամկետն ավարտվել է.
- ՌԴ ռազմաբազայի տարածքում գտնվելու հիմքով՝ 1 օբյեկտ.

- շին. թույլտվությունը դադարեցվելու հիմքով՝ 1 օբյեկտ.
- շինարարական աշխատանքները 2025թ. վերջին օրերին սկսելու հիմքով՝ 1 օբյեկտ.
- շին. թույլտվության փոփոխության պատճառով կրկնության՝ 4 օբյեկտ.
- դատական վարույթում գտնվելու՝ 2 օբյեկտ:

Շինարարական աշխատանքների չիրականացման հիմքով 17 օբյեկտ ներառվել է 2026 թվականի ստուգումների տարեկան ծրագրի մեջ:

Միաժամանակ 2025 թվականին իրականացվել է 27 ոչ պլանային ստուգում, որից 9-ը պետական մարմիններից ստացված գրությունների, իսկ 6-ը՝ հանրության բողոքների հիման վրա: Իրականացվել է նաև 2024 թվականից ընթացքի մեջ գտնվող 35 ստուգում: Ընդհանուր առմամբ իրականացվել է 237 ստուգում, որոնք ըստ տարածքային միավորնե-րի բաշխված են հետևյալ կերպ.



2024 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված 248 ստուգումներից իրականացվել էր 122-ը, ինչը կազմում է նախատեսված ընդհանուր քանակի 48%-ը, միաժամանակ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել էր 25 ոչ պլանային ստուգում, որից 19-ը պետական մարմիններից ստացված գրությունների, իսկ 6-ը՝ հանրության բողոքների հիման վրա:

2023 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված 282 ստուգումնե-

ից իրականացվել էր 219-ը, ինչը կազմում է նախատեսված ընդհանուր քանակի 78%-ը, միաժամանակ ավարտվել էր 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրից 3 ստուգում, իրականացվել էր 25 ոչ պլանային ստուգում և 1 վերստուգում, որի արդյունքում պարզվել է, որ 25 խախտումներից 22-ը վերացվել են:



2025 թվականին ստուգումների արդյունքում խախտումների բացակայության վերաբերյալ կազմվել է 85 տեղեկանք, (2024 թվականի ընթացքում՝ 43 տեղեկանք, 2023 թվականի ընթացքում՝ 75 տեղեկանք), իսկ մնացած օբյեկտների տնտեսավարող սուբյեկտներին տրվել են ցուցումներ՝ արձանագրված խախտումները վերացնելու պահանջով: 2025 թվականին ստուգաթերթով իրականացված 229 ստուգումների արդյունքում արձանագրվել է 729 խախտում, իսկ ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 624 որոշմամբ սահմանված կարգով իրականացված 8 ստուգումների արդյունքում՝ արձանագրվել է 12 խախտում, (2024 թվականին՝ 434 խախտում, 2023 թվականին՝ 742 խախտում), որոնք ըստ մարզերի ունեն հետևյալ գրաֆիկական արտացոլումը.



Շինարարություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների (կապալառու) մոտ հայտնաբերվել է 281 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների 37,9%-ը (2024 թվականին՝ 204 խախտում, իսկ 2023-ին՝ 322 խախտում): Առավել կրկնվող խախտումներն են.

✓ *շինարարությունը չի իրականացվում համաձայնեցված նախագծին համապատասխան - 113 դեպք,*
✓ *շինարարության վարման մատյանում բացակայում են կապալառուի կողմից կատարված համապատասխան նշումներ - 53 դեպք,*
✓ *շինարարական աշխատանքների ընդհանուր մատյանը չի լրացվում - 31 դեպք,*
✓ *առկա չեն կապալառուի կողմից լրացված և ստորագրված ծածկված աշխատանքների ակտերը - 25 դեպք,*
✓ *բացակայում է բետոնի փորձարկման ակտը - 19 դեպք.*
✓ *լրացված չէ ծածկված աշխատանքների ընդունման ակտը - 17 դեպք:*

Շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել է 180 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների 24,3%-ը (2024 թվականին՝ 90 խախտում, 2023-ին՝ 180 խախտում): Առավել կրկնվող խախտումներն են.

✓ *շինարարության վարման մատյանում բացակայում են շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնողի համապատասխան նշումները - 106 դեպք,*
✓ *տեխնիկական հսկողություն իրականացնողի կողմից շինարարության վարման մատյանը չի լրացվում - 30 դեպք,*
✓ *շինարարության որակի տեխնիկական հսկողի կողմից ծածկված աշխատանքների ակտերը չեն ստորագրվում - 19 դեպք:*

Շինարարության նկատմամբ հեղինակային հսկողություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել է 144 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների 19,4%-ը (2024 թվականին՝ 69 խախտում, 2023-ին՝ 163 խախտում).

✓ *շինարարության վարման մատյանում բացակայում են հեղինակային հսկողություն իրականացնողի համապատասխան նշումները - 97 դեպք,*

✓ *հեղինակային հսկողություն իրականացնողի կողմից չի լրացվել շինարարության վարման մատյանը - 29 դեպք,*
✓ *բացակայում են հեղինակային հսկողի կողմից լրացված և ստորագրված ծածկված աշխատանքների ակտերը - 18 դեպք:*

Համայնքի ղեկավարի կողմից իրականացվող քաղաքաշինական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել է 72 խախտում, ինչը կազմում է ընդհանուր խախտումների 9,7%-ը (2024 թվականին՝ 59 խախտում, 2023-ին՝ 42 խախտում):

Կառուցապատողների մոտ հայտնաբերվել է 50 խախտում՝ ընդհանուր խախտումների 6,7%-ը (2024 թվականին՝ 8 խախտում, իսկ 2023-ին՝ 32 խախտում):

Փորձաքննություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել է 2 խախտում (2024 թվականին՝ 3 խախտում, իսկ 2023-ին՝ 5 խախտում):

Ճարտարապետաշինարարական նախագիծ մշակող կազմակերպության գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ խախտում չի հայտնաբերվել (2024 թվականին՝ 1 խախտում, 2023-ին խախտում չի հայտնաբերվել):

2025 թվականի ընթացքում ստուգված 30 օբյեկտում ավարտական ակտի տրամադրման շրջանակում իրականացվել են վերջնական ստուգումներ, որոնց արդյունքում պարզվել է, որ օբյեկտներում վերացված է 84 խախտում (տարվա ընթացքում բացահայտված խախտումների 11,6%): 2024 թվականին ստուգված 99 օբյեկտում վերացվել է 273 խախտում (տարվա ընթացքում բացահայտված խախտումների 63%), 2023 թվականին ստուգված 181 օբյեկտին տնվել է դրական եզրակացություն, վերացվել է 528 խախտում (տարվա ընթացքում բացահայտված խախտումների 71%):

2025 թվականին Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների 74% կազմում են պլանային ստուգումները, 26%՝ ոչ պլանային: 1 պլանային ստուգման միջին տևողությունը կազմել է 4,1 օր, ոչ պլանային ստուգմանը՝ 3.74 օր: Յուրաքանչյուր պլանային ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը կազմել է 2, ոչ պլանային ստուգման համար՝ 2,2: 2024 թվականին իրականացված ստուգումների 83% կազմում էին պլանային ստուգումները, 17%՝ ոչ պլանային: 1 պլանային ստուգման միջին տևողությունը կազմել էր 4,01 օր, ոչ պլանային ստուգմանը՝ 2,1 օր: Յուրաքանչյուր պլանային ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը կազմել էր 1,9, ոչ պլանային ստուգման համար՝ 2,3: 2023 թվականին իրականացված ստուգումների 89,56% կազմել էին պլանային ստուգումները, 10,04%՝ ոչ պլանային, իսկ 0,4%՝ վերստուգումը: 1 պլանային ստուգման միջին տևողությունը կազմել էր 4,38 օր, ոչ պլանային ստուգման դեպքում՝ 2,6 օր, վերստուգման դեպքում՝ 1 օր: Յուրաքանչյուր պլանային ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը կազմել էր 2,49, ոչ պլանային ստուգման համար՝ 1,72, իսկ վերստուգման համար՝ 2:

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2025 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ՀՀ 8 մարզերի 8 համայնքներում ստուգումներն ամբողջությամբ իրականացվել են (նախատեսված քանակի 100%): Միաժամանակ իրականացվել է նաև 10 ոչ պլանային ստուգում, որոնցից 3-ը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված գրությունների, 1-ը հանրությունից ստացված բողոքների հիման վրա:

2024 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված էին ստուգումներ ՀՀ 8 մարզերի 9-ը համայնքներում, սակայն փաստացի իրականացվել էին ստուգումներ 5 մարզերի 6 համայնքներում (նախատեսված քանակի 67%): Միաժամանակ իրականացվել էր նաև 5 ոչ պլանային ստուգում, որոնցից 3-ը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված գրությունների, ևս 2-ը հանրությունից

ստացված բողոքների հիման վրա: 2023 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված էին ստուգումներ ՀՀ 8 մարզերում, որոնցից 8-ն էլ իրականացվել էին: Միաժամանակ իրականացվել էր նաև 13 ոչ պլանային ստուգում, որոնցից 2-ը ՀՀ վարչապետի հանձնարարությամբ, 9-ը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, ևս 2-ը հանրությունից ստացված բողոքների հիման վրա:



2025 թվականին իրականացված ստուգումների արդյունքում բացահայտված 462 խախտումներից 218-ը (47.19%)՝ Սյունիքի, 74-ականը (16.02%)՝ արձանագրվել է Վայոց ձորի և Գեղարքունիքի, 42-ը (9.09%)՝ Շիրակի, 25-ը (5.41%)՝ Արմավիրի, 23-ը (4.98%)՝ Սյունիքի, 5-ը (1.08%)՝ Արագածոտնի մարզերում և 1-ը (0.21%)՝ Երևանում: Լոռու մարզի Լոռի բերդ համայնքում իրականացված ստուգման ամփոփումն ընթացքի մեջ է: 2 համայնքներում տրվել է տեղեկանք: Արձանագրված 462 խախտումներից 451-ը (ընդհանուր քանակի 97,62%) բացահայտվել է Տարեկան ծրագրի շրջանակներում իրականացված ստուգումների ժամանակ:

Համայնքի անվանումը	Խախտումների քանակ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔ	5
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔ	16
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔ	1
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔ	74

ԵՐԵՎԱՆԻ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ Վ/Շ	1
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔ	74
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔ	23
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔ	9
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ	42
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔ	217
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔ	ընթացք

2024 թվականին իրականացված ստուգումների արդյունքում բացահայտված 27 խախտումներից 11-ը (ընդհանուր քանակի 40,74%) բացահայտվել էր Տարեկան ծրագրի շրջանակներում, իսկ 2023 թվականին իրականացված ստուգումների արդյունքում բացահայտված 266 խախտումներից 112-ը (ընդհանուր քանակի 42,11%) բացահայտվել է Տարեկան ծրագրի շրջանակներում: Խախտումները հիմնականում վերաբերում են հողամասերի ոչ ըստ նպատակային և գործառնական նշանակության օգտագործմանը, հողամասի օտարման և օգտագործման կարգին առնչվող հարցերին: Բոլոր ստուգված համայնքներում իրականացվել են խորհրդատվական և բացատրական աշխատանքներ: Բացահայտված խախտումների վերաբերյալ 3 հաղորդում է ներկայացվել իրավասու մարմիններին (2024 թվականին՝ 3, 2023-ին՝ 13):

Տարեկան ծրագրով իրականացված ստուգումները կազմում են 2025 թվականին իրականացված ստուգումների 44,5%-ը, իսկ ոչ պլանային ստուգումները՝ 55,5%-ը: Տարեկան ծրագրով նախատեսված 1 ստուգման տևողությունը կազմել է 10 օր, ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը՝ 2,8: Ոչ պլանային ստուգումների միջին տևողությունը կազմում է 2,7 օր, մարդկային ռեսուրսը՝ 2,2: 2024 թվականին Տարեկան ծրագրով իրականացված ստուգումները կազմել էին 2024 թվականի ընդհանուր իրականացված ստուգումների 54,5%-ը, իսկ ոչ պլանային ստուգումները՝ 45,5%-ը: Տարեկան ծրագրով նախատեսված 1 ստուգման տևողությունը կազմել էր 8,7 օր, ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը՝ 2,8: Ոչ պլանային ստուգումների միջին տևողությունը կազմում էր 2 օր, մարդկային ռեսուրսը՝ 2: 2023 թվականին Տարեկան ծրագրով իրականացված ստուգումները կազմել էին 2023

թվականի ընդհանուր իրականացված ստուգումների 38,1%-ը, իսկ ոչ պլանային ստուգումները՝ 61,9%-ը: Տարեկան ծրագրով նախատեսված 1 ստուգման տևողությունը կազմել էր 8,2 օր, ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը՝ 2,25: Ոչ պլանային ստուգումների միջին տևողությունը կազմել է 3,77 օր, մարդկային ռեսուրսը՝ 2,23:

3. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2025 թվականի ընթացքում ՀՀ մարզերում և Երևան քաղաքում գտնվող օբյեկտներում իրականացված **421 հրդեհատեխնիկական հետազոտության** (այսուհետ՝ ՀՏՀ) արդյունքում թվով 88 օբյեկտի հետագա շահագործումը դադարեցվել է մինչև խախտումների վերացումը, 12 օբյեկտ ապամոնտաժվել է, 49 օբյեկտի գործունեությունը խախտումների վերացումից հետո թույլատրվել է:

2025 թվականին իրականացված 23 ՀՏՀ-ների արդյունքներն ամփոփման փուլում են: ՀՏՀ-ների արդյունքում արձանագրվել է 2017 խախտում, որոնք ըստ մարզերի ունեն հետևյալ գրաֆիկական արտացոլումը.



Արձանագրված խախտումներն ըստ ոլորտների ունեն հետևյալ բաշխվածությունը.



Ընդհանուր նշանակության 26 պահեստներում և բազաներում բացահայտվել է 117 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 5,80%-ը: 6 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների: Հիմնական խախտումներն են.

- ✓ *տարահանման ճանապարհներին մոնտաժված չեն վթարային լուսավորության լուսատուներ և ելք ցույց տվող ցուցանակներ – 12 դեպք,*
- ✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին - 12 դեպք,*
- ✓ *ներքին հակահրդեհային ջրամատակարարման ցանցի վրա տեղակայված հրշեջ ծորակները համալրված չեն փողակով և փողրակով – 8 դեպք,*
- ✓ *500 մ³-ից ավելի ծավալով պահեստային շենքերը սարքավորված չեն հրշեջ ծորակներով կահավորված ներքին հակահրդեհային ջրացանցով այնպես, որ յուրաքանչյուր կետ ցողվի 2X2,5 լ/վրկ ջրի շիթով - 8 դեպք,*
- ✓ *կախված մակերեսի չափերից պահեստները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով - 8 դեպք,*
- ✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը մոնտաժված չեն նորմերին համապատասխան և չեն գտնվում սարքին վիճակում - 8 դեպք:*

Անտառանյութի և սղոցանյութի 1 պահեստում բացահայտվել է 7 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,35%-ը:

Նշված ժամանակահատվածում հրդեհատեխնիկական հետազոտություն է իրականացվել 200 մ² և ավելի մակերեսով առևտրի և հասարակական սննդի 73 օբյեկտում: Արդյունքում բացահայտվել է 291 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 14,43%-ը: 15 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների: Հիմնական խախտումներն են.

- ✓ *տարահանման ճանապարհներին մոնտաժված չեն վթարային լուսավորության լուսատուներ և ելք ցույց տվող ցուցանակներ - 40 դեպք,*
- ✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 37 դեպք,*
- ✓ *առևտրի և հասարակական սննդի օբյեկտները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով – 27 դեպք,*

✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը մոնտաժված չեն նորմերին համապատասխան և չեն գտնվում սարքին վիճակում – 25 դեպք,*

✓ *արտաքին հրդեհաշիջման համար օբյեկտների տարածքում կամ դրանց մոտակայքում (200 մ շառավղով) նախատեսված չէ առնվազն 1 հրշեջ հիդրանտ կամ նվազագույնը 54 մ³ տարողությամբ հակահրդեհային ջրավազան – 20 դեպք:*

Մինչև 200 մ² մակերեսով առևտրի և հասարակական սննդի 28 օբյեկտի հրդեհատեխնիկական հետազոտությունների արդյունքում բացահայտվել է 62 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 3,07%-ը: 11 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների: Հիմնական խախտումներն են.

✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 13 դեպք,*

✓ *տարահանման ճանապարհներին մոնտաժված չեն վթարային լուսավորության լուսատուներ և ելք ցույց տվող ցուցանակներ – 11 դեպք,*

✓ *առևտրի և հասարակական սննդի օբյեկտները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով – 10 դեպք:*

200 մ² և ավելի մակերեսով արտադրական կազմակերպությունների 54 օբյեկտներում բացահայտվել է 261 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 12,94%-ը: Առանց թերությունների շահագործվող օբյեկտները 10-ն են: Հիմնական խախտումներն են.

✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 34 դեպք,*

✓ *տարահանման ճանապարհներին մոնտաժված չեն վթարային լուսավորության լուսատուներ և ելք ցույց տվող ցուցանակներ – 33 դեպք,*

✓ *կախված մակերեսի չափերից արտադրական շենքերն ու շինությունները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով -32 դեպք,*

✓ *500 մ³-ից ավելի ծավալով արտադրական շենքերն ու շինություններն սարքավորված չեն հրշեջ ծորակներով կահավորված ներքին հակահրդեհային ջրացանցով այնպես, որ յուրաքանչյուր կետ ցողվի 2X2,5 լ/վրկ ջրի շիթով – 28 դեպք,*

✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը մոնտաժված չեն նորմերին համապատասխան և չեն գտնվում սարքին վիճակում – 28 դեպք:*

Մինչև 200 մ^2 մակերեսով 5 արտադրական կազմակերպությունում բացահայտվել է 41 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 2,03%-ը: Հիմնական խախտումներն են.

✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը մոնտաժված չեն նորմերին համապատասխան և չեն գտնվում սարքին վիճակում – 5 դեպք,*

✓ *էլեկտրասարքավորումները չեն մոնտաժվել և չեն շահագործվում էլեկտրական սարքավորումների տեղակայման կանոնների համաձայն – 4 դեպք,*

✓ *կախված մակերեսի չափերից արտադրական կազմակերպությունները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով – 4 դեպք,*

✓ *օբյեկտն ապահովված չէ հրդեհաշիջման սկզբնական միջոցներով – 4 դեպք:*

72 բենզալցակայանի հրդեհատեխնիկական հետազոտությունների արդյունքում բացահայտվել է 271 խախտում, ինչը կազմում է արձանագրված խախտումների 13,44%-ը: Միաժամանակ պարզվել է, որ 4 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների: Հիմնական խախտումներն են.

✓ *բենզալցակայանի տարածքը տարանջատված չէ փողոցների և ճանապարհների երթևեկային մասից նվազագույնը 1,5 մ լայնությամբ անվտանգության կղզյակով – 39 դեպք,*

✓ *հեղուկ վառելիքի ստորգետնյա տարողություններով բենզալցակայանից մինչև այլ շենքերի և շինությունների միջև պահանջվող միջտարածությունները պահպանված չեն – 37 դեպք,*

✓ *արտաքին հրդեհաշիջումն ապահովված չէ տարողություններից 40 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա գտնվող ոչ պակաս 2 հրշեջ հիդրանտների կամ ոչ պակաս 100 մ^3 տարողությամբ հակահրդեհային ջրավազանի միջոցով - 35 դեպք,*

✓ *բոլոր շինությունների էլեկտրական սարքավորումները համալրված չեն հողանցման համակարգով – 25 դեպք,*

✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 24 դեպք:*

22 հյուրանոցնում բացահայտվել է 70 խախտում, ինչը կազմում է բացահայտված ընդհանուր խախտումների 3,47%-ը: 8 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների: Հիմնական խախտումներն են.

✓ *փարահանման ճանապարհներին մոնտաժված չեն վթարային լուսավորության լուսատուներ և ելք ցույց տվող ցուցանակներ – 9 դեպք,*

✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 8 դեպք,*

✓ *կախված հարկայնությունից բնակելի շենքերը, հյուրանոցները, հանրակացարանները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով – 7 դեպք:*

Նշված ժամանակահատվածում հետազոտվել է 102 գազալցավորման կայան: Հրդեհատեխնիկական հետազոտությունների արդյունքում բացահայտվել է 491 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 24,34%-ը: Հիմնական խախտումներն են.

✓ *արտաքին հրդեհաշիջումն ապահովված չէ տարողություններից 40 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա գտնվող ոչ պակաս 2 հրշեջ հիդրանտների կամ ոչ պակաս 100 մ³ տարողությամբ հակահրդեհային ջրավազանի միջոցով – 51 դեպք,*

✓ *ՀԱԳ լցակայանի տարածքում իրեն պատկանող շինությունների միջև նորմերով պահանջվող նվազագույն միջտարածությունները պահպանված չեն – 46 դեպք,*

✓ *գազալցակայանի տարածքը պաշտպանված չէ շանթապաշտպանության համակարգով – 36 դեպք,*

✓ *բոլոր շինությունների էլեկտրական սարքավորումները համալրված չեն հողանցման համակարգով – 34 դեպք,*

✓ *հեղուկացված ածխաջրածնային գազով (ՀԱԳ) լցակայանից մինչև գազալցակայանին չպատկանող շենքերն ու շինությունները նորմերով պահանջվող նվազագույն միջտարածությունները պահպանված չեն – 32 դեպք:*

<u>Գիտական և ուսումնական 16 հաստատությունում</u> բացահայտվել է 84 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 4,16%-ը: 1 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների:

✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 12 դեպք,*

✓ *կախված մակերեսի չափերից գիտական և ուսումնական հաստատությունների շինությունները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով – 11 դեպք,*

✓ *տարահանման ճանապարհներին մոնտաժված չեն վթարային լուսավորության լուսատուներ և ելք ցույց տվող ցուցանակներ – 10 դեպք,*

✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը մոնտաժված չեն նորմերին համապատասխան և չեն գտնվում սարքին վիճակում – 8 դեպք,*

✓ *շինարարական հիմնատարրերը մշակված (տոգորված) չեն հրապաշտպան լուծույթով կամ պատվածքով և չեն գտնվում մշակման (տոգորման) ներգործության ժամկետների մեջ – 7 դեպք:*

Գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող 2 օբյեկտի հրդեհատեխնիկական հետազոտությունների արդյունքում բացահայտվել է 3 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,15%-ը:

Առողջարարական, հանգստյան տների և զբոսաշրջության 1 հաստատությունում բացահայտվել է 5 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,25%-ը:

Հիվանդանոցների, պոլիկլինիկաների և ամբուլատորիաների 7 հրդեհատեխնիկական հետազոտությունների արդյունքում բացահայտվել է 44 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 2,18%-ը: Հիմնական խախտումներն են.

✓ *հիվանդանոցները, պոլիկլինիկաները, ամբուլատորիաները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով – 6 դեպք,*

✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 6 դեպք,*

✓ *շինարարական հիմնատարրերը մշակված (տոգորված) չեն հրապաշտպան լուծույթով կամ պատվածքով և չեն գտնվում մշակման (տոգորման) ներգործության ժամկետների մեջ – 6 դեպք:*

Կառավարման 9 հիմնարկում բացահայտվել է 23 խախտում, ինչը կազմում է բացահայտված ընդհանուր խախտումների 1,14%-ը: 2 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների:

Նշված ժամանակահատվածում վերահսկողական գործառույթ է իրականացվել 41 մանկական նախադպրոցական հիմնարկում: Արդյունքում բացահայտվել է 218 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 10,81%-ը: 4 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների:

Հիմնական խախտումներն են.

- ✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 31 դեպք,*
- ✓ *մանկական նախադպրոցական հիմնարկները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով - 27 դեպք,*
- ✓ *տարահանման ճանապարհներին մոնտաժված չեն վթարային լուսավորության լուսատուներ և ելք ցույց տվող ցուցանակներ – 27 դեպք,*
- ✓ *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը մոնտաժված չեն նորմերին համապատասխան և չեն գտնվում սարքին վիճակում - 23 դեպք,*
- ✓ *տարահանման ելքի դռները չեն բացվում շենքից դուրս գալու ուղղությամբ – 21 դեպք:*

Մշակութային 3 հիմնարկում բացահայտվել է 16 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,79%-ը:

Նավթամթերքների պահեստներում իրականացված 5 վերահսկողական միջոցառումների արդյունքում բացահայտվել է 3 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,15%-ը: 3 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների:

Պայթուցիկ նյութերի 3 պահեստում բացահայտվել է 4 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,20%-ը: 1 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների:

Տրանսպորտային 1 հիմնարկում խախտում չի բացահայտվել:

Հեղուկ, բնական գազերի 4 պահեստում բացահայտվել է 6 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,30%-ը: 1 օբյեկտ շահագործվում է առանց թերությունների:

Նախկինում տրված կարգադրագրերի պահաջների կատարման ընթացքի նկատմամբ հսկողություն սահմանելու նպատակով իրականացվել է ևս 522 հետազոտություն: Արդյունքում պարզվել է, որ նախորդող ժամանակահատվածում արձանագրված 3044 խախտումներից տնտեսավարողների կողմից վերացվել է 1841-ը (60,5%):



Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է ընդհանուր առմամբ **943 հրդեհատեխնիկական հետազոտություն** (2024 թվականին՝ 609, 2023 թվականին՝ 799 ՀՏՀ): Կատարած հետազոտություններն ըստ տարածքային միավորների բաշխված են հետևյալ կերպ.







Տեսչական մարմնի կողմից ուսումնասիրվել և տրամադրվել է **1707 եզրակացություն** (2024 թվականին՝ 1302, 2023-ին՝ 1174) նախագծային փաստաթղթերի հակահրդեհային պահանջների համապատաս-խանելիության վերաբերյալ:

694 նախագծերի վերաբերյալ տրվել են դրական եզրակացություններ, իսկ 1013 դիմում մերժվել է հրդեհային անվտանգության պահանջներին չհամապատասխանելու պատճառով: Առավել կրկնվող խախտումներն են. նախագծերում պահպանված չեն մինչև հարևան շինություններ նվազագույն հակահրդեհային միջտարածությունները և տարահանման ելքերին ներկայացվող պահանջները, ապահովված չէ յուրաքանչյուր բնակարանին հրշեջ մեքենաների մոտեցման հնարավորությունը:

Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են ավարտված շինարարական օբյեկտների 1150 (2024 թվականին՝ 1353, 2023 թվականին՝ 932) **շահագործման ընդունող հանձնաժողովների** աշխատանքներին: Արդյունքում 2025 թվականի ընթացքում տրվել է 858 դրական (2024 թվականին՝ 1139, 2023 թվականին՝ 735) և 292 բացասական (2024 թվականին՝ 214, 2023 թվականին՝ 197) եզրակացություն:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱՍՊԱՌՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

ՀՀ տարածքում տեղակայված 6 կՎ և բարձր լարման էլեկտրաէներգետիկական և միջին ու բարձր ճնշման գազամատակարարման համակարգերում՝ տնտեսվարող սուբյեկտների դիմումների հիման վրա, նոր կառուցված և վերակառուցված էներգատեղակայանքներում 2025 թվականին իրականացվել է 1947 տեխնիկական ստուգում, որից 1054-ը՝ (54%) էլեկտրաէներգետիկական և 893-ը՝ (46%) գազամատակարարման համակարգերում (2024 թվականին՝ 1837 տեխնիկական ստուգում, համապատասխանաբար՝ 1049-ը՝ (57%) և 788-ը՝ (43%), 2023 թվականին՝ 1957 տեխնիկական ստուգում, համապատասխանաբար՝ 1194-ը՝ (61%) և 763-ը՝ (39%)):



Արդյունքում տրվել է 1484 (76,2%) գործարկման եզրակացություն, իսկ թվով 463 (23,8%) տեղակայանքների գործարկումներ՝ նախագծի և տեխնիկական կանոնակարգերի պահանջներին անհամապատասխանության, թերի շինարարական աշխատանքների և ներկայացված տեխնիկական փաստաթղթերի ոչ ամբողջականության համար ակտ-կարգադրագրերով մերժվել են (2024 թվականին՝ 1398 գործարկում (76,1%) և 439 մերժում (23, 9%), 2023 թվականին՝ 1515 գործարկում (77, 4%) և 442 մերժում (22,6%)):



Իստ տարածքային միավորների տեխնիկական ստուգումների քանակն ունի հետևյալ բաշխվածությունը.



Տեսչական մարմնի մասնագետների կողմից 2025 թվականի օգոստոսի 21-ից մինչև օգոստոսի 25-ը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության 26 ենթակայանում իրականացվել են զննումներ էներգետիկայի և հրդեհային անվտանգության ոլորտին առնչվող նորմատիվ իրավական ակտերի և փաստաթղթերի պահանջների կատարման նկատմամբ: Արդյունքում հայտնաբերվել է հրդեհային

անվտանգության նորմատիվ իրավական ակտերի պահանջների 65 խախտում, իսկ էներգետիկայի՝ 252:

էներգատեղակայանքներում գրանցվել է 17 մահվան ելքով պատահար (2024 թվականին՝ 19 դեպք, 2023-ին՝ 19 դեպք): Մահացու ելքով պատահարների քանակական բաշխվածությունն ըստ մարզերի և տարիների ունի հետևյալ պատկերը.



ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ

2025 թվականի ընթացքում տրանսպորտի անվտանգության մասնագետների կողմից ՀՀ 10 մարզերի և Երևան քաղաքի տարածքներում գործող «Հայավտոկայարան» ՓԲԸ ավտոկայարաններում, ավտոկայաններում, երթակարգավարական կետերում, ինչպես նաև այդ տարածքներից դուրս կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող երթուղիների սկզբնակետ/վերջնակետերում պարբերաբար իրականացվել է միջպետական, միջմարզային, ներմարզային և ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների սպասարկման կազմակերպման գործընթացի, բեռնափոխադրումների, թեթև մարդատար ավտոմոբիլներով իրականացվող ուղևորափոխադրումների, ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային միջպետական, հանրապետական և մարզային (տեղական) նշանակության ճանապարհներին տեղադրված գովազդային վահանակների օրինականության, տրասպորտային միջոցների շահագործման և տեխնիկական զննության անցկացման կայանների,

գազաբալոնների տեղադրման/վկայագրման կայանների գործունեության, օտարման շերտերի և պաշտպանական գոտիների նկատմամբ 50365 վերահսկողական միջոցառում (2024 թվականին՝ 50065, 2023 թվականին՝ 63274):

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է տրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և գազաբալոնների փորձարկման կայաններում իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ 232 վերահսկողական գործառույթ (2024 թվականին՝ 877, 2023թ.՝ 199): Արդյունքում կազմվել է բացահայտված խախտումների վերաբերյալ 10 արձանագրություն:

Գազալցակայաններում իրականացվել է տրանսպորտի բնագավառում 713 վերահսկողական գործառույթները (2024 թվականին՝ 336, 2023թ.՝ 1310): Արդյունքում կազմվել է բացահայտված խախտումների վերաբերյալ 143 արձանագրություն:

Թեթև-մարդատար ավտոմոբիլներով իրականացվող ուղևորափոխադրումների նկատմամբ իրականցվել է 249 վերահսկողական միջոցառում, ինչը կազմում է ընդհանուր քանակի 0,49%-ը: Արդյունքում կազմվել է 149 արձանագրություն:

Տեխնիկական զննության կայաններում իրականցվել է 332 վերահսկողական միջոցառում (2024 թվականին՝ 899, 2023թ.՝ 432), ինչը կազմում է վերահսկողական միջոցառումների ընդհանուր քանակի 0,65%: Արդյունքում կազմվել է 87 արձանագրություն:

2025 թվականի ընթացքում Տեսչական մարմնի մարզային կառույցների տրանսպորտային անվտանգության մասնագետների կողմից իրականացվել են մարզերի տարածքով անցնող ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային միջպետական, հանրապետական և մարզային (տեղական) նշանակության ճանապարհներին տեղադրված գովազդային վահանակների և ցուցանակների օրինականության նկատմամբ վերահսկողական միջոցառումներ, գույքագրվել է միջպետական ավտոճանապարհներին ապօրինի տեղադրված ընդհանուր թվով 799

(2024 թվականին՝ 680, 2023-ին՝ 451) գովազդային վահանակ: Արդյունքում կազմվել է 152 արձանագրություն:

Կանոնավոր, ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման գործընթացի նկատմամբ իրականացվել է 2064 վերահսկողական միջոցառում (2024 թվականին՝ 2069, 2023-ին՝ 2650), ինչը կազմում է ընդհանուր քանակի 4.1%: Արդյունքում կազմվել է 191 արձանագրություն:

Բեռնափոխադրումների նկատմամբ իրականցվել է 45886 վերահսկողական միջոցառում (2024 թվականին՝ 44861, 2023թ.՝ 57871), ինչը կազմում է վերահսկողական միջոցառումների ընդհանուր քանակի 91,1%-ը: Մասնավորապես, վերահսկողական միջոցառումներն իրականացվել են Սյունիքի անշարժ կշռման կայանում թվով 45706 (2024 թվականին՝ 44129, 2023-ին.՝ 56902), Արմավիրի անշարժ կշռման կայանում՝ 125 (2024-ին.՝ 680, 2023-ին.՝ 889) և շարժական կշեռքներով տարբեր մարզերում՝ 55 (2024 թվականին՝ 52, 2023-ին՝ 80): Արդյունքում կազմվել է բացահայտված խախտումների վերաբերյալ 3474 արձանագրություն:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2025 թվականի ընթացքում կատարվել է 1419 դիտարկում, որոնցից 668-ը ՀՀ կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում: Գրաֆիկով պատկերված է այս ոլորտում կատարված աշխատանքի բաշխվածությունն ըստ տարածքայի միավորների.



2024 թվականի ընթացքում կատարվել էր 5070 դիտարկում (2023-ին՝ 1303 դիտարկում), որոնցից 981-ը (2023-ին՝ 502) ՀՀ կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում:



2025 թվականի ընթացքում Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են ավարտված շինարարական 7158 օբյեկտների շահագործման ընդունող հանձնաժողովների աշխատանքներին, այդ թվում՝ 32%-ը՝ Երևանում, մնացածն՝ ըստ պատկերի.



Արդյունքում հաշվետու ժամանակաշրջանում տրամադրվել է ավարտական ակտերի վերաբերյալ 2170 դրական և 1342 բացասական եզրակացություն, 3117 չեզոք եզրակացություն, 529-ը ընթացքի մեջ է (2024 թվականին՝ 2405 դրական և 1633 բացասական եզրակացություններ, իսկ 2023 թվականին՝ 1721 դրական և 1323 բացասական եզրակացություններ), որոնք ըստ մարզերի այն ունեն հետևյալ գրաֆիկական բաշխվածությունը.



Տեսչական մարմնի աշխատակիցների կողմից վերահսկողական աշխատանքների ընթացքում ՀՀ ամբողջ տարածքում հայտնաբերվել է 154 ինքնակամ կառույց, 2023-ին՝ 129, իսկ 2022-ին՝ 271: Ինքնակամ կառույցների 29%-ը գտնվում է Գեղարքունիքի մարզում, 25%-ը՝ Լոռիում, 17%-ը՝ Կոտայքում, 7-ական% Արմավիրում և Տավուշում, Արարատում՝ 6%, Արագածոտնի մարզում՝ 5%, Շիրակում և Վայոց ձորում՝ 2-ական տոկոս:



Ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ բացահայտված խախտումները վերացնելու ուղղությամբ, այն է՝ մարզպետներին և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին տրամադրվել են իրազեկող բնույթի գրություններ: Համայնքների ղեկավարներին ներկայացվել են առաջարկություններ՝ իրենց իրավասության սահմաններում ինքնակամ շինարարական աշխատանքները դադարեցնելու վերաբերյալ և հետևանքները վերացնելու ուղղությամբ:

4. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ, ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի ընթացքում Տեսչական մարմնին հանրության և տնտեսավարող սուբյեկտների կողմից հասցեագրվել է ընդհանուր առմամբ 688 բողոք, որոնք ըստ բնագավառների բաշխված են հետևյալ կերպ.



2025 թվականի ընթացքում Տեսչական մարմնին հանրության և տնտեսավարող սուբյեկտների կողմից հասցեագրվել էր ընդհանուր առմամբ 688 բողոք, որից 405-ը (58,8%) վերաբերում է քաղաքաշինության բնագավառին, 60-ը (8,8%)՝ տրանսպորտային անվտանգության, 75-ը (10,9%)՝ հրդեհային և տեխնիկական անվտագության, 137-ը (19,9%)՝ էներգետիկայի և էներգասպառման, իսկ 11-ը (1,6%)՝ հողի պահմանման և հողօգտագործման բնագավառներին: 2024 թվականի ընթացքում Տեսչական մարմնին հանրության և տնտեսավարող սուբյեկտների կողմից հասցեագրվել էր ընդհանուր առմամբ 748 (2023 թվականին՝ 829) բողոք, որից 430-ը (2023 թվականին՝ 542) վերաբերում է քաղաքաշինության բնագավառին, 83-ը (2023 թվականին՝ 134)՝

տրանսպորտային անվտանգության, 104-ը (2023 թվականին՝ 68)՝ հրդեհային և տեխնիկական անվտագության, (2023 թվականին՝ 76)՝ էներգետիկայի և էներգասպառման, իսկ 4-ը (2023 թվականին՝ 9՝ հողի պահմանման և հողօգտագործման բնագավառներին:



2023-2025 թվականների ընթացքում ստացված բողոքների համեմատական գրաֆիկն ունի հետևյալ արտացոլումը.

2025 թվականի ընթացքում հանրությունից ստացված բողոքներն ըստ ամիսների ունեն հետևյալ բաշխվածությունը՝



Ընդ որում, ստացված բողոքների ընդհանուր քանակի 51,3%-ը վերաբերում է Երևանում գործունեություն իրականացնող տնտեսավարողներին կամ գտնվող օբյեկտներին, մնացածն՝ ըստ պատկերի.



Բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ստացված բողոքներից 178-ը հիմնավոր չի, 96-ը վերահասցեագրվել է, անհետևանք է թողնվել 3 բողոք, հնարավոր չի լուծել 3-ը: Հիմնավոր 309 բողոքից 2025 թվականի ընթացքում լուծում է ստացել 265-ը (հիմնավոր բողոքների 85,7%): Ուսումնասիրության փուլում է 143 բողոք, որից 78-ը վերաբերում է քաղաքաշինության, 5-ը՝ տրանսպորտի, 41-ը՝ հրդեհային և տեխնիկական անվտագության, 19-ը՝ էներգետիկայի և էներգասպառման բնագավառներին:

2025 թվականի ընթացքում հանրությունից թեժ գծով ստացվել է 149 բողոք, ինչը կազմում է ներկայացված բողոքների 21,9%: 2023 թվականին թեժ գծով ստացվել էր 251 բողոք (30,27%), իսկ 2024-ին՝ 162 բողոք (21,6%):



2025 թվականի ընթացքում Տեսչական մարմնին Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից հասցեագրվել է ընդհանուր առմամբ 871 գրություն, որոնք ըստ բնագավառների բաշխված են հետևյալ կերպ.



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու ժամանակահատվածում հանրությունից ստացված 75 բողոքների ուսումնասիրությունից պարզվել է, որ հիմնավոր են 26-ը, ինչը կազմում է ընդհանուր քանակի 34,6%-ը, ոչ հիմնավոր է 28 բողոք (ընդհանուր քանակի 37,3%-ը): Թեժ գծով ստացվել է 23 բողոք (30,7%): Հիմնավոր բողոքներում բարձրացված հարցերը վերաբերում են գործող օբյեկտներում հրդեհային անվտանգության պահանջների խախտումներին: Լուծում է ստացել հիմնավոր բողոքների 19,2%-ը (5 հատ): Բողոքում բարձրացված խնդիրն ուսումնասիրելու նպատակով իրականացվել է մեկ ստուգում: 41 բողոք ընթացիկ փուլում է: ՀՀ վարչապետի աշխատակազմից վերահասցեագրվել է 4 բողոք, որոնցից 1-ը հիմնավոր չէ, 3-ը հիմնավոր է, լուծում է ստացել 2-ը, իսկ 1-ն ուսումնասիրման փուլում է:

2024 թվականին հանրությունից ստացված 104 բողոքների ուսումնասիրությունից պարզվել էր, որ հիմնավոր էին 51-ը, ինչը կազմում էր ընդհանուր քանակի 49%: 33 բողոք (31,7%) ստացվել էր թեժ գծով: 22 բողոք (հիմնավորների 43,14%) լուծում էր ստացել նույն տարվա ընթացքում, հիմնավոր չէր 35-ը: 40-ն ընթացքի մեջ էին: ՀՀ վարչապետի

աշխատակազմից վերահասցեագրվել էր 14 բողոք, որից 1-ը հիմնավոր չէր, 3-ը հիմնավոր էր և լուծում էր ստացել, իսկ 10-ն ուսումնասիրման փուլում էր:

2023 թվականի ընթացքում ստացված 68 բողոքների 73,5%-ը հիմնավոր էին (50): 26 բողոք (հիմնավորների 52%) լուծում էր ստացել 2023 թվականի ընթացքում: 2 բողոք վերահասցեագրվել էր, հիմնավոր չէր 12-ը: 43 բողոք (63,24%) ստացվել էր թեժ գծով:

2025 թվականին ստացված բողոքներն ըստ ամիսների բաշխված են հետևյալ կերպ.



2023-2025 թվականների ընթացքում հանրությունից ստացված հիմնավոր և լուծում ստացած բողոքների բաշխվածությունն ըստ տարիների ունի հետևյալ պատկերը.



Հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվել է 147 գրություն, որից 115-ը (78,2%) արդեն իսկ լուծում է ստացել, 24-ը գտնվում է ընթացքի մեջ:

2024 թվականի ընթացքում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվել էր 207 գրություն, որից 190-ը (91,8%) բավարարվել էր նույն տարվա ընթացքում, 17-ը գտնվում էր ընթացքի մեջ: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված գրությունների հիման վրա իրականացվել էր 7 ստուգում:

2023 թվականին պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվել էր 248 գրություն, որից 221-ը (89,1%) բավարարվել էր 2023 թվականի ընթացքում: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված 20 գրության հիման վրա իրականացվել էին ստուգումներ: 2023-2025 թվականների ընթացքում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված գրությունների ընդհանուր քանակի և բավարարված գրությունների քանակի բաշխվածությունն ըստ տարիների ունի հետևյալ պատկերը.



ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱՍՊԱՌՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու ժամանակահատվածում հանրությունից ստացված 137 բողոքների ուսումնասիրությունից պարզվել է, որ հիմնավոր են 80-ը (ընդհանուր քանակի 58,4%), որոնցից արդեն իսկ լուծում է ստացել 65-ը (հիմնավոր բողոքների 81,2%), ընթացքի մեջ

են գտնվում 19-ը: Բողոքներից 7-ը (5,1%) ստացվել է թեժ գծով: ՀՀ վարչապետի աշխատակազմից վերահասցեագրվել է 19 բողոք, որից 4-ը հիմնավոր չի, 15 հիմնավորներից լուծում է ստացել 13-ը, իսկ 2-ն ուսումնասիրման փուլում է:

Հիմնավոր բողոքների 66,2%-ը վերաբերում է մայրուղային գազատարների և էլեկտրահաղորդման օդային գծերի անվտանգության գոտիների խախտումներին: Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների դիմումներում բարձրացված հարցերը ուսումնասիրվում են, ձեռնարկվում են բոլոր հնարավոր միջոցները էներգետիկայի բնագավառում հասարակության անվտանգությունը և հարմարավետությունն ապահովելու ուղղությամբ: Մշտապես տրամադրվում է իրավախորհրդատվական աջակցություն:

2025 թվականին ստացված բողոքներն ըստ ամիսների բաշխված են հետևյալ կերպ



2024 թվականի ընթացքում հանրությունից ստացված 127 բողոքների ուսումնասիրությունից պարզվել էր, որ հիմնավոր էր 91-ը (ընդհանուր քանակի 71,6%), որոնցից լուծում էր ստացել 43-ը (հիմնավոր բողոքների 47,2%), ընթացքի մեջ էր գտնվում 64-ը: Բողոքներից 15-ը (12%) ստացվել էր թեժ գծով: ՀՀ վարչապետի աշխատակազմից վերահասցեագրվել էր 32 բողոք, որից 3-ը հիմնավոր չէր, 11-ը հիմնավոր էր և լուծում էր ստացել, իսկ 18-ն ուսումնասիրման փուլում էր:

2023 թվականի տարվա ընթացքում հանրությունից ստացված 76 բողոքներից հիմնավոր էր 44-ը (ընդհանուր քանակի 58%), որոնցից լուծում էր ստացել 31-ը (հիմնավոր բողոքների 70,4%), ընթացքի մեջ էր գտնվում 35-ը: Բողոքներից 11-ը (14,5%) ստացվել էր թեժ գծով:

2023-2025 թվականների ընթացքում ստացված բողոքների ընդհանուր քանակի, հիմնավոր և լուծում ստացած բողոքների բաշխվածությունն ըստ տարիների ունի հետևյալ պատկերը.



Հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված 41 գրություններից 17-ը բավարարվել է: 2024 թվականին պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված 20 (2023 թվականին՝ 17) գրություններից լուծում էին ստացել 13-ը (2023 թվականին՝ 12-ը) նույն տարվա ընթացքում:

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ

2025 թվականի ընթացքում Տեսչական մարմին հասցեագրված 60 բողոքներում բարձրացված խնդիրների կարգավորման ուղղությամբ տրանսպորտային անվտանգության վարչության և տարածքային բաժինների տրանսպորտային անվտան գության մասնագետների կողմից իրականացվել են առարկայական ուսումնասիրություններ, դիտարկումներ և վերահսկողական գործառույթներ: Բողոքների բաշխվածությունն ըստ ամիսների ունի հետևյալ պատկերը.



Հիմնավոր 30 բողոքների 93,3% արդեն իսկ լուծում է ստացել, վերահասցեագրվել է 2 բողոք, հիմնավոր չի 23-ը: Ուսումնասիրության ընթացքում է 5 բողոք: Բողոքներից 39-ը (65%) ներկայացվել է թեժ գծով: Հիմնավոր բողոքներում բարձրացված խնդիրները հիմնականում վերաբերում են չվացուցակների խախտումներին:

2024 թվականի ընթացքում Տեսչական մարմին հասցեագրված 83 (2023 թվականին՝ 134) բողոքներից հիմնավոր էին 47-ը (2023 թվականին՝ 75-ը), տարվա ընթացքում լուծում էր ստացել 44-ը (2023 թվականին՝ 75-ը), հիմնավոր չէր 28-ը (2023 թվականին՝ 53-ը), վերահասցեագրվել էր 7 (2023 թվականին՝ 5) բողոք: Բողոքներից 42 (2023 թվականին՝ 80-ը) ներկայացվել էր թեժ գծով:

2023-2025 թվականների ընթացքում հանրությունից ստացված հիմնավոր և լուծում ստացած բողոքների բաշխվածությունն ըստ տարիների ունի հետևյալ պատկերը.



Հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվել է 166 գրություն, որոնցից հաշվետու տարվա ընթացքում պատասխանվել է 156-ին: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված գրությունների հիման վրա իրականացվել է 2 ստուգում:

2024 թվականին պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվել էր 131 (2023 թվականին՝ 107) գրություն, որոնց հաշվետու տարվա ընթացքում պատասխանվել է (2023 թվականին՝ 94):

2023-2025 թվականների ընթացքում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից հասցեագրված գրությունների վիճակագրությունը ցույց է տալիս ստացվող գրությունների քանակի կայուն աճ:



ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Նշված ժամանակահատվածում Տեսչական մարմինն ուսումնասիրել է իրեն հասցեագրված քաղաքաշինական ոլորտին առնչվող ընդհանուր առմամբ 405 (80-ը թեժ գծով) բողոք, որոնք ըստ ամիսների ունեն հետևյալ բաշխվածությունը.



2025 թվականի ընթացքում հանրությունից ստացված բողոքներից հիմնավոր չի 69-ը (ընդհանուր քանակի 17%), հիմնավոր 168 բողոքից 2025 թվականի ընթացքում լուծում է ստացել 162-ը (հիմնավոր բողոքների 96,4%):

Ստացված 6 բողոքի հիման վրա իրականացվել են ստուգումներ: Հանրությունից ստացված բողոքների բաշխումն ըստ տարածքային միավորների ունի հետևյալ գրաֆիկական պատկերը.



Դիմումներում նշված հասցեներում կատարվել է մասնագիտական տեղազննություն, ստուգվել է իրականացվող շինարարական աշխատանքների, առկա քաղաքաշինական փաստաթղթերի տրման օրինականությունը և համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանն ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին: Կատարված աշխատանքի արդյունքում պարզվել է, որ խնդրահարույց և առավել կրկնվող խնդիրները վերաբերվում են շինարարական նորմերի խախտումներին, ապօրինի/ինքնակամ շինարարությանը:

2024 թվականի ընթացքում Տեսչական մարմինն ուսումնասիրել էր իրեն հասցեագրված քաղաքաշինական ոլորտին առնչվող ընդհանուր առմամբ 430 (72-ը թեժ գծով) բողոք: Հանրությունից ստացված բողոքներից 31-ը հիմնավոր էին (բողոքների 7,2%), 29-ն (հիմնավոր բողոքների 93,5%) արդեն իսկ լուծում էին ստացել:

2023 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից ուսումնասիրվել էր քաղաքաշինական ոլորտին առնչվող 542 (117-ը թեժ գծով) բողոք: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել էր, որ տարվա հանրությունից

ստացված բողոքներից 128-ը հիմնավոր էին (բողոքների 23,6%), 110-ն (հիմնավոր բողոքների 85,9%) լուծում էին ստացել 2023 թվականի ընթացքում:

2023-2025 թվականների ընթացքում հանրությունից ստացված հիմնավոր բողոքների քանակի և լուծում ստացած բողոքների բաշխվածությունն ըստ տարիների ունի հետևյալ պատկերը.



Հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվել է 341 գրություն, որից 282-ը (82,7%) արդեն իսկ բավարարվել է, ընթացքի մեջ գտնվում են 37-ը: Ստացված գրությունների հիման վրա իրականացվել էր 18 ստուգում:

Նախորդ տարվա պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվել էր 372 գրություն, որից 264-ը (71%) արդեն իսկ լուծում էր ստացել, ընթացքի մեջ գտնվում էին 115-ը: 2023 թվականի ընթացքում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվել էր 181 գրություն, որից 162-ը (89,5%) լուծում էին ստացել նույն տարվա ընթացքում:

2023-2025 թվականների ընթացքում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված գրությունների քանակն ունի հետևյալ գրաֆիկական պատկերը.



ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ և ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2025 թվականի ընթացքում Տեսչական մարմնին հանրությունից հասցեարգել է 11 բողոք, որոնք վերաբերում են հողի պահպանման և հողօգտագործման բնագավառին: Հիմնավոր 5 բողոք լուծում է ստացել: Հանրությունից ստացված 1 բողոքի հիման վրա իրականացվել է ստուգում: Թեժ գծով բողոք չի ստացվել: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվել է 176 գրություն, բավարարվել է 170-ը: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված 4 գրության հիման վրա իրականացվել են ստուգումներ:

2024 թվականին Տեսչական մարմնին հանրությունից հասցեարգել էր 4 բողոք, որոնցից հիմնավոր 2 բողոք լուծում էր ստացել: Թեժ գծով բողոք չէր ստացվել: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվել էր 6 գրություն, լուծում էր ստացել 1 գրությամբ բարձրացված խնդիրը, 5-ի մասով տրվել էին պարզաբանումներ:

2023 թվականի ընթացքում Տեսչական մարմնին հանրությունից հասցեարգել էր 9 բողոք: Հիմնավոր էին 9-ը, բոլորը լուծվել էին 2023 թվականի ընթացքում: Թեժ գծով բողոք չէր ստացվել: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվել էր 5 գրություն, լուծում էին ստացել 5 գրությամբ բարձրացված խնդիրները:

5. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՎՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հաշվետու ժամանակահատվածում կայացվել է 7047 որոշում: Նշանակվել է ընդհանուր առմամբ 2.010.640.000 դրամի չափով վարչական տուգանք: 2025 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջե է գանձվել 502.864.000 դրամ: Արտադրական վտանգավոր օբյեկտների նկատմամբ հարուցվել է 1095 վարույթ:

2024 թվականին կայացվել էր ընդհանուր առմամբ 8456 (2023 թվականին՝ 7405) որոշում, նշանակվել էր 2.080.904.000 (2023 թվականին՝ 1.968.470.000) դրամի չափով վարչական տուգանք: Նշված ժամանակահատվածում գանձվել էր 397.152.823 (2023 թվականին՝ 313.092.703) դրամ: Միաժամանակ կայացվել էր 918 (2023 թվականին՝ 244) որոշում՝ օբյեկտների շահագործումը դադարեցնելու վերաբերյալ:

Գանձված գումարների համեմատությունն ըստ տարիների ունի հետևյալ պատկերը.



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու ժամանակահատվածում կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 748 արձանագրություն, կայացվել է 1418 որոշում: Նշանակվել է ընդհանուր

առմամբ 602.325.000 դրամի չափով տուգանք: Արձակվել են կարգադրագրեր 1095 ԱՎՕ-ների շահագործումը դադարեցնելու վերաբերյալ

2024 թվականին կազմվել էր վարչական իրավախախտման վերաբերյալ 596 արձանագրություն, կայացվել էր 1477 վարչական որոշում: Նշանակվել էր ընդհանուր առմամբ 409.235.000 դրամի չափով վարչական տուգանք: Արձակվել էին կարգադրագրեր՝ 918 արտադրական վտանգավոր օբյեկտի շահագործման դադարեցման վերաբերյալ:

2023 թվականին կազմվել էր վարչական իրավախախտման վերաբերյալ 796 արձանագրություն, կայացվել էր 1512 որոշում: Նշանակվել էր ընդհանուր առմամբ 725.900.000 դրամի չափով տուգանք: Միաժամանակ կայացվել էր 244 որոշում՝ օբյեկտի շահագործման դադարեցման վերաբերյալ, որից 138-ը՝ ԲԼԿ, ԱԳԼՃԿ և ՀԳԼԿ: Արդյունքում կապարակնքվել էր 47, ապամոնտաժվել՝ 35 լցավորման կայան: Դատարանի որոշմամբ կասեցվել էր Տեսչական մարմնի 32 վարչական ակտի կատարում:

Հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում նշանակված գումարի բաշխվածությունն ըստ տարիների ունի հետևյալ պատկերը.



Արձանագրված խախտումները վերաբերում են ձեռնարկություններում, հիմնարկներում, կազմակերպություններում, հասարակական վայրերում, պահեստային շենքերում, հանրակացարաններում, ինչպես նաև համապատասխան օբյեկտներ նախագծելիս և կառուցելիս հրդեհային անվտանգության կանոնները խախտելու կամ չկատարելու, կամ հակահրդեհային գույքի, սարքավորումների, հրդեհները հայտնաբերելու և հանգցնելու ավտոմատ միջոցների օգտագործման ու պահպանության

կանոնները խախտելու դեպքերին, ինչպես նաև արտադրական վտանգավոր օբյեկտները տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրությանը համապատասխան՝ ռեեստրում գրանցման չներկայացնելուն և տեխնիկական անվտանգության փորձաքննություն չիրականացնելուն, ինչպես նաև Տեսչական մարմնի կողմից տրված կարգադրագրերի պահանջները չկատարելուն:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱՍՊԱՌՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2025 թվականի ընթացքում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում էներգետիկայի ոլորտի օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ կայացվել է 95 որոշում, նշանակվել է ընդհանուր առմամբ 52.825.000 ՀՀ դրամ տուգանք: Արձանագրված խախտումները վերաբերում են նոր կառուցվող և վերակառուցվող էներգատեղակայանքները առանց Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողություն իրականացնող լիազորված պետական մարմնի կողմից տրված գործարկման եզրակացության գործող ցանցերին միացնելուն, ինչպես նաև՝ Տեսչական մարմնի կողմից տրված կարգադրագրի պահանջները չկատարելուն:

2024 թվականի ընթացքում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում էներգետիկայի ոլորտի օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ կայացվել էր 73 որոշում, նշանակվել էր ընդհանուր առմամբ 5.030.000 ՀՀ դրամ տուգանք: 2023 թվականի ընթացքում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում էներգետիկայի ոլորտի օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ կայացվել էր 85 որոշում, նշանակվել էր ընդհանուր առմամբ 4.605.000 ՀՀ դրամ տուգանք:

Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում նշանակված գումարի բաշխվածությունն ըստ տարիների ունի հետևյալ պատկերը.



ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում տրանսպորտային օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ կազմվել է 4342 արձանագրություն: Կազմված արձանագրությունների 80%-ը (3474 հատ) վերաբերում է բեռնափոխադրումների ոլորտում բացահայտված խախտումներին, մնացածն՝ ըստ պատկերի.



Հաշվետու տարվա ընթացքում կայացվել է 4586 որոշում, նշանակվել է ընդհանուր առմամբ 1.250.635.000 ՀՀ դրամ տուգանք:

2024 թվականի ընթացքում կազմվել է 5126 արձանագրություն, կայացվել է 6015 որոշում, նշանակվել է ընդհանուր առմամբ 1.584.944.000 ՀՀ դրամ տուգանք:

2023 թվականի ընթացքում կազմվել է տրանսպորտային օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ 4713 արձանագրություն, կայացվել է 5129 որոշում, նշանակվել է ընդհանուր առմամբ 1.184.265.000 ՀՀ դրամ տուգանք:

Տրանսպորտի բնագավառում նշանակված գումարի բաշխվածությունն ըստ տարիների ունի հետևյալ պատկերը.



ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու ժամանակահատվածում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում քաղաքաշինության բնագավառի օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ կազմվել է 449 արձանագրություն, կայացվել էր վարչական իրավախախտման վերաբերյալ 938 որոշում: Նշանակվել էր ընդհանուր առմամբ 93.940.000 ՀՀ դրամ տուգանք:

2024 թվականի ընթացքում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում քաղաքաշինության բնագավառի օրենսդրության պահանջների

խախտումների վերաբերյալ կազմվել էր 425 արձանագրություն, կայացվել էր 888 որոշում: Նշանակվել էր ընդհանուր առմամբ 80.045.000 ՀՀ դրամ տուգանք:

2023 թվականի ընթացքում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում քաղաքաշինության բնագավառի օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ կազմվել էր 293 արձանագրություն, կայացվել էր 666 որոշում: Նշանակվել էր ընդհանուր առմամբ 51.950.000 ՀՀ դրամ տուգանք:



Քաղաքաշինության բնագավառում 2023-2025 թվականների ընթացքում նշանակված գումարի բաշխվածությունն ըստ տարիների ունի հետևյալ պատկերը. Արձանագրված խախտումները մեծամասամբ վերաբերում են ճարտարապետահատակագծային առաջադրանքին չհամապատասխանող նախագծերը համաձայնեցնելուն, սահմանված կարգի խախտումներով ճարտարապետահատակագծային առաջադրանքներ տրամադրելուն, կառուցապատողի կողմից առանց համապատասխան լիցենզիա ունեցող անձանց միջոցով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորման ենթակա շինարարական աշխատանքներ իրականացնելուն, օրենքով սահմանված դեպքերում կառուցապատողի կողմից հեղինակային կամ տեխնիկական հսկողության իրականացում չապահովելուն:

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու ժամանակահատվածում կազմվել է 18 արձանագրություն՝ բացահայտված խախտումների վերաբերյալ, կայացվել է 10 որոշում, նշանակված տուգանքի չափը կազմում է 7.465.000 ՀՀ դրամ:

2024 թվականի ընթացքում կազմվել էր 11 արձանագրություն, կայացվել 3 որոշում, նշանակված գումարը կազմում էր 1.650.000 ՀՀ դրամ: 3 դեպքով բացահայտված խախտումների վերաբերյալ հաղորդում էր ներկայացվել ՀՀ դատախազություն:

2023 թվականի ընթացքում կազմվել էր 19 արձանագրություն՝ բացահայտված խախտումների վերաբերյալ, կայացվել էր 13 որոշում, նշանակված գումարը կազմում էր 1.750.000 ՀՀ դրամ:

Նշանակված տուգանքի չափի բաշխվածությունն ըստ տարիների ունի հետևյալ պատկերը.



6. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԴՐԱ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ

ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐ ՎԵՐԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ

2025 թվականին Տեսչական մարմնի կողմից կայացված վարչական ակտերի դեմ բերվել է ընդհանուր առմամբ 224 վերադաս բողոք, 2024 թվականին՝ 165, իսկ 2023 թվականին՝ 119: Ըստ տարիների համեմատական պատկերը հետևյալն է.



149-ով վարչական ակտերը թողնվել են անփոփոխ, իսկ բողոքներն՝ առանց բավարարման, 1 գործով բողոքը բավարարվել է մասնակի, 67 գործով՝ բավարարվել է, 7 բողոք քննության փուլում է:

Ըստ բնագավառների 2025 թվականին ներկայացված բողոքների քանակն ունի հետևյալ գրաֆիկական բաշխվածությունը.



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2025 թվականի ընթացքում տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում վերադասության կարգով բողոքարկվել է 148 վարչական ակտ, 2024 թվականին՝ 77 վարչական ակտ, 2023 թվականին՝ 38: Հաշվետու ժամանակահատվածում 82-ով (55,4%) վարչական ակտերը թողնվել են անփոփոխ, իսկ բողոքներն՝ առանց բավարարման, 59 (39,8%) գործով՝ բավարարվել են, 7 բողոք քննության փուլում է: Բողոքները եղել են արտադրական վտանգավոր օբյեկտների գրանցման ռեեստրում գրանցելու, տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացման, արտադրական վտանգավոր օբյեկտի կամ դրանում առկա տեխնիկական միջոցի, տեխնոլոգիական սարքավորման շահագործումը դադարեցնելու պահանջների դեմ:

2024 թվականին 49 (63,6%) բողոքարկվող որոշում թողնվել էր անփոփոխ, 21 (27,3%) բողոք բավարարվել էր, 1 բողոք բավարարվել էր մասնակի: 5 բողոք թողնվել էր առանց քննության, 1՝ ուսումնասիրման փուլում էր: 2023 թվականին 35 (70%) բողոք մերժվել էր, և բողոքարկվող որոշումները թողնվել էին անփոփոխ, 4 (8%) բողոք բավարարվել էր, 2 (4%) բողոք բավարարվել էր մասնակի: 9 բողոք ուսումնասիրման փուլում էին:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱՍՊԱՌՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2025 թվականի ընթացքում էներգետիկայի և էներգասպառման բնագավառում վերադասության կարգով բողոքարկվել է 1 վարչական ակտ, որի քննությամբ բողոքը մերժվել է և վարչական ակտը թողնվել է անփոփոխ:

2024 թվականի ընթացքում վերադասության կարգով բողոքարկվել էր 4 վարչական ակտ, որից 2-ով էլ վարչական ակտերը թողնվել էին անփոփոխ, իսկ բողոքներն՝ առանց բավարարման: 2023 թվականի ընթացքում վերադասության կարգով բողոքարկվել էր 2 վարչական ակտ: 2022 թվականին ներկայացվել էին 2 վարչական բողոք, որոնց քննության արդյունքում վարչական ակտերը թողնվել էին անփոփոխ:

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու ժամանակահատվածում տրանսպորտի բնագավառում վերադասության կարգով բողոքարկվել է 62 վարչական ակտ, 58-ով (93,5%) կայացվել է որոշում վարչական ակտերն անփոփոխ թողնելու մասին, 4 (6,5%) գործով բողոքները բավարարվել են: Բողոքները վերաբերվել են ՀՀ տարածքում ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնողների կողմից փոխադրումներին ներկայացվող պահանջները չկատարելու պահանջին:

2024 թվականին վերադասության կարգով բողոքարկվել էր 76 վարչական ակտ, 62-ով (81,6%) կայացվել էր որոշում վարչական ակտերն անփոփոխ թողնելու մասին, 11 (14,5%) գործով բողոքները բավարարվել էին: 2023 թվականի ընթացքում բողոքարկվել էր 79 վարչական ակտ, որից 53-ով (57%) կայացվել էր որոշում կայացված վարչական ակտերն անփոփոխ թողնելու մասին, 3-ով (3%)՝ որոշում կայացված որոշումը բեկանելու և վարչական գործի վարույթը կարճելու մասին, 1 (1%) բողոք բավարարվել ոչ մասնակի: 35 բողոք ուսումնասիրման փուլում էին:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու ժամանակահատվածում քաղաքաշինության բնագավառում վերադասության կարգով բողոքարկվել է 11 վարչական ակտ, որից 8-ով (72,7%) վարչական ակտերը թողնվել են անփոփոխ, իսկ բողոքներն՝ առանց բավարարման, 3 (27,3%) գործով բողոքը բավարարվել է:

2024 թվականին քաղաքաշինության բնագավառում վերադասության կարգով բողոքարկվել էր 8 վարչական ակտ, որից 5-ով էլ վարչական ակտերը թողնվել էին անփոփոխ, իսկ բողոքներն՝ առանց բավարարման, 1 գործով բողոքը բավարարվել էր, 1 բողոք թողնվել էր առանց քննության: 1 բողոք քննության փուլում էր: 2023 թվականին քաղաքաշինության բնագավառում վերադասության կարգով բողոք չէր ներկայացվել:

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ և ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Բողոքարկվել է 2 վարչական ակտ, 1 գործով բողոքը բավարարվել է և 1 գործով բողոքը բավարարվել է մասնակի:

ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ

Հաշվետու ժամանակահատվածում դատարան է մուտքագրվել 538 հայցադիմում: Վարույթ է ընդունվել 476 հայցադիմում, 13-ի ընդունումը մերժվել է, 12 հայցադիմում վերադարձվել է, 37 գործ վարույթ ընդունելու ընթացիկ փուլում է: Հայցադիմումները մեծամասամբ վերաբերում են Տեսչական մարմնի կողմից ընդունված վարչական ակտերի (որոշում, կարգադրագիր, ցուցում) վիճարկմանը:

2024 թվականին դատարան է մուտքագրվել 708 հայցադիմում: Վարույթ էր ընդունվել 676 հայցադիմում, 21-ի ընդունումը մերժվել էր, 11 գործ վարույթ ընդունելու ընթացիկ փուլում էր:

2023 թվականի ընթացքում դատարան մուտքագրված 742 հայցադիմումից վարույթ էր ընդունվել 663-ը, 37 հայցի ընդունումը մերժվել էր, մյուսներն ընդունման փուլում էին: Դատարան մուտք արած հայցադիմումներն ըստ տարիների ունեն հետևյալ գրաֆիկական բաշխվածությունն.



2025 թվականի ընթացքում 476 դատական գործով կայացվել է Տեսչական մարմնի 371 վարչական ակտերն անվավեր ճանաչելու, 94-ով՝ անփոփոխ թողնելու մասին վճիռ: 11 գործով դատական վարույթները կարճվել են: Ներկայացվել է 126 վերաքննիչ բողոք՝

78-ը Տեսչական մարմնի կողմից և 48-ը՝ տնտեսավարողի: Նախկինում տնտեսավարողի կողմից ներկայացված 20 և Տեսչական մարմնի 50 վերաքննիչ բողոք մերժվել է: Տնտեսավարողի կողմից ներկայացված 16 և Տեսչական մարմնի 21 վերաքննիչ բողոք բավարարվել է:

2024 թվականի ընթացքում 651 դատական գործերով կայացվել էր Տեսչական մարմնի 571 վարչական ակտերն անվավեր ճանաչելու, 80-ով՝ անփոփոխ թողնելու մասին վճիռ: 13 գործով դատական վարույթը կարճվել էր: Ներկայացվել էր 154 վերաքննիչ բողոք, որից 105-ը Տեսչական մարմնի կողմից և 49-ը՝ տնտեսավարողի: Նախկինում տնտեսավարողի կողմից ներկայացված՝ 10 և Տեսչական մարմնի կողմից՝ 18 վերաքննիչ բողոք մերժվել էր: Տնտեսավարողի կողմից ներկայացված 2 և Տեսչական մարմնի կողմից՝ 10 վերաքննիչ բողոք բավարարվել էր: 2023 թվականի ընթացքում կայացվել էր 379 դատական վճիռ, որոնցից 349-ով հայցապահանջ բավարարվել էր (ինչը կազմում է վճիռների 92%), 30-ը՝ մերժվել: Բավարարված հայցապահանջներով 21 վճիռների դեմ Տեսչական մարմնի կողմից ներկայացվել էր վերաքննիչ բողոք:

Ըստ բնագավառների դատարան մուտք արած հայցադիմումներն ունեն հետևյալ գրաֆիկական բաշխվածությունն.



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Ընդդեմ Տեսչական մարմնի դատարան ներկայացված 198 հայցադիմումից վարույթ է ընդունվել 172-ը, 9-ի ընդունումը մերժվել է, 6 հայց վերադարձվել է, 11 գործ վարույթ ընդունելու ընթացիկ փուլում է: Կայացվել է 149 վճիռ, որոնցից 49-ով տնտեսավարողի հայցերը մերժվել են, իսկ 91-ով՝ Տեսչական մարմնի դեմ ներկայացված հայցապահանջները բավարարվել են, 9 գործով դատական վարույթը կարճվել է: Ներկայացվել է 62 վերաքննիչ բողոք՝ 39-ը Տեսչական մարմնի կողմից և 23-ը՝ տնտեսավարողի: Նախկինում տնտեսավարողի կողմից ներկայացված՝ 13 և Տեսչական մարմնի կողմից՝ 35 վերաքննիչ բողոք մերժվել է: Տեսչական մարմնի կողմից ներկայացված՝ 18 և տնտեսավարողի կողմից՝ 6 վերաքննիչ բողոք բավարարվել է:

2024 թվականի ընթացքում ընդդեմ Տեսչական մարմնի դատարան ներկայացված 209 հայցադիմումից վարույթ էր ընդունվել 190-ը, 9-ի ընդունումը մերժվել էր, 10 գործ վարույթ ընդունելու ընթացիկ փուլում էր: Կայացվել էր 160 վճիռ, որոնցից 45-ով տնտեսավարողի հայցերը մերժվել էին, իսկ 115-ով՝ Տեսչական մարմնի դեմ ներկայացված հայցապահանջները բավարարվել էին: 7 գործով դատական վարույթը կարճվել ոէ: Ներկայացվել էր 94 վերաքննիչ բողոք՝ 69-ը Տեսչական մարմնի կողմից և 25-ը՝ տնտեսավարողի: Նախկինում տնտեսավարողի կողմից ներկայացված 7 և Տեսչական մարմնի 9 վերաքննիչ բողոք մերժվել էր: Տեսչական մարմնի կողմից ներկայացված 6 վերաքննիչ բողոք բավարարվել էր:

2023 թվականի ընթացքում ընդդեմ Տեսչական մարմնի դատարան էր ներկայացվել 160 հայցադիմում, վարույթ էր ընդունվել 135, 4-ի ընդունումը մերժվել էր, մյուսներն ընդունման փուլում էին: Կայացվել էր 65 վճիռ, որոնցով Տեսչական մարմնի դեմ 56 հայցապահանջները բավարարվել էին, իսկ 9-ով՝ մերժվել:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱՍՊԱՌՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու ժամանակահատվածում ընդդեմ Տեսչական մարմնի դատարան ներկայացված 14 հայցադիմումից վարույթ է ընդունվել 11-ը, 1-ի ընդունումը մերժվել է,

1 հայց վերադարձվել է, 1 գործ վարույթ ընդունելու ընթացիկ փուլում է: Կայացվել է 2 վճիռ, որոնցով տնտեսավարողի հայցերը բավարարվել են: Տնտեսավարողի կողմից ներկայացվել է 1 վերաքննիչ բողոք: Նախկինում տնտեսավարողի կողմից ներկայացված 2 վերաքննիչ բողոք բավարարվել է:

2024 թվականի ընթացքում ընդդեմ Տեսչական մարմնի դատարան ներկայացված 1 հայցադիմումը վարույթ էր ընդունվել: Կայացվել էր 3 վճիռ, որոնցից 1-ով տնտեսավարողի հայցը մերժվել էր, իսկ 2-ով՝ Տեսչական մարմնի դեմ ներկայացված հայցապահանջները բավարարվել էին: Տնտեսավարողի կողմից ներկայացվել էր 4 վերաքննիչ բողոք: Նախկինում տնտեսավարողի կողմից ներկայացված 1 վերաքննիչ բողոք մերժվել էր:

2023 թվականի ընթացքում ընդդեմ Տեսչական մարմնի դատարան էր ներկայացվել 9 հայցադիմում, վարույթ էր ընդունվել 8-ը, մյուսներն ընդունման փուլում էին: Կայացվել էր 7 վճիռ, որոնցով Տեսչական մարմնի դեմ 4 հայցապահանջները բավարարվել էին, իսկ 3-ով՝ մերժվել:

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Ընդդեմ Տեսչական մարմնի դատարան ներկայացված 298 հայցադիմումից վարույթ է ընդունվել 268-ը, 3-ի ընդունումը մերժվել է, 5 հայց վերադարձվել է, 22 գործ վարույթ ընդունելու ընթացիկ փուլում է: Կայացվել է 298 վճիռ, որոնցից 42-ով տնտեսավարողի հայցերը մերժվել են, իսկ 254-ով՝ Տեսչական մարմնի դեմ ներկայացված հայցապահանջները բավարարվել են, 2 գործով դատական վարույթը կարճվել է: Ներկայացվել է 60 վերաքննիչ բողոք՝ 36-ը Տեսչական մարմնի կողմից և 24-ը՝ տնտեսավարողի: Նախկինում տնտեսավարողի կողմից ներկայացված՝ 7 և Տեսչական մարմնի կողմից՝ 14 վերաքննիչ բողոք մերժվել է: Տնտեսավարողի կողմից ներկայացված 6 և Տեսչական մարմնի կողմից՝ 3 վերաքննիչ բողոք բավարարվել է:

2024 թվականի ընթացքում ընդդեմ Տեսչական մարմնի դատարան ներկայացված 472 հայցադիմումից վարույթ ոչ ընդունվել 460-ը, 11-ի ընդունումը մերժվել էր, 1 գործ վարույթ ընդունելու ընթացիկ փուլում էր: Կայացվել էր 465 վճիռ, որոնցից 31-ով տնտեսավարողի հայցերը մերժվել էին, իսկ 434-ով՝ Տեսչական մարմնի դեմ ներկայացված հայցապահանջները բավարարվել էին: 3 գործով դատական վարույթը կարճվել էր: Ներկայացվել էր 53 վերաքննիչ բողոք, որից 35-ը Տեսչական մարմնի կողմից, 18-ը՝ տնտեսավարողի: Նախկինում տնտեսավարողի կողմից ներկայացված 2 և Տեսչական մարմնի 8 վերաքննիչ բողոք մերժվել էր: Տնտեսավարողի կողմից ներկայացված 1 և Տեսչական մարմնի 2 վերաքննիչ բողոք բավարարվել էր:

2023 թվականի ընթացքում ընդդեմ Տեսչական մարմնի դատարան էր ներկայացվել 558 հայցադիմում, վարույթ էր ընդունվել 504, 33-ի ընդունումը մերժվել էր, մյուսներն ընդունման փուլում էին: Կայացվել էր 293 դատական վճիռ, որոնցից 277 հայցապահանջ բավարարվել էր, 16-ը՝ մերժվել:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու ժամանակահատվածում ընդդեմ Տեսչական մարմնի դատարան ներկայացվել է 25 հայցադիմում: Վարույթ է ընդունվել 22-ը, 3 գործ վարույթ ընդունելու ընթացիկ փուլում է: Կայացվել է 23 վճիռ, որոնցից 20-ով տնտեսավարողի հայցը բավարարվել է, 3-ով՝ մերժվել: Տեսչական մարմնի կողմից ներկայացվել է 1 վերաքննիչ բողոք: Նախկինում տնտեսավարողի կողմից ներկայացված 1 վերաքննիչ բողոք բավարարվել է:

2024 թվականի ընթացքում Տեսչական մարմնի դատարան ներկայացվել էր 25 հայցադիմում: Վարույթ էր ընդունվել 24-ը, 1-ի ընդունումը մերժվել էր: Կայացվել էր 18 վճիռ, որոնցից 16-ով էլ տնտեսավարողի հայցը բավարարվել էր, 2 ով՝ մերժվել: 3 գործով դատական վարույթը կարճվել էր: Ներկայացվել էր 2 վերաքննիչ բողոք, որից 1-ը Տեսչական մարմնի կողմից և 1-ը՝ տնտեսավարողի: Նախկինում Տեսչական մարմնի

կողմից կողմից ներկայացված 1 վերաքննիչ բողոք մերժվել էր: Տեսչական մարմնի 1 վերաքննիչ բողոք բավարարվել էր:

2023 թվականին ընդդեմ Տեսչական մարմնի դատարան էր ներկայացվել 14 հայցադիմում, վարույթ էր ընդունվել 15: Կայացվել էր 13 դատական վճիռ, որոնցից 13 հայցապահանջ բավարարվել էր, 2-ը՝ մերժվել:

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ և ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2025 թվականի ընթացքում ընդդեմ Տեսչական մարմնի դատարան ներկայացվել է 3 հայցադիմում, որոնք ընդունվել են վարույթ: Կայացվել է 4 վճիռ, որոնցից 4-ով էլ տնտեսավարողի հայցերը բավարարվել են: Տեսչական մարմնի կողմից ներկայացվել է 2 վերաքննիչ բողոք: Նախկինում Տեսչական մարմնի կողմից ներկայացված 1 բողոք մերժվել է, տնտեսվարողի 1 բողոք բավարարվել:

2024 թվականին ընդդեմ Տեսչական մարմնի դատարան ներկայացվել է 1 հայցադիմում, որն ընդունվել է վարույթ: Կայացվել է 5 վճիռ, որոնցից 4-ով էլ տնտեսավարողի հայցը բավարարվել է, 1- ով՝ մերժվել: Տնտեսավարողի կողմից ներկայացվել է 1 վերաքննիչ բողոք:

2023 թվականին ընդդեմ Տեսչական մարմնի դատարան էր ներկայացվել 1 հայցադիմում, կայացվել էր 1 որոշում տնտեսավարողի հայցապահանջները բավարարվելու վերաբերյալ:

7. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվետու տարվա ընթացքում տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ են ներկայացվել Տեսչական մարմնի 2025 թվականի գործունեության ծրագրով նախատեսված առաջարկություններ՝ հետևյալ իրավական ակտերում՝ օրենսդրական փոփոխություններ կատարելու վերաբերյալ.

- ✓ ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1902-Ն որոշմամբ հաստատված միջոցառումների շրջանակում Տեսչական մարմինը մասնակցել է ավտոմոբիլային ճանապարհների հարակից տարածքներում առանց ճանապարհը տնօրինողի համաձայնության կառուցված կամ կառուցվող օբյեկտների կանխարգելման (կետ 59.1), քաղաքաշինական գործունեության գործընթացների բարելավման (կետ 3.2), շենքերի ու շինությունների հուսալիության և սեյսմակայունության բարձրացման համար անհրաժեշտ իրավական հիմքերով ապահովման (կետ 7.1) ուղղությամբ կայացած քննարկումներին, ներկայացրել է առաջարկություններ: Միաժամանակ Տեսչական մարմինը կարծիք է ներկայացրել «Հայաստանի Հանրապետության որակի ենթակառուցվածքի բարեփոխման 2026–2031 թվականների ռազմավարական ծրագիրը և դրա կատարումն ապահովող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի (կետ 11.4) վերաբերյալ.

- ✓ համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի «Վնասակար նյութերի սահմանաքանակները հաստատելու մասին» թիվ 182-Ն որոշման հավելվածի 92-րդ կետի՝ 100 կգ սելիտրան համարվում է արտադրական վտանգավոր օբյեկտ, ուստի ենթակա է արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում գրանցման, իսկ չգրանցելու դեպքում սահմանված է վարչական պատասխանատվություն՝ նվազագույն

աշխատավարձի հազարապատիկի չափով տուգանք, «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն: Հրդեհային անվտանգության ոլորտը համակարգող ՌԴ նորմատիվի *Федеральный закон от 21.07.1997 N 116-ФЗ (ред. от 11.06.2021) "О промышленной безопасности опасных производственных объектов"* համաձայն՝ պարարտանյութ սելիտրան ԱՎՕ է համարվում 200 տոննա չափը գերազանցելու դեպքում: Տեսչական մարմնի կողմից ներկայացվել է առաջարկ «Վնասակար նյութերի սահմանաքանակները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 16 փետրվարի 2006 թվականի թիվ 182-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու, մասնավորապես՝ ամոնիումի նիտրատի չափաքանակն ավելացնելու, ցանկի մեջ որոշ վտանգավոր քիմիական նյութերի (օրինակ՝ էթիլային սպիրտ) ներառելու վերաբերյալ.

- ✓ ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» թիվ 1025-Ն որոշման մի շարք հավելվածներում: Փոփոխության հիմնական նպատակն է համապատասխանեցնել ստուգաթերթերը փոփոխման ենթարկված իրավական ակտերին:

Միաժամանակ քաղաքականությունը մշակող լիազոր մարմիններին են ներկայացվել նաև մի շարք առաջարկներ հետևյալ խնդիրների կարգավորման նպատակով.

<u>ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ</u>

- ✓ 01.03.2024թ. ուժի մեջ մտած ՀՀՇՆ 21-01.01-2024 «Շենքերի և շինությունների հակահրդեհային պաշտպանության համակարգեր. Ավտոմատ հրդեհաշիջման և հրդեհային ազդանշանման կայանքներ» շինարարական նորմերի և ՀՀ ՏԿԱԻ

նախարարի 2015թ. հունիսի 18-ի «Հրդեհային անվտանգության կանոնները հաստատելու մասին» N 595-Ն հրամանով հաստատված կանոնների միջև առկա են հակասություններ, մասնավորապես՝

- Կանոնների 4-րդ հավելվածով սահմանված է, որ հյուրանոցներ, հանգստյան տներ և հյուրանոցային նշանակության այլ շինությունները անկախ մակերեսից պետք է սարքավորված լինեն հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգով, մինչդեռ ՀՀՇՆ 21-01.01-2024 շինարարական նորմերով հյուրանոցներում հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգերի առկայությունը պահանջվում է 3 հարկ և ավելի կամ 1500մ^2 և ավելի մակերեսով շինությունների համար,
- Կանոնների 4-րդ հավելվածով սահմանված է, որ հասարակական նշանակության շինություններում հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգ պահանջվում է 30մ-ից ավելի բարձրության դեպքում, մինչդեռ ՀՀՇՆ 21-01.01-2024 շինարարական նորմերով հասարակական նշանակության շինություններում հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգերի առկայությունը պահանջվում է 3 հարկ և ավելի կամ 1500մ^2 և ավելի մակերեսով շինությունների համար:

Տեսչական մարմնի 23.12.2025թ. թիվ ՔՏՄ/09.01/35672-25 գրությամբ առաջարկվել է կատարել համապատասխան փոփոխություններ:

✓ «Հրդեհային անվտանգության մասին» օրենքի 20.1 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *հրդեհների առաջացման և մարդկանց անվտանգության համար անմիջականորեն և ուղղակի սպառնալիք ստեղծող իրադրությունները վերացնելուն ուղղված՝ սույն օրենքով սահմանված իր լիազորությունների (գործառույթների) արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով Տեսչական մարմինն իրավասու է կայացնելու որոշակի գործողություններ կատարելուն պարտադրող կամ որոշակի գործողություններից ձեռնպահ մնալուն հարկադրող հետևյալ վարչական ակտերը (այսուհետ՝ սահմանափակող ակտ).*

1) որոշում.

2) կարգադրագիր:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *սահմանափակող ակտը պարտադիր է դրա հասցեատերերի համար և ենթակա է կատարման ՀՀ ամբողջ տարածքում, իսկ սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում այն ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:*

«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *կարգադրագիրը պարտադիր է դրա հասցեատերերի համար և ենթակա է կատարման ՀՀ ամբողջ տարածքում դրանով սահմանված ժամկետում, իսկ արտադրական վտանգավոր օբյեկտի, արտադրական վտանգավոր օբյեկտում տեղակայված առանձին տեխնիկական միջոցի կամ տեխնոլոգիական սարքավորման շահագործումն արգելելու մասով կամովին չկատարելու դեպքում այն ենթակա է հարկադիր կատարման «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:*

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին 2023 թվականի մայիսի 3-ին ընդունված օրենքի (ՀՕ-167-Ն) համաձայն՝ *Հայաստանի Հանրապետությունում հրդեհային և տեխնիկական անվտանգության ոլորտում հսկողություն և վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի՝ որոշակի գործողություններ կատարելուն պարտադրող կամ որոշակի գործողություններից ձեռնպահ մնալուն հարկադրող որոշումը կամ կարգադրագիրը ևս ներառվեցին հարկադիր կատարման ենթակա ակտերի շրջանակում՝ նպատակ ունենալով ապահովելու Տեսչական մարմնի կողմից իր լիազորությունների արդյունավետ իրականացումը և սահմանափակող ակտերի, կամավոր չկատարելու դեպքում, հարկադիր կատարումը:*

Տեսչական մարմնի կողմից որոշակի գործողություններ կատարելուն պարտադրող կամ որոշակի գործողություններից ձեռնպահ մնալուն հարկադրող որոշման կամ

կարգադրագրի ընդունման հիմքում ընկած են վերահսկողական գործառույթների ընթացքում հայտնաբերված հրդեհային և տեխնիկական անվտանգության նորմատիվ իրավական ակտերի և փաստաթղթերի (այդ թվում՝ նորմատիվատեխնիկական) պահանջների այնպիսի խախտումներ, որոնք անմիջականորեն և ուղղակի սպառնալիք են ստեղծում հրդեհների առաջացման և մարդկանց անվտանգության համար:

Օրենսդրական փոփոխություններից հետո Տեսչական մարմնի և Հարկադիր կատարումն ապահովող ծառայության համատեղ արդյունավետ աշխատանքը իրացնում է օրենսդրի՝ Տեսչական մարմնի որոշման կամ կարգադրագրի հարկադիր կատարումն ապահովելու նպատակը՝ նվազեցնելով հրդեհային և տեխնիկական անվտանգության նորմատիվ իրավական ակտերի և փաստաթղթերի պահանջների խախտումներով շահագործվող օբյեկտների գործունեության ընթացքում մարդու կյանքին, առողջությանը, շրջակա միջավայրին, պետության, իրավաբանական և ֆիզիկական անձանց գույքային շահերին վնաս հասցնելու հավանականությունը:

Սակայն, առկա են դեպքեր, երբ տնտեսավարող սուբյեկտները, չկատարելով Տեսչական մարմնի որոշման կամ կարգադրագրի, հարկադիր կատարողի որոշման պահանջները, ինչպես նաև հեռացնելով Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից կատարողական գործողությունների ընթացքում դրված կնիքները, շարունակում են իրենց գործունեությունը: Իսկ կնիքը հեռացնելուց և գործունեությունը շարունակելուց հետո, երբ Տեսչական մարմինն իրականցնում է վերապահված վարչարարական գործառույթները, տնտեսավարող սուբյեկտները կրկին շարունակում են իրականացնել իրենց գործունեությունը՝ ուղղակի սպառնալիք ստեղծելով հրդեհների առաջացման և մարդկանց անվտանգության համար:

Ելնելով վերոգրյալից Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակին առաջարկվել է քննարկել ստեղծված իրավիճակում համապատասխան իրավակարգավորող ակտերում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու նպատակահարմարության և հնարավորության հարցը:

- ✓ «Հրդեհային անվտանգության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքում (ՀՕ-165-Ն) 20-րդ հոդվածը վերաշարադրման արդյունքում անհրաժեշտ փոփոխությունների և լրացումների հետ մեկտեղ, հոդվածից դուրս է մնացել այն դրույթը, համաձայն որի՝ անտառներում, ստորգետնյա հանքերում, երկաթուղային և օդային տրանսպորտում հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների կատարման նկատմամբ հսկողություն պետք է իրականացվի համապատասխան նախարարության (գերատեսչության) կողմից:

  Հրդեհային հսկողությունը անտառներում, ստորգետնյա հանքերում, երկաթուղային և օդային տրանսպորտում մշտապես իրականացվել է համապատասխան գերատեսչության կողմից: Ընդ որում՝ ոչ միայն տեսչական մարմնի (Տեսչություն՝ մինչև 2018 թվականը) սահմանափակ ռեսուրսի, այլև՝ նշված բնագավառներում առկա բազմաթիվ առանձնահատկությունների պատճառով: Տեսչական մարմնի 18.08.2025թ. թիվ ՔՏՄ/09.01/22331-25 գրությամբ առաջարկվել է «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածում վերականգնել օրենքից թյուրիմացաբար դուրս մնացած դրույթը:

<u>ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ</u>

- ✓ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 244.13 հոդվածը սահմանում է տրանսպորտի բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից քննվող վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը, որոնց մեջ ներառված է Օրենսգրքի 150.15-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումը, այն է՝ *Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման, գազաբալոնների պարբերական վկայագրման և լցավորման պահանջները խախտելը:*

  Վերոնշյալ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը սահմանում են հետևյալ իրավախախտումները՝ գազաբալոնային սարքավորումների տեղադրման և

պարբերական վկայագրման կարգի պահանջների խախտմամբ ՀՀ կառավարության սահմանած նմուշի փաստաթղթերի տրամադրումը կամ ավտոտրանսպորտային միջոցների և գազաբալոնների վերաբերյալ տվյալները էլեկտրոնային շտեմարան մուտքագրումը, առանց էլեկտրոնային շտեմարանի տվյալների հետ նույնականացվելու, նույնականացումից հետո դրական եզրակացություն չստանալու դեպքում գազաբալոնների լցավորումը:

Նշված իրավախախտումների հայտնաբերման դեպքում, Տեսչական մարմնի կողմից իրականացրած վարչարարության արդյունքում ընդունված վարչական ակտերը հաճախ բողոքարկվում են դատական կարգով, իսկ ձևավորված դատական պրակտիկան ցույց է տալիս, որ առկա է նշված գործողությունների՝ օրենքի պահանջների խախտմամբ իրականացված լինելու փաստի ապացուցման խնդիր:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Ելնելով վերոնշյալ գործող կարգավորումներից և նկարագրված գործնական խնդիրներից՝ ակնհայտ է այնպիսի նոր իրավական կարգավորումների մշակման անհրաժեշտությունը, որոնք կսահմանեն ավտոտրանսպորտային միջոցների վրա տեղադրված գազաբալոնների պարբերական վկայագրման և գազաբալոնների լցավորման գործընթացների պարտադիր տեսաձայնագրման պահանջը, այդ նյութերի պահպանման ժամկետները և կարգը, ինչպես նաև Տեսչական մարմնի կողմից վերահսկողական գործառույթների իրականացման ընթացքում վերջինիս աշխատակիցների պահանջով համապատասխան տեսաձայնագրությունների տրամադրման հստակ ընթացակարգ: Դրանից բխում է նաև, որ նշված ոլորտները կարգավորող մնացյալ իրավական ակտերում անհրաժեշտ է կատարել լրացումներ՝ ամրագրելով տեսախցիկների առկայության պարտադիր պահանջը:

Առանց էլեկտրոնային շտեմարանի տվյալների հետ նույնականացվելու, նույնականացումից հետո դրական եզրակացություն չստանալու դեպքում գազաբալոնների լցավորման իրավախախտման պարագայում՝ իրավախախտման ապացուցման համար էական նշանակություն ունի գազաբալոնների լցավորման գործընթացի իրականացման փուլերի հերթականությունը: Այս առումով նպատակահարմար է մշակել նոր ենթաօրենսդրական ակտ, որը կսահմանի գազաբալոնների լցավորման կարգը՝ հստակեցնելով լցավորման գործընթացի փուլերի հաջորդականությունը, մասնավորապես՝ թե որ գործողություններն են պարտադիր նախորդում և որոնք՝ հաջորդում էլեկտրոնային շտեմարանի տվյալների հետ նույնականացման գործընթացին:

Առաջարկվող փոփոխությունները կնպաստեն Տեսչական մարմնի կողմից իրականացվող վարչարարության արդյունավետության բարձրացմանը, իրավախախտումների բացահայտման և ապացուցման գործընթացի պարզեցմանը, ինչպես նաև դատական վեճերի նվազեցմանը՝ ապահովելով իրավական որոշակիություն և կանխատեսելիություն ինչպես տնտեսվարող սուբյեկտների, այնպես էլ վերահսկող մարմնի համար:

Տեսչական մարմնի կողմից 2025 թվականի ընթացքում Լիազոր մարմնին ներկայացվել է գրություն՝ համապատասխան իրավական կարգավորումներ կատարելու առաջարկով:

- ✓ Օրենսգրքի 244.13 հոդվածը սահմանում է Տեսչական մարմնի կողմից քննվող վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը, որոնք, ի թիվս այլնի, ներառում են միջպետական ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման և իրականացման ընթացքում կատարված իրավախախտումները: Նշված ոլորտում վերահսկողության իրականացման գործընթացում Տեսչական մարմինը, բախվելով մի շարք գործնական և իրավական խնդիրների, իրականացրել է համապատասխան վերլուծություն, որի արդյունքում ձևավորվել են որոշակի եզրահանգումներ:

Մասնավորապես, Օրենսգրքի 137.7 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումներով միջպետական ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների իրականացումն առաջացնում է տուգանքի նշանակում*, միևնույն ժամանակ, «Պետական տուրքի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 53-րդ և 54-րդ կետերով միջպետական ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների իրականացման համար նախատեսված է պետական տուրքի վճարում, որի չկատարումը Օրենսգրքի 137.7 հոդվածի 3-րդ մասի իմաստով հանդիսանում է իրավախախտում:

Գործնականում Տեսչական մարմինը, հայտնաբերելով միջպետական ոչ կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող վարորդների կողմից պետական տուրքի չվճարման փաստը, արձանագրում է համապատասխան վարչական իրավախախտումը, սակայն տվյալ իրավախախտման հայտնաբերման պայմաններում միջպետական ոչ կանոնավոր ուղևորափոխադրումը փաստացի չի դադարեցվում, իսկ վարչական վարույթի ընթացքում իրավախախտները ներկայացնում են առարկություններ՝ պնդելով, թե արձանագրությունը կազմվել է անհիմն, քանի որ իրենք ՀՀ պետական սահմանը չեն հատել, այսինքն նշված ուղևորափոխադրումը չեն իրականացրել: Սակայն առկա է գործնական իրավիճակ, ըստ որի՝ պետական սահմանը հատելիս տեղի է ունենում կամ տրանսպորտային միջոցի վարորդի փոխարինում, կամ ուղևորների տեղափոխում այլ տրանսպորտային միջոց, ինչը էականորեն բարդացնում է իրավախախտման փաստի ապացուցումը և վարչական պատասխանատվության կիրառման գործընթացը: Միաժամանակ, «Պետական սահմանի մասին» օրենքի կարգավորումներով Տեսչական մարմնի պաշտոնատար անձանց չեն վերապահվում տրանսպորտային միջոցների փաստաթղթերի, այդ թվում՝ միջպետական ուղևորափոխադրումներ իրականացնողի կողմից պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթի, պահանջման և ստուգման լիազորություններ:

Վերոշարադրյալով հիմնավորվում է, որ առկա է իրավական կարգավորման բաց, որը խոչընդոտում է Տեսչական մարմնի կողմից տվյալ ոլորտում արդյունավետ վերահսկողության իրականացմանը: Ակնհայտ է անհրաժեշտություն նոր նորմատիվ իրավական ակտի մշակման, որի նորմերը կսահմանեն միջպետական ոչ կանոնավոր ուղևորափոխադրման իրականացման կարգ՝ հստակեցնելով պետական տուրքի վճարման և փաստացի ուղևորափոխադրումը սկսելու ժամանակահատվածը, ներդնելով արդյունավետ վերահսկողական մեխանիզմներ՝ իրաախախտումների կանխարգելման և նվազեցման համար: Միաժամանակ, տվյալ կարգավորմամբ անհրաժեշտ է նաև Տեսչական մարմնի աշխատակիցներին վերապահել միջպետական ոչ կանոնավոր ուղևորափոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները կանգնեցնելու, համապատասխան փաստաթղթեր պահանջելու և ստուգելու լիազորությունը՝ իրավախախտման փաստի պատշաճ արձանագրման և կանխարգելիչ միջոցառումների կիրառման նպատակով՝ մինչև ավտոտրանսպորտային միջոցի ՀՀ պետական սահման հասնելը:

Հաշվի առնելով, որ միջպետական ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների իրականացման ընթացքում իրավախախտումների զգալի մասը բացահայտվում է ՀՀ պետական սահմանը հատելու փուլում, նպատակահարմար է միջպետական ոչ կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների փաստաթղթերի ստուգման շրջանակում ստուգելու նաև պետական տուրքի վճարումը հավաստող անդորրագիրը:

Անդրադառնալով միջպետական ուղեվորափոխադրումների բնագավառի խնդիրներին՝ հարկ է նշել նաև, որ Օրենսգրքի 137.2 հոդվածի 6-րդ մասը սահմանում է հետևյալ իրավախախտումը՝ *Ավտոկայարանային գործունեություն չիրականացնող կամ ավտոկայարանային գործունեություն իրականացնող կազմակերպության հետ պայմանագիր չունեցողների կողմից միջքաղաքային և միջպետական երթուղիների ուղեփոմսերի վաճառքի իրականացումը*, սակայն Տեսչական մարմնինն իր

իրավասության ներքո չունի որևէ գործիքակազմ տվյալ իրավախախտումը հայտնաբերելու համար:

Տեսչական մարմնի կողմից 2025 թվականի ընթացքում Լիազոր մարմնին ներկայացվել է գրություն՝ համապատասխան իրավական կարգավորումներ կատարելու առաջարկով:

- ✓ Օրենսգրքի 244.13 հոդվածը սահմանում է տրանսպորտի բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից քննվող վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը, որոնց մեջ ներառված է Օրենսգրքի 150.3-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումը, այն է՝ *Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներով թույլատրելի առավելագույն զանգվածը գերազանցող, չմասնատվող և (կամ) մեծ եզրաչափերով բեռներ փոխադրող տրանսպորտային միջոցներով երթևեկելը*:

«Ավտոմոբիլային ճանապարհների մասին» օրենքի 6.6 հոդվածով սահմանված է հետևյալը՝ *Մասնատվող բեռներ փոխադրող ծանրաքաշ տրանսպորտային միջոցների երթևեկությունը ՀՀ տարածքում թույլատրվում է միայն դրանց ավել բեռի բեռնաթափումից հետո*:

Հաշվի առնելով վերոգրյալ իրավական հիմքերը՝ Տեսչական մարմինը իրականացնում է ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկող ծանրաքաշ և մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցների կշռման հսկողություն և վերահսկողություն, սակայն գործող օրենսդրությամբ հստակ կարգավորված չէ կշռման գործընթացի իրավական հիմքը, մասնավորապես՝ ով, որտեղ և ինչ ընթացակարգով պետք է իրականացնի կշռումը, ինչպես պետք է արձանագրվի արդյունքը, ինչպես նաև այդ գործընթացի այլ կարևոր բաղադրիչներ: Բացակայում է նաև Տեսչական մարմնի աշխատակիցների կողմից ծանրաքաշ և մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցները կանգնեցնելու, կշռման կայան ուղորդելու և փաստաթղթեր պահանջելու օրենսդրական լիազորությունը: Այս

օրենսդրական բացը լրացնելու նպատակով անհրաժեշտ է մշակել համապատասխան ենթաօրենսդրական ակտ, որը կսահմանի կշռման գործընթացի կարգավորումը՝ ապահովելով իրավական որոշակիություն, միասնական մոտեցում և վերահսկողության արդյունավետություն:

Տեսչական մարմնի կողմից իրականացված վարչարարության արդյունքում գերբեռնված տրանսպորտային միջոցների նկատմամբ կայացված վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշումները չեն հանդիսանում վերջիններիս երթևեկությունը կանխարգելող գործիք, ինչը վկայում է այն մասին, որ առկա է նոր ենթաօրենսդրական ակտի մշակման անհրաժեշտություն, որի նորմերը կհստակեցնեն և կընդլայնեն գործիքակազմը՝ Տեսչական մարմնի վերահսկողական լիազորությունների արդյունավետ իրականացման համար:

Վերոնշյալ «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» օրենքի 6.6 հոդվածով նախատեսված իրավակարգավորումը պրակտիկայում կիրառելու նպատակով անհրաժեշտ է մշակել մասնատվող բեռներ փոխադրող ծանրաքաշ տրանսպորտային միջոցների բեռնաթափման կարգ, որը կսահմանի հետևյալ խնդիրների իրավական կարգավորումը՝ երթևեկությունը արգելող, բեռնաթափումը կազմակերպող և իրականացնող մարմնի (կամ անձի) իրավասությունները, բեռի պահպանման վայրերը և անվտանգության ապահովման սկզբունքները, բեռի հանձնման և ստացման ընթացակարգը, գործընթացին առնչվող այլ կարևոր հարցերը: Բեռնաթափման կարգի և դրանից բխող ընթացակարգերի առկայությունը հնարավորություն կտա Տեսչական մարմնին իրականացնել առավել արդյունավետ և նպատակաուղղված վերահսկողական գործառույթներ՝ ուղղված ավտոմոբիլային ճանապարհների անվտանգության ապահովմանը:

Օրենսգրքի 150.16 հոդվածի համաձայն՝ *Տրանսպորտի բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի վերահսկողական գործառույթների (բացառությամբ ստուգումների իրականացման գործառույթի) իրականացումը խոչընդոտելը կամ թույլ չտալը, ինչպես նաև այդ մարմնի*

պաշտոնատար անձանց կողմից տրված վարչական ակտերի (կարգադրագիր, ցուցում) պահանջները սահմանված ժամկետում չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝ առաջացնում են տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երեքհարյուրհիսնապատիկի չափով:

Տեսչական մարմինը, ծանրաքաշ տրանսպորտային միջոցների նկատմամբ վերահսկողական գործառույթներ իրականացնելիս, բազմիցս բախվում է այն խնդրին, որ տրանսպորտային միջոցները շարունակում են իրենց երթևեկությունը՝ շրջանցելով կշռման հենակետը, կամ, կանգ են առնում, սակայն հրաժարվում են կշռումից: Օրենսգրքի վերոհիշյալ նորմի տրամաբանությամբ Տեսչական մարմնին օրենսդրորեն վերապահված չէ տրանսպորտային միջոցները կանգնեցնելու, փաստաթղթեր պահանջելու և կշռումից խուսափելու դեպքերում պատասխանատվություն կիրառելու իրավասությունը: Տեսչական մարմնի աշխատակիցները նման իրավիճակներում ահազանգ են ներկայացնում ՀՀ Ոստիկանության պարեկային ծառայություն, սակայն պրակտիկայում դա չի հանդիսանում արդյունավետ միջոց տրանսպորտային միջոցների հայտնաբերման և կշռման ներկայացման համար: Վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա է անհրաժեշտություն մշակելու նոր օրենսդրական կարգավորումներ, որոնք կսահմանեն Տեսչական մարմնի աշխատակիցների համար այլ հստակ գործիքակազմ՝ նման իրավիճակները կարգավորելու և կանխարգելելու համար: Որպես այս խնդրի լուծումներից մեկը կարելի է դիտարկել կշռման հենակետերի տարածքում տեղադրված տեսանկարահանող սարքերի արձանագրած՝ կշռումից խուսափող տրանսպորտային միջոցների տվյալների օգտագործումը՝ մեքենաների հայտնաբերման և վարորդներին պատասխանատվության ենթարկման համար:

Տեսչական մարմնի վերահսկողական գործառույթների արդյունավետության բարձրացման համար էական նշանակություն ունի Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիների նկատմամբ նշանակված վարչական տույժերի վճարման մեխանիզմների մշակումը: Գործնականում, ՀՀ-ում նշված քաղաքացիների

գույքի կամ դրամական միջոցների բացակայության պարագայում, վարչական տույժերի հարկադիր կատարումը փաստացի անհնար է դառնում, ինչը հանգեցնում է իրավախախտումների կրկնմանը և վարչարարության կանխարգելիչ ազդեցության նվազմանը:

Տեսչական մարմնի կողմից 2025 թվականի ընթացքում Լիազոր մարմնին ներկայացվել է գրություն՝ համապատասխան իրավական կարգավորումներ կատարելու առաջարկով:

- ✓ «Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ և չվնասազերծված տարաներ փոխադրելու մասին» օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ *Վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառում տրանսպորտի բնագավառում քաղաքականությունը մշակող մարմինը՝ 1) մշակում և իրականացնում է իր բնագավառում պետական քաղաքականությունը, 2) իր լիազորությունների մասով մշակում է բնագավառը կարգավորող իրավական ակտերի նախագծեր, 4) վտանգավոր բեռներ փոխադրելու համար տալիս է թույլտվություն, իսկ մարդու համար ախտածին՝ 1-ին և 2-րդ խմբերի միկրոօրգանիզմներ փոխադրելու դեպքում՝ նախապես ստանալով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության համաձայնությունը, 5) համաձայնեցնում է վտանգավոր բեռներ փոխադրելու երթուղին Հայաստանի Հանրապետության ոստիկանության հետ, եթե երթուղին անցնում է Երևան քաղաքի վարչական տարածքով՝ նաև Երևանի քաղաքապետի հետ, 6) ապահովում է տեղեկությունների փոխանակումը շահագրգիռ գերատեսչությունների և կառույցների միջև, 7) իրականացնում է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ, 8) կազմակերպում է վտանգավոր բեռներ փոխադրելու որակավորման քննություններ հանձնելու և վտանգավոր բեռներ փոխադրելու՝ մասնագիտական վերապատրաստման վկայական տալու գործընթացը, 9) ապահովում է վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառում միջպետական համագործակցությունը:*

Նույն օրենքի 8.1 հոդվածի համաձայն՝ *Վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառում վերահսկողությունն իրականացնում է տրանսպորտի բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը: Տեսչական մարմնի լիազորություններ են՝ 1)վտանգավոր բեռների փոխադրումների պայմանների, այդ թվում՝ վտանգավոր բեռների փոխադրումներին վերաբերող աշխատանքների և ծառայությունների չափանիշների, ստանդարտների, նորմերի, կանոնների, պահանջների նկատմամբ պետական վերահսկողության ապահովումը, 2) իր լիազորությունների սահմաններում վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառում փոխադրման և անհրաժեշտ փաստաթղթերի համար սահմանված պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը, 3) օրենքով սահմանված այլ լիազորություններ*:

Վերոնշյալ իրավական կարգավորումների վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ Տեսչական մարմնի կողմից պետական վերահսկողության ապահովումը ենթադրում է վտանգավոր բեռների փոխադրումներին վերաբերող աշխատանքների և ծառայությունների համար սահմանված չափանիշների, ստանդարտների, նորմերի, կանոնների և պահանջների առկայություն, սակայն համապատասխան չափանիշների, ստանդարտների, նորմերի, կանոնների և պահանջների վերաբերյալ հստակ իրավական կարգավորումների բացակայության պայմաններում Տեսչական մարմնի կողմից նշված լիազորության իրականացումը փաստացի դառնում է անհնար:

Տեսչական մարմնի կողմից 2025 թվականի ընթացքում Լիազոր մարմնին ներկայացվել է գրություն՝ համապատասխան նորմատիվ իրավական ակտ մշակելու նպատակահարմարության վերաբերյալ:

<u>ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ</u>

- ✓ Տեսչական մարմնի կողմից 2025 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ ՔՏՄ/11.2.2/34156-25 գրությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահին առաջարկվել է վերանայել և փոփոխել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի նոյեմբերի 7-ի

թիվ 27-Ն հրամանի ընդհանուր դրույթներ բաժնի 31-րդ կետի պահանջները, այն է՝ անհատական բնակելի տներում (հաշվի առնելով նաև շենքի հարկայնությունը՝ 2 և ավելի) հաշմանդամություն ունեցող անձանց համար վերջիններիս շահագործումը մատչելի դարձնելու նպատակով տեխնիկական սարքեր և սարքավորումներ (վերելակներ, վերհան սարքեր, առանձնացված սանհանգույցներ թեքահարթակներ և այլն) նախատեսելու անհրաժեշտության վերաբերյալ.

- ✓ Կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի շինարարական աշխատանքների ավարտն ընդունող հանձնաժողովը ձևավորում և ղեկավարում է կառուցապատողը՝ համաձայն N 5 հավելվածի N 3-2-2 ձևի: Բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի ավարտական ակտին հաջորդող շահագործման թույլտվությունը տրամադրվում է իրավասու մարմնի կողմից, երբ առկա է լինում բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի ավարտված շինարարական օբյեկտի հաստատված նախագծին և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին համապատասխանությունը հավաստող մատակարար կազմակերպությունների, ինչպես նաև ինժեներատեխնոլոգիական սարքավորումների մոնտաժման և գործարկման աշխատանքների փորձարկումն իրականացրած կազմակերպությունների դրական եզրակացությունները: Շահագործման թույլտվության ձևակերպման ժամանակ Տեսչական մարմինը ներկա կարգավորումների համաձայն չի ընգրկվում շահագործման թույլտվության փաստագրման աշխատանքներին և հետևաբար չի իրականացնում հրդեհային անվտանգության նորմերի պահպանման մասով վերահսկողություն: Բազմաբնակարան շենքում հրդեհային անվտանգության համար պահանջվող միջոցառումների բացակայությունը բազմաբնակարան շենքի հետագա շահագործման ժամանակ կարող է հանգեցնել անդառնալի հետևանքների: Ելնելով վերոգրյալից Տեսչական մարմնի կողմից 2025 թվականի դեկտեմբերի 15-ին թիվ ՔՏՄ/11.2.2/34587-25 գրությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահին առաջարկվել է կատարել օրենսդրական փոփոխություն և բազմաբնակարան կամ

ստորաբաժանված շենքերի շահագործման թույլտվության փաստագրման աշխատանքներում ընդգրկել Տեսչական մարմնի աշխատակիցներին:

8. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2025 թվականին Տեսչական մարմնի պաշտոնական կայքում հրապարակվել է 82 հաղորդագրություն (2024-ին՝ 78, 2023-ին՝ 66), որից 34-ը հրդեհային և տեխնիկական անվտանգությանը, 11-ը քաղաքաշինությանը, 5-ական տրանսպորտի և հողօգտագործմանը, 1-ը էներգետիկայի և էներգասպառմանն առնչվող թեմաներով: 26 հաղորդագրություն վերաբերում է Տեսչական մարմնի աշխատանքային հանդիպումքննարկումներին, այցերին, ժողովներին: Ըստ տարիների հրապարակված հաղորդագրությունների քանակն ունի հետյալ պատկերը.



Հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի ղեկավարը, ղեկավարի տեղակալները, կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարները հարցազրույցներ են տվել, պարզաբանումներ ներկայացրել հեռուստաընկերություններին, ռադիոկայաններին, էլեկտրոնային լրատվամիջոցներին՝ ընդհանուր առմամբ 51 հրապարակում (նախորդ տարվա 58-ի և 2023-ի 137-ի փոխարեն): Դրանցից 6-ը վերաբերել է քաղաքաշինության, 42-ը՝ տեխնիկական և հրդեհային անվտանգության, 4-ը՝ տրանսպորտային անվտանգության բնագավառներին, իսկ 6-ը՝ ընդհանուր բնույթի: Տարվա ընթացքում տրամադրված 51 հրապարակումներից տպագիր և առցանց ԶԼՄ-երին է տրվել 25-ը, կազմակերպվել և իրականացվել է 19 հեռուստառեպորտաժ, 4 ուղիղ եթեր, 3 ռադիոելույթ:

2025 թվականի հունվարի 9-ին «ԱՐՄԵՆՊՐԵՍ» լրատվական գործակալության մամուլի կենտրոնում համատեղ ասուլիսով հանդես է եկել ՔՏՀԱ տեսչական մարմնի ղեկավար Գարեգին Խաչատրյանը: Ասուլիսի շրջանակում ՏՄ ղեկավարն ամփոփել է

նախորդ տարվա կատարված վերահսկողության արդյունքները. https://www.youtube.com/live/kYegNQmVG34?app=desktop&si=SVekFT0TLZBUDvOf&fbclid=IwY2xjawHtnsJleHRuA2FlbQIxMAABHbFRIho2ZttumsOPzNhX2Vg1QdIs3fDNbhMpK452sgS1NoqJ4RmJTUaniA_aem__FEJJAubJwOzVxSQurDZ7w

«Արմենպրես» լրատվական գործակալության ասուլիսից հատվածական, որորտային անդրադարձներ են կատարել Հանրային հ/ը, Թիվ 5 հ/ը, Ֆակտոր TV, Ազատություն ռադիոկայանը, Հանրային Ռադիոն, Free news հ/ը, Շանթ հ/ը: Ընդհանուր առմամբ մամուլի ասուլիսը տարածվել է շուրջ 34 լրատվամիջոցով և 5 հեռուստաընկերությամբ:

2025 թվականի ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ ՀՀ փոխվարչապետեր Տիգրան Խաչատրյանի, Միեր Գրիգորյանի հետ, ՀՀ Վարչապետի աշխատակազմի ղեկավարի հետ, ՀՀ Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի և տեսչական մարմինների ղեկավարների, ՀՀ կառավարության անդամների, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի, ՀՀ ներքին գործերի նախարարության ղեկավարների, ՀՀ հարկադիր կատարման ծառայության ներկայացուցիչների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավորապես՝ Կոտայքի, Արագածոտնի, Արարատի, Սյունիքի,Վայոց Ձորի, Գեղարքունիքի մարզերի ՏԻՄ ներկայացուցիչների, ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության Կոտայքի և Գեղարքունիքի մարզային վարչությունների, ՀՀ բնապահպանության և ընդերքի տեչական մարմնի ղեկավար կազմի հետ, ինչպես նաև խոշոր կառուցապատողների հետ:

2025 թվականի երրորդ եռամսյակում պարբերաբար հանդիպումներ են տեղի ունեցել ՀՀ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի և Տեսչական մարմնի ղեկավար Գարեգին Խաչատրյանի միջև, քննարկվել են քաղաքաշինության և տրանսպորտի անվտանգության ոլորտներին առնչվող անվտանգության կանոնների պահպանման վերաբերյալ հարցեր: ՀՀ քաղաքաշինության կոմիտեում ոլորտային հանդիպումներ են տեղի ունեցել Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Սուրեն Մինասյանի և Քաղաքաշինության կոմիտեի գործընկերների միջև: Հրդեհային և տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրության կարգավորման հարցերով պարբերաբար հանդիպումներ են կազմակերպվել Տեսչական մարմնի ղեկավար Գարեգին

Խաչատրյանի, ղեկավարի տեղակալ Արազ Պապիկյանի և ՀՀ փոխվարչապետ Միեր Գրիգորյանի հետ, ԱԺ տարբեր խմբակցությունների, մասնավարապես՝ ԱԺ տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության մշտական հանձնաժողովի հետ:

Լրատվամիջոցներից, անհատ լրագրողներից, ՀԿ-երից, այլ կառույցներից ստացվել է թվով 73 գրավոր հարցում (2024 թվականին՝ 61, 2023 թվականին՝ 59), որից 14-ը վերաբերում է հրդեհային և տեխնիկական անվտանգության, 8-ը՝ տրանսպորտի, 4-ը՝ քաղաքաշինության, 1-ն՝ էներգետիկայի և էներգասպառման բնագավառին: 46-ը եղել են Տեսչական մարմնի գործունեությանը վերաբերող ընհանուր բնույթի հարցումներ, որոնք բոլորը բավարարվել են: Ըստ տարիների հարցումների քանակն ունի հետյալ պատկերը.



2025 թվականին իրականացված մշտադիտարկման արդյունքում հավաքագրվել և արխիվավորվել է 547 լրատվական հրապարակում (2024 թվականին՝ 959, 2023 թվականին՝ 906): Դրանցից 89-ը (ընդհանուր քանակի 16,3%) վերաբերում են տրանսպորտի, 356-ը (ընդհանուր քանակի 65%)՝ տեխնիկական և հրդեհային անվտանգության, 82-ը (ընդհանուր քանակի 15%)՝ քաղաքաշինության, 1-ը (ընդհանուր քանակի 0,2%)՝ հողօգտագործման, 8-ը (ընդհանուր քանակի 1,5%)՝ էներգետիկայի բնագավառներին և 11-ը (ընդհանուր քանակի 2%)՝ ընդհանուր բնույթի: Լրատվամիջոցի հրապարակման հիման վրա տրվել է 1 պաշտոնական պարզաբանում և հայտարարություն, ինչպես նաև մասնագիտական քննության վերաբերյալ տեղեկատվական նյութերի տեղադրում utfsib.am կայքում՝ թվով 51 հայրատարություն:

Տեսչական մարմնի YouTube-յան պաշտոնական էջում տեղադրվել է 9 (2024 թվականին՝ 15) տեսանյութ: Լուսանկարներ բաժինը համալրվել է պաշտոնական հանդիպումների, այցերի վերաբերյալ 95 լուսանկարներով:

Տեսչական մարմնի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված էր 2025 թվականի ընթացքում կազմակերպել 19 հանդիպում Երևանում և բոլոր մարզերում, 2024 թվականի 15 հանդիպում Երևանում և բոլոր մարզերում: 2023 թվականին տեղի է ունեցել 11 հանդիպում:

2025 թվականի երկրորդ եռամսյակում տրվել է ընդհանուր բնույթի 1 իրազեկող հայտարարություն՝ ՔՏՀԱՏՄ գործունեության հասցեի փոփոխության վերաբերյալ. http://www.utfsib.am/post/more/851

Ստորև ներկայացվում է 2025 թվականին իրականացված խորհրդատվական և իրազեկող բնույթի աշխատանքներն ըստ բնագավառների:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է 12 հեռուստառադիոելույթ, տպագրվել է 28 հոդված, իրականացված մշտադիտարկման արդյունքում հավաքագրվել և արխիվավորվել է 356 լրատվական հրապարակում:

Ոլորտային անվտանգության կանոնների պահպանման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ Գործունեության տարեկան ծրագրով նախատեսված իրազեկող 8 հրապարակումների փոխարեն փաստացի պատրաստվել և հրապարակվել է 37-ը: Հրապարակումները վերաբերել են հասարակական նշանակության օբյեկտների և գազաբենզալցակայանների, նավթամթերքի պահեստարանների գործունեությունների դադարեցմանը:

2025 թվականի առաջին եռամսյակում հրապարակվել է 1 իրազեկող տեսանյութ, ևս 2 իրազեկող հոդված: Տեսանյութը ավարտված շինարարական օբյեկտի ընդունող հանձնաժողովի ակտի թվայնացված տարբերակի վերաբերյալ էր, իսկ իրազեկող հրապարակումները վերաբերում էին մեկը «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքում տեղի ունեցած

փոփոխություններնի և լրացումներին, մյուսը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատող տրանսպորտային միջոցների շահագործմանը:

Հրապարակումների հղումները ստորև՝

➢ ԻՐԱՋԵԿՈՒՄ՝ ավարտված շինարարական օբյեկտի ընդունող հանձնաժողովի ակտի թվայնացված տարբերակի վերաբերյալ

https://www.youtube.com/watch?v=OktBIs8vCXI

➢ ԻՐԱՋԵԿՈՒՄ՝ Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքում տեղի ունեցած փոփոխությունների և լրացումների մասին

https://www.utfsib.am/post/more/831

➢ ԻՐԱՋԵԿՈՒՄ՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատող տրանսպորտային միջոցների շահագործման վերաբերյալ

https://www.utfsib.am/post/more/839

➢ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ գազա-բենզալցակայանների տարածքում հրդեհային անվտանգության կանոնների պահպանման վերաբերյալ

https://www.utfsib.am/post/more/878

➢ ԻՐԱՋԵԿՈՒՄ՝ հեղուկ վառելանյութի լցավորման կայանների կառուցվածքի, անվտանգ շահագործման և հեղուկ վառելանյութի անվտանգ շրջանառության միասնական ու հստակ կանոնակարգման նոր պահանջների վերաբերյալ

https://www.utfsib.am/post/more/902

https://www.facebook.com/photo/?fbid=1101384095504063&set=a.186856583623490

➢ ԻՐԱՋԵԿՈՒՄ՝ հանրապետության տարածքում հրդեհների առաջացման ռիսկը նվազեցնելու վերաբերյալ

https://www.utfsib.am/post/more/874

https://www.youtube.com/watch?v=vni19zBUcxc

https://www.facebook.com/utfsib/videos/9454064104696436

Տեսանյութերի հղումները ստորև՝

- Հրդեհային անվտանգության կանոնների պահպանման վերաբերյալ իրազեկում՝ «Դեպի Ճամբար» մանկական ճամբարում
https://www.youtube.com/watch?v=4UqJD6gZesc
- ԻՐԱԶԵԿՈՒՄ՝ հրդեհային անվտանգության կանոնների պահպանման վերաբերյալ
https://www.youtube.com/watch?v=dcpr6doQ87k

2025 թվականի ընթացքում մարդկանց կյանքի և առողջության անվտանգության ապահովման, ինչպես նաև մանկական ժամանցի վայրերում ատրակցիոնների (կարուսելների) անվտանգ շահագործման կարևորությունից ելնելով՝ ՀՀ ներքին գործերի նախարարության նախաձեռնությամբ շահագրգիռ գերատեսչությունների և կազմակերպությունների մասնակցությամբ տեղի է ունեցել հանդիպում-քննարկում. http://www.utfsib.am/post/more/826

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱՍՊԱՌՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու ժամանակահատվածում գործունեության տարեկան ծրագրով Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում նախատեսված իրազեկող 4 հրապարակումների փոխարեն փաստացի պատրաստվել և հրապարակվել է պաշտոնական կայքում 1 իրազեկող բնույթի հրապարակում, իրականացված մշտադիտարկման արդյունքում հավաքագրվել և արխիվավորվել է 8 լրատվական հրապարակում: Ներկայացված նյութն է.

- ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնում տեղի ունեցավ հերթական մասնագիտական աշխատանքային քննարկում՝ մայրաքաղաքում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ կողմից էլեկտրահաղորդման ցանցերի վերակառուցման ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացվող ընթացիկ աշխատանքների վերաբերյալ
http://www.utfsib.am/post/more/832

Հաշվետու ժամանակահատվածում իրազեկման աշխատանքներ են իրականացվել նաև **մանկական ճամբարներում և հանրապետության մի շարք դպրոցներում**:

Մասնավորապես՝ Շիրակի տարածքային ստորաբաժանումը ԿԶՆԱԿ հիմնադրամի, ԿԳՄՍ նախարարության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից կազմակերպված «Անվտանգ և ապահով կրթական միջավայր» աշխատաժողովի շրջանակներում ներկայացվել է անվտանգության նորմերի բացատրության, ռիսկերի նվազեցման մեխանիզմներ և արտակարգ իրավիճակներում արձագանքման քայլերի վերաբերյալ դասընթաց: Տեսչական մարմնի Տավուշի, Շիրակի և Արագածոտնի տարածքային ստորաբաժանումները՝ տեխնիկական և հրդեհային անվտանգության վարչության, իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի, ինչպես նաև ռիսկի գնահատման և վերլուծության վարչության ներգրավմամբ իրականացրել են իրազեկման աշխատանքներ նշված մարզերի մի շարք դպրոցներում: Մասնավորապես՝ միջոցառումներ են անցկացվել ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի «Իջևանի Սպարտակ Սարգսյանի անվան թիվ 1 հիմնական դպրոցում», «Խաշթառակ գյուղի միջնակարգ» և «Դիտավան գյուղի հիմնական» դպրոցներում, ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 10 հիմնական», «Գյումրու թիվ 20 հիմնական» և «Գյումրու թիվ 28 հիմնական» դպրոցներում, ինչպես նաև ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի «Ներսես Աշտարակեցու անվան թիվ 1 հիմնական» և «Ապարանի ֆիզիկամաթեմատիկական ավագ դպրոց» ՊՈԱԿ-ներում, Լոռու մարզի Վանաձոր համայնքի Վահան Տերյանի անվան թիվ 5 ավագ դպրոց, վանաձորի Պարույր Սևակի անվան թիվ 30 ավագ դպրոց ՊՈԱԿ-Ներում, Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի թիվ 1 հիմնական, Վայքի թիվ 1 հիմնական դպրոցներում:

2025թ. ընթացքում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ գործակցությամբ կանխարգելիչ միջոցառումներ են իրականացվել տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում: Մասնավորապես՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցությամբ Երևանում, Լոռու, Կոտայքի, Արմավիրի, Տավուշ, Արագածոտնի, Արարատի, Վայոց ձոր, Շիրակի, Սյունիքի մարզերում գազա-բենզալցակայաններ են կապարակնքվել ու ապամոնտաժվել:

Պարբերաբար լուսաբանվել է ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի նիստերը՝ կապված Տեսչական մարմնի, ՀՀ ՆԳՆ Փրկարար ծառայության և այլ իրավասու մարմինների կողմից՝ անտառային հնարավոր հրդեհների կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների վերաբերյալ:

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Տեսչական մարմնի պաշտոնական կայքում 2025 թվականի ընթացքում ոլորտային անվտանգության կանոնների պահպանման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ գործունեության տարեկան ծրագրով նախատեսված իրազեկող 8 հրապարակումների փոխարեն փաստացի պատրաստվել և հրապարակվել է 9-ը: Իրականացվել է խորհրդատվական և իրազեկող բնույթի 5 ելույթ տարբեր հեռուստա և ռադիո ալիքներով, կազմակերպվել 2 հարցազրույց տպագիր և առցանց լրատվամիջոցներով: Լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքում արխիվավորվել է ոլորտի վերաբերյալ 89 լրատվական հրապարակում:

Իրականացվել է խորհրդատվական և իրազեկող բնույթի 3 ելույթ տարբեր հեռուստա և ռադիո ալիքներով, կազմակերպվել 1 հարցազրույց տպագիր և առցանց լրատվամիջոցներով: Լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքում արխիվավորվել է ոլորտի վերաբերյալ 134 լրատվական հրապարակում:

Տեսչական մարմինը իրազեկման աշխատանքներ է իրականացրել տարբեր հեռուստաընկերություններով: Մասնավորապես՝ Հանրային հեռուստաընկերությունը պարբերաբեր անդրադարձել է Տեսչական մարմնի տրանսպորտային անվտանգության բաժանմունքի կողմից «Զվարթնոց» օդանավակայանի տարածքում տաքսամոտորային ուղևորափոխադրումներ կատարողների նկատմամբ իրականացված խստացված վերահսկողությանը՝ մասնավորապես առանց լիցենզիայի ուղևորափոխադրումներ իրականացնող վարորդների նկատմամբ (https://utfsib.am/post/more/719):

Հեռուստատեսությամբ և նաև առցանց տպագիր մամուլում պարզաբանումներ և մեկնաբանություններ են տրվել նաև գերբեռնված տրասնպորտային միջոցների կշռման գործընթացի նկատմամբ իրականացվող վերահսկողական աշխատանքների մասով՝ https://hetq.am/hy/article/169707?fbclid=IwY2xjawFiFvdleHRuA2FIbQIxMQABHa4EYmYNKqI6

9DzJqbL63Ac-TMcLLrSLTAnoKSwm1qy7_W5VO-wbadWHEw_aem_xeoKcX8gIpDVd99Rt753iQ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի պաշտոնական կայքում հրապարակվել է 9 հաղորդագրություն: Կազմակերպվել է տպագիր և առցանց լրատվամիջոցներով 3 հարցազրույց, 4 հեռուստաելույթ/ռադիոելույթ: Լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքում արխիվավորվել է ոլորտի վերաբերյալ 82 լրատվական հրապարակում: Լուսաբանվել է պետական և սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում հանրապետության տարբեր մարզերի տարբեր քաղաքների 8 աշխատանքային այց:

Ոլորտային անվտանգության կանոնների պահպանման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ Գործունեության տարեկան ծրագրով պատրաստվել, հրապարակվել և տարածվել է իրազեկող 2 տեսանյութ և 2 իրազեկող հրապարակում՝ քաղաքաշինության բնագավառից: **Տեսանյութերի հղումները ստորև**.

- ԻՐԱԶԵԿՈՒՄ՝ ավարտված շինարարական օբյեկտի ընդունող հանձնաժողովի ակտի (ավարտական ակտ) թվայնացված տարբերակի վերաբերյալ
  https://www.utfsib.am/hy/contact
  https://www.facebook.com/photo/?fbid=915486050760536&set=pcb.915500007425807
- ԻՐԱԶԵԿՈՒՄ՝ շինարարական հրապարակներում պատշաճ կազմակերպման, կահավորման և անվտանգության կանոնների պահպանման վերաբերյալ
  https://www.utfsib.am/post/more/913
  https://www.facebook.com/photo?fbid=1118097040499435&set=pcb.1118101763832296
  Տեսանյութը տարածել են էլեկտրոնային 27 լրատվամիջոցներով:
- ՀԱՆԴԻՊՈՒՄ է տեղի ունեցել ՀՀ վարչապետի հետ և նրա գլխավորությամբ քննարկվել է քաղաքաշինության բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի իրագործման ընթացքը: Քննարկմանը ներկա է եղել ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմնի ղեկավար Գարեգին Խաչատրյանը.

https://www.utfsib.am/post/more/837,
https://www.facebook.com/armgovernment/posts/pfbid0y4WVUAmkmgn7iz2ZeiGsD6ZdF79ELz8AVsmwbJAF27GXh4bKVRrQAi7ftdjCnH3iI

Հարցազրույցներ են կազմակերպվել Երևանում և մարզերում ինքնակամ կառույցների ապամոնտաժման, պետական և սուբվենցիոն ծրագրերով իրականացվող շիարարական աշխատանքների նկատմամբ իրականացվող վերահսկողական աշխատանքների վերաբերյալ, մասնավորապես՝

- «Քաղաքաշինության ոլորտում 2024-ին իրականացվել է 1100-ից ավելի ստուգում. շուրջ 250-ի մասով հայտնաբերվել են խնդիրներ».
https://www.1lurer.am/hy/2025/01/10/1/1247501
- Հանրային հեռուստաընկերություն «Հիմնանորոգումից հետո փողոցը քանդել են, մալուխ անցկացրել. տեսչականի արձանագրությունները՝ Գյումրիում»
https://www.facebook.com/watch/?mibextid=wwXIfr&v=2690404561163726&rdid=CLqebTJN3prZs8a4
- Ազատություն ռադիոկայանին՝ «Գյումրիի փողոցները, որ ասֆալտապատվեցին, բայց մնացին քանդված»
https://www.youtube.com/watch?v=uRaNCrh2pKA
- «Շինարարական ընկերություններին ներկայացվել են մթնոլորտային օդի պահպանության նոր ստանդարտները»
https://www.facebook.com/reel/833077619234734
- Տեսչական մարմնի կողմից նախաձեռնվել է ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի, «Վի Իքս Սոֆթ» ՍՊ ընկերության հետ հանդիպում-քննարկում, որի շրջանակում քննարկվել է urban.e-gov.am թվային հարթակի միջոցով ավարտված շինարարական օբյեկտների շահագործման ընդունման ակտերի թվայնացման գործընթացի կազմակերպմանն առնչվող հարցեր
http://www.utfsib.am/post/more/816 :

ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմնի ղեկավար Գարեգին Խաչատրյանը, քաղաքաշինության ոլորտը համակարգող տեղակալ Սուրեն Մինասյանը հաշվետու տարվա ընթացքում բազմաթիվ այցեր են ունեցել տարբեր մարզեր, տեղում ծանոթացել իրականացվող պետական և սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքների որակին և դրանց համապատասխանությունը նախագծային պահանջներին: Այդպիսի այց է իրականացվել Լոռու մարզի Վանաձոր, Փամբակ և Ճոճկան համայնքներ- http://www.utfsib.am/post/more/898: Գարեգին Խաչատրյանը՝ ՏՄ ղեկավարի տեղակալներ Սուրեն Մինասյանի և Արազ Պապիկյանի ուղեկցությամբ, աշխատանքային այց է կատարել Արագածոտնի մարզի Ապարան համայնք և Շենավան բնակավայր՝ տեղում ուսումնասիրելու պետական ծրագրի շրջանակներում իրականացվող դպրոցների շինարարական աշխատանքների ընթացքը- http://www.utfsib.am/post/more/893:

Տեսչական մարմնի ղեկավարը՝ ՏՄ ղեկավարի տեղակալների, Տավուշի տարածքային ստորաբաժանման ղեկավարի պաշտոնակատարի և մարզային մասնագետների ուղեկցությամբ, աշխատանքային շրջայց է կատարել Տավուշի մարզի Իջևան համայնքի մի շարք բնակավայրերում՝ տեղում ուսումնասիրելու պետական ծրագրերով իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքը: http://www.utfsib.am/post/more/856, այնուհետև հաջորդ այցը և ուսումնացիրությունը եղել է սուբվենցիոն ծրագրերի շրջանակում Վանաձոր համայնքի «Վանաձոր քաղաքի թիվ 8 մանկապարտեզի» նոր մասնաշենքի կառուցման աշխատանքներին (1-ին և 2-րդ փուլերով), ինչպես նաև Գուգարք գյուղի մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցման շինարարության ընթացքին ծանոթանալը: Բացի այդ, այցելել են նաև Վանաձոր համայնքի Ուսանողական փողոց 7 հասցեում իրականացվող պետական ծրագրերով նախատեսված շինհրապարակներ: Մասնավորապես՝ ուսումնասիրվել են ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի և ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատվիրակմամբ իրականացվող «Վանաձորի Սոս Նալդռանյանի անվան թիվ 13 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի և «Վանաձորի Խաչատուր Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճների կառուցման աշխատանքները: Տեղում ուսումնասիրվել են նշված բոլոր օբյեկտների նախագծային փաստաթղթերը:

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ և ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Տեսչական մարմնի աշխատակիցների կողմից 2025 թվականին կատարված ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ ըստ անհրաժեշտության ստուգումների հետ միաժամանակ, համայնքների ղեկավարներին և համապատասխան բաժինների պաշտոնատար անձանց տրվել են ոլորտի հետ կապված իրենց հետաքրքրող հարցերի պատասխաններ, ինչպես նաև օրենսդրական պահանջներին վերաբերող խորհրդատվություններ: Հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի պաշտոնական կայքում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում հրապարակվել է 4 հաղորդագրություն, 1 իրազեկող հրապարակում և 1 իրազեկող տեսանյութ. **Հղումը ստորև՝**

- ԻՐԱԶԵԿՈՒՄ՝ ՀՀ հողային ֆոնդի՝ ըստ նպատակային և գործառնական նշանակության օգտագործման կարգի մասին
  https://www.utfsib.am/post/more/859
  https://www.facebook.com/photo/?fbid=1013879350921205&set=a.186856583623490

Տեսչական մարմինը վերահսկողություն է իրականացրել Վարդենիս խոշորացված համայնքի՝ համայնքային հողերի նկատմամբ (https://www.youtube.com/watch?v=2in4pYDaz1o): Միաժամանակ մշտադիտարկվել և արխիվավորվել է ոլորտին վերաբերող 1 լրատվական հրապարակում: Տպագիր և առցանց լրատվամիջոցներով ներկայացվել է 1 հարցազրույց.

- «Հողօգտագործման ոլորտում 2024-ին 11 համայնքում իրականացվել են ստուգումներ. հայտնաբերվել է 100-ից ավելի խախտում»
  https://www.1lurer.am/hy/2025/01/10/1/1247511

9. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

1. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքի համաձայն ստուգումները տնտեսավարողների մոտ պետք է իրականացվեն ստուգումների տարեկան ծրագրով, որը սահմանված կարգով հաստատվելուց հետո հրապարակվում է ստուգումներ իրականացնող մարմնի պաշտոնական կայքում՝ մինչև ստուգումներին նախորդող տարվա դեկտեմբերի 1-ը (հոդված 2.1): Գործնականում բազմաթիվ են այն դեպքերը, երբ ստուգման ենթակա (տարեկան ծրագրով նախատեսված) սուբյեկտի պաշտոնատար անձը, նախապես՝ Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջից տեղեկանալով ստուգման տարեկան ծրագրում ընդգրկված լինելու մասին կատարում է տնտեսավարող սուբյեկտի՝ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ, կազմակերպաիրավական և/կամ անվանման փոփոխություն, որի արդյունքում ոլորտային նույն ռիսկայնության աստիճան ունեցող տնտեսավարող արդեն նոր «սուբյեկտը» ստուգումների տվյալ տարվա ծրագրում չներառված է դառնում: Մեկ այլ դեպքում, ստուգման ենթակա սուբյեկտը քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա գործունեությունն իրականացնում է այլ անձին սեփականության կամ այլ իրավունքով պատկանող հասցե ունեցող օբյեկտում: Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի հունիսի 18-ի թիվ 595-Ն հրամանով հաստատված Հրդեհային անվտանգության կանոնների 6-րդ կետի պահանջի՝ «վարձակալված շենքերում տեղավորված օբյեկտներում հրդեհային անվտանգության ապահովումը կարգավորվում է վարձակալության պայմանագրով: Պայմանագրում նշված տեղեկությունների բացակայության դեպքում պատասխանատվությունը կրում է վարձատուն»: Պրակտիկայում հիմնականում հանդիպում են օբյեկտների շահագործման քաղաքացիաիրավական պայմանագրեր, որտեղ բացակայում է հրդեհային անվտանգության ապահովման պատասխանատու անձի ուղղակի նշումը: Այս փաստը հնարավորություն է տալիս օբյեկտը փաստացի շահագործողին «խուսափել»

անվտանգության ապահովման օրենսդրական պահանջների կատարումից: Անհրաժեշտություն է առաջանում լրացուցիչ իրավական պատշաճ ապահովումներ իրականացնել պայմանագրի մյուս կողմին հայտնաբերելու, ստուգման մասին նրան ծանուցելու, ստուգման ընթացքում նրա ներկայությունն ապահովելու համար: «Հրդեհային անվտանգության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ «Տեսչական մարմինը պետական կառավարման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, ինչպես նաև պաշտոնատար անձանց և քաղաքացիների կողմից հրդեհային անվտանգության ոլորտին առնչվող նորմատիվ իրավական ակտերի և փաստաթղթերի (այդ թվում՝ նորմատիվատեխնիկական) պահանջների կատարման նկատմամբ պետական հրդեհային հսկողություն և վերահսկողություն իրականացնելիս լիազորված է հրդեհային անվտանգության ոլորտին առնչվող նորմատիվ իրավական ակտերի և փաստաթղթերի (այդ թվում՝ նորմատիվատեխնիկական) պահանջների կատարման և խախտումների կանխարգելման ուղղությամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնելու նպատակով անցկացնելու տարածքների, շենքերի, կառույցների, շինությունների և այլ օբյեկտների հետազոտություններ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստուգումներ»: Այսինքն, ոլորտը կարգավորող օրենքը ստուգումները նախատեսում է իրականացնել օբյեկտներում, ոչ թե սուբյեկտների մոտ: Հրդեհատեխնիկական անվտանգության պահանջների ոլորտային օրենսդրության կարգավորման առարկան օբյեկտն է, որում տնտեսավարողը գործունեություն է իրականացնում՝ գնահատելով և կարևորելով այդ օբյեկտի ռիսկը հնարավոր վնասի առաջացման դեպքում: Իրավաբանական ձևակերպումների ձևի պահանջի պահպանումն իրականում առաջ է մղվում՝ հետ մղելով օբյեկտի անվտանգության ստուգման առավել կարևոր նյութական պահանջը:

2. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արտադրական վտանգավոր օբյեկտների դասակարգման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը: Սակայն մինչ օրս արտադրական վտանգավոր օբյեկտները դասակարգված չեն, և վտանգավորության

տարբեր աստիճանի օբյեկտների օրենքի խախտումով շահագործման դեպքում պատասխանատվության նույն միջոցի կիրառումն անհամաչափ վարչարարության ռիսկ է առաջացնում: Միաժամանակ ակնհայտ է, որ սառնարանի տեխնածին վթարի (այդ թվում՝ հրդեհի կամ պայթյունի) վտանգը և հնարավոր հետևանքները համեմատելի չեն բենզալցակայանի կամ պայթյունավտանգ նյութերի պահեստի (անգամ՝ փոքր) վթարի հետ:

3. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանվում է, որ ջերմային էներգիայի արտադրության, ջերմային էներգիայի ու բնական գազի հաղորդման (փոխադրման), բաշխման և սպառման համար նախատեսված գազային, ջերմային կարգավորիչ ու բաշխիչ հանգույցները դասվում են արտադրական վտանգավոր օբյեկտների շարքին:
Միևնույն ժամանակ նույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանվում է գործողության ոլորտը, համաձայն որի այն չի տարածվում էներգատեղակայանքների վրա, ինչը թույլ է տալիս տնտեսավարողներին խուսափել էներգատեղակայնքը փորձաքննության ներկայացնելուց և որպես արտադրական վտանգավոր օբյեկտ գրանցելուց:

4. Համակարգային խնդիր է հակահրդեհային միջտարածությունների ապահովման պահանջը (հատկապես՝ հեղուկ վառելիքի լցավորման կայանների պարագայում) այն դեպքերում, երբ գործող ԱԳԼՃԿ-ում կամ հեղուկ վառելիքի լցավորման կայանում պահանջվող միջտարածությունը պահպանված չէ և չկա նաև հնարավորություն խնդիրը շտկելու (տարածքային առումով): Վիճակագրությունը ցույց է տալիս, որ Տեսչական մարմնի կողմից ստուգված/հետազոտված
- 401 բենզալցակայաններից այս պահի դրությամբ առանց թերությունների շահագործվում է 90-ը, 51-ը դադարեցրել է գործունեությունը, իսկ խախտումներով շահագործվող 260 կայաններից 169-ը (65%) ունի մինչև իրեն չպատկանող այլ օբյեկտներ միջտարածության խնդիր,
- 456 գազալցակայաններից այս պահի դրությամբ առանց թերությունների շահագործվում է 132-ը, 31-ը դադարեցրել է գործունեությունը, իսկ խախտումներով

շահագործվող 324 կայաններից 163-ը (մոտ 50%) ունի մինչև իրեն չպատկանող այլ օբյեկտներ միջտարածության խնդիր:

5. Համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի «Վնասակար նյութերի սահմանաքանակները հաստատելու մասին» թիվ 182-Ն որոշման հավելվածի 92-րդ կետի՝ 100 կգ սելիտրան համարվում է արտադրական վտանգավոր օբյեկտ, ուստի ենթակա է արտադրական վտանգավոր օբյեկտների (այսուհետ՝ ԱՎՕ) ռեեստրում գրանցման, իսկ չգրանցելու դեպքում սահմանված է վարչական պատասխանատվություն՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով տուգանք, «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն: Հրդեհային անվտանգության ոլորտը համակարգող ՌԴ նորմատիվի *Федеральный закон от 21.07.1997 N 116-ФЗ (ред. от 11.06.2021) "О промышленной безопасности опасных производственных объектов"* համաձայն՝ պարարտանյութ սելիտրան ԱՎՕ է համարվում 200 տոննա չափը գերազանցելու դեպքում:

6. ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1925-Ն որոշմամբ հաստատված է այն կազմակերպությունների ցանկը, որոնցում, կախված հանրության և պետության համար կենսական նշանակությունից, ստուգում իրականացնող պետական մարմինների կողմից ստուգումներ, բացառության կարգով, կարող են իրականացվել վեց ամիսը մեկ անգամ: Ցանկում ներառված են 32 օբյեկտ և սուբյեկտ: Վերահսկողության արդյունքում պարզվել է, որ այնտեղ իրականացվում է ծաղիկների բացօթյա վաճառք և օբյեկտը հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսակետից վտանգավոր չէ: Միաժամանակ, ցանկում ներառված են «ՍԱՍ» և «ՍԻԹԻ» ՍՊ ընկերությունների ցանցերը, որոնք ունեն տարբեր մակերեսով խանութներ՝ փոքրերից մինչև առևտրի մեծ կենտրոններ: Մինչդեռ անվտանգության տեսակետից ավելի նպատակահարմար է առաջնորդվել օբյեկտների, այլ ոչ թե սուբյեկտների ռիսկայնության չափորոշիչներով:

7. «Հրդեհային անվտանգության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքում (ՀՕ-165-Ն) 20-րդ հոդվածը վերաշարադրվել է նոր խմբագրությամբ: Արդյունքում, անհրաժեշտ փոփոխությունների և լրացումների հետ մեկտեղ, հոդվածից դուրս է մնացել այն դրույթը, համաձայն որի «Անտառներում, ստորգետնյա հանքերում, երկաթուղային և օդային տրանսպորտում հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահպանման նկատմամբ պետական հսկողությունն իրականացնում է համապատասխան նախարարությունը, վարչությունը կամ գերատեսչությունը:»: Հրդեհային հսկողությունը անտառներում, ստորգետնյա հանքերում, երկաթուղային և օդային տրանսպորտում մշտապես իրականացվել է համապատասխան գերատեսչության կողմից: Ընդ որում, ոչ միայն տեսչական մարմնի (Տեսչություն՝ մինչև 2018 թվականը) սահմանափակ ռեսուրսի, այլև՝ նշված բնագավառներում առկա բազմաթիվ առանձնահատկությունների պատճառով:

8. ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի թիվ 71-Ն որոշման 3-րդ հավելվածով մի շարք ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնող լիազոր մարմին է սահմանվել Տեսչական մարմինը: Ռիսկի վրա հիմնված ստուգումներ իրականացնելու համար անհրաժեշտ են հաստատված ստուգաթերթեր և ռիսկի հաշվարկի մեթոդաբանություն: 2024 թվականի ընթացքում մշակվել են ստուգաթերթեր 3 տեխնիկական կանոնակարգով ստուգում կատարելու համար, որից երկուսը (018 և 042 ՏԿ) արդեն հաստատվել են ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 4-ի թիվ 21-Ն և օգոստոսի 8-ի թիվ 1248-Ն որոշումներով: Իրականացված չեն համապատասխան օրենսդրական փոփոխություններ Տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքների՝ արտադրության և շուկայահանման պահանջների անհամապատասխանության հայտնաբերման դեպքում Տեսչական մարմնի կողմից համապատասխան կարգադրագրերի տրամադրման, պատասխանատվության միջոցների կիրառման համար:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱՍՊԱՌՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

1. Առկա է անհամապատասխանություն «Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին» և «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքների միջև, ինչն իրավական խոչընդոտ է ստեղծում պատշաճ ստուգումներ իրականացնելու գործընթացում. մասնավորապես՝ առաջին օրենքով նախատեսվում է ստուգումներ անցկացնել օբյեկտներում, իսկ երկրորդով՝ միայն սուբյեկտներում:

2. ՀՀ տարածքում տեղակայված 6 կՎ և բարձր լարման էլեկտրաէներգետիկական և միջին ու բարձր ճնշման գազամատակարարման համակարգերում՝ տնտեսվարող սուբյեկտների դիմումների հիման վրա, նոր կառուցված և վերակառուցված էներգատեղակայանքներում 2025 թվականի 9 ամիսների ընթացքում իրականացվել է 1304 տեխնիկական ստուգում, որից 742-ը՝ (57%) էլեկտրաէներգետիկական և 562-ը՝ (43%) գազամատակարարման համակարգերում: Արդյունքում տրվել է 1000 գործարկման եզրակացություն, իսկ թվով 304 տեղակայանքների գործարկումներ՝ նախագծի և տեխնիկական կանոնակարգերի պահանջներին անհամապատասխանության, թերի շինարարական աշխատանքների և ներկայացված տեխնիկական փաստաթղթերի ոչ ամբողջականության համար, ակտ-կարգադրագրերով մերժվել են: Համաձայն «Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետի՝ գործարկման եզրակացությունները տրամադրվում են տեխնիկական ստուգման արդյունքում, որը պետք է իրականացվի «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքի համաձայն: Սակայն ստուգումը փաստաթղթերի քանակի և ժամկետների տեսակետից գերծանրաբեռնված գործընթաց է, որին մի կողմից Տեսչական մարմնի ներուժը չի բավարարում, մյուս կողմից՝ այն չի բխում տնտեսավարողների շահերից և, հետևաբար, տեղակայանքից օգտվող սպառողների:

1. ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 1-ի «6 կՎ և բարձր լարման նոր կառուցվող և վերակառուցվող էլեկտրատեղակայանքների գործարկման եզրակացություն տալու կարգի մասին» թիվ 739-Ն և 5 հոկտեմբերի 2006 թվականի «Միջին ու բարձր ճնշման գազի համակարգերի՝ նոր կառուցվող և վերակառուցվող էներգատեղակայանքների գործարկման եզրակացություն տալու կարգը հաստատելու մասին» թիվ 1423-Ն որոշումներով սահմանված որոշ գործառույթների իրականացման ժամանակ Տեսչական մարմինն առնչվում է քաղաքաշինության բնագավառին վերաբերող խնդրի, այն է՝ ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 596-Ն որոշման մեջ հստակ դասակարգված չեն էներգատեղակայանքներն ըստ ռիսկայնության կատեգորիաների և, հետևաբար, հնարավոր չի պարզել, ինչպիսի փորձաքննության են ենթակա նախագծերը: Միաժամանակ անհրաժեշտ է նախատեսել փոփոխություններ և լրացումներ նաև 739-Ն և 1423-Ն որոշումների մեջ, ինչը կնպաստի նոր կառուցված և վերակառուցված էներգատեղակայանքների առավել անվտանգ շահագործմանը:

2. ՀՀ կառավարության 2007 թվականի ապրիլի 17-ի «Էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների դասակարգումը, դրանց մասնագիտական քննությունն իրականացնելու կարգը» հաստատելու մասին թիվ 580-Ն որոշման մեջ առկա են որոշակի պահանջներ, որոնք տարընթերցման և տարաբնույթ մեկնաբանության տեղիք են տալիս, ինչը խոչընդոտում է պատահարների պատշաճ մասնագիտական քննություն իրականացնելու գործընթացը:

3. ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգում 2023 թվականին ձմեռային ժամանակաշրջանում օրվա միջին սպառման հզորությունը կազմել է 621 ՄՎտ (գիշերային ժամերին) - 1320 ՄՎտ (ցերեկը), իսկ ամառային ժամանակաշրջանում՝ 485 ՄՎտ - 1172 ՄՎտ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ էլեկտրաէներգիան հնարավոր չէ կուտակել, արտադրված էներգիան պետք է համարժեք լինի տվյալ պահին սպառվող էլեկտրաէներգիային, այլապես կառաջանան վթարային վիճակներ (լարման և

հաճախականության տատանումներ) և կպարալիզացվի էլեկտրաէներգետիկական համակարգը:

Տվյալ խնդիրը կարգավորվում է էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի կողմից, ով ըստ անհրաժեշտության հրահանգում է կայաններին ավելացնել կամ պակասեցնել արտադրվող էլեկտրաէներգիան՝ սպառման ծավալներին համապատասխանեցնելու համար: Նշված հրահանգները տրվում են արտադրող կայաններին՝ ատոմակայանին, ՋԷԿ-երին, խոշոր ՀԷԿ-երին՝ ավելացնելու կամ պակասեցնելու արտադրվող հզորությունները, հիմք ընդունելով ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգում գործող կանոնները: Իսկ արևային կայանների համար տվյալ կանոններով որևէ նորմ կամ պահանջ սահմանված չէ, ինչը իրավունք չի տալիս օպերատորին ռեժիմները կարգավորելու ժամանակ ըստ անհրաժեշտության նման հրահանգներ տալ նաև արևային կայաններին: Արդյունքում ռեժիմների կարգավորումն իրականացվում է այլ արտադրող կայանների հզորությունների իջեցման կամ բարձրացման հաշվին, իսկ արևային կայանները մշտապես մնում են համակարգում՝ ստեղծելով անհավասար պայմաններ արտադրող կայանների միջև:

Էլեկտրաէներգիան տեղափոխելու համար բոլոր արտադրող կայանները արտադրում են ակտիվ և ռեակտիվ էներգիա, իսկ արևային կայանների համար իրավական ակտերի բացակայության պատճառով ռեակտիվ էներգիա արտադրելու որևէ պահանջ նույնպես սահմանված չէ, նրանց կողմից արտադրվում է միայն ակտիվ էներգիա և այն տեղափոխվում է այլ կայանների կողմից արտադրված ռեակտիվ էներգիայի միջոցով, արդյունքում համակարգում երբեմն առաջանում է ռեակտիվ էներգիայի դեֆիցիտ, հանդիսանալով պատահարի պատճառ:

Վերականգնվող էներգիայի, այդ թվում՝ արևային կայանների, աննախադեպ աճը կարևոր դեր է կատարում ՀՀ էներգետիկ անվտանգության բնագավառում, սակայն արդեն փաստացի տեղակայված կայանների հզորությունը որոշակի խնդիրներ է ստեղծում էլեկտրաէներգետիկական համակարգի ռեժիմների կարգավորման ժամանակ՝ ՀՀ-ում տվյալ բնագավառը կարգավորող նորմատիվ-իրավական ակտերի (ԳՕՍՏ-եր, նախագծային, շահագործման, կարգաբերման, կարգավարական և այլն) բացակայության պատճառով:

4. Քաղաքացիներից, էներգետիկական համակարգում գործունեություն իրականացնող անձանցից և սպառողներից ստացված բողոքների զգալի մասն առնչվում է էներգետիկայի բնագավառի էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման համակարգերի օբյեկտների (կառույցների, տեղակայանքների, կապի, հաղորդման (փոխադրման) ու բաշխման գծերի և այլն) անվտանգության գոտիների խախտումներին: Վերլուծությունից պարզվել է, որ արձանագրված խախտումների պատճառը պետական, համայնքային կամ մասնավոր սեփականություն հանդիսացող հողամասերի վրա՝ անվտանգության գոտիներում, ինքնակամ կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրված թույտվությունների հիման վրա էներգատեղակայանքների, շենքերի և շինությունների կառուցումն է, ինչը կարող է հանգեցնել մարդկանց կյանքին, գույքին և շրջակա միջավայրի վնասի պատճառման դեպքերի:

5. Հայաստանի էլեկտրական ցանցերի սեփականաշնորհման ժամանակ որոշակի 6, 10, և 0.4 կՎ էլեկտրատեղակայանքներ չեն ներառվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հաշվեկշռում, ինչի հետևանքով ընկերությունը պատասխանատվություն չի կրում դրանց տեխնիկական վիճակի համար, սակայն դրանք օգտագործվում են ընկերության կողմից իր սպառողներին (բաժանորդներին) էլեկտրաէներգիա մատակարարելու համար: Իրավական ակտերով սահմանված կարգով չեն իրականացվում դրանց տեխնիկական սպասարկման, պլանային նորոգման, էներգահամակարգի հարաչափերին չհամապատասխանող սարքավորումների վերականգնման, արդիականացման կամ փոխարինման աշխատանքները, ինչը մեծ ռիսկեր է պարունակում՝ սպառնալով մարդկանց կյանքին, գույքին և շրջակա միջավայրին, ինպես նաև պատճառ են հանդիսանում հոսանքահարման մահացու ելքով պատահարների:

6. ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1925-Ն որոշմամբ հաստատված է այն կազմակերպությունների ցանկը որոնցում, կախված հանրության և պետության համար կենսական նշանակությունից ստուգում իրականացնող պետական մարմինների կողմից ստուգումներ, բացառության կարգով, կարող են իրականացվել վեց

ամիսը մեկ անգամ: Ցանկում ներառված չեն «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերությունները և այլ էներգետիկայի տեսակետից վտանգավոր օբյեկտներ:

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ

1. Երկաթուղային տրանսպորտով փոխադրման գործընթացի հետ կապված տեխնիկական միջոցների շահագործման և երթևեկության ոլորտում ռիսկայնությունը կապված է երկաթուղային տրանսպորտի շահագործման և երթևեկության անվտանգության կանոնների խախտումների հետ: Տվյալ ոլորտում վերահսկողական միջոցառումներ չեն իրականացվել ստուգաթերթերի և մեթոդաբանության բացակայության պատճառով:

2. 2022 թվականի օգոստոսի 4-ից ուժի մեջ է մտել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության ստուգման ստուգաթերթը, սակայն մինչ օրս չի հաստատվել դրանց ռիսկայնության հաշվարկի մեթոդաբանությունը, ինչի հետևանքով տվյալ ոլորտում Տարեկան ծրագրով ստուգումներ չեն նախատեսվում:

3. Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական զննության անցկացման կայանների գործունեության ռիսկերն ուղղակիորեն կապված են տրանսպորտային միջոցների շահագործման և փոխադրումների իրականացման անվտանգության կանոնների խախտումների հետ: Սակայն պլանային ստուգումներ չեն իրականացվում ռիսկայնության հաշվարկի մեթոդաբանության բացակայության պատճառով:

4. «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 6.6-րդ մասի համաձայն՝ մասնատվող բեռներ փոխադրող ծանրաքաշ տրանսպորտային միջոցների երթևեկությունը Հայաստանի Հանրապետության տարածքում թույլատրվում է միայն

դրանց ավել բեռի բեռնաթափումից հետո: Սակայն այդ պահանջը հնարավոր չէ ապահովել ծանրաքաշ տրանսպորտային միջոցների թույլատրելի առավելագույն զանգվածը գերազանցող բեռի բեռնաթափման և բեռների պահման կարգի բացակայության պատճառով:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

1. ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն VII գլխի 138-րդ կետը սահմանում է, որ «Կառուցված շինության (այդ թվում՝ վերակառուցված, վերականգնված, ուժեղացված, արդիականացված, ընդլայնված) շինարարական աշխատանքների իրականացման ավարտը և, ըստ գործառնական նշանակության, շահագործման ընդունումը, բացառությամբ սույն կարգի 23.1-ին կետով սահմանված շինարարական աշխատանքների, փաստագրվում են ավարտական ակտով (շահագործման թույլտվությամբ)՝ համաձայն N 5 հավելվածի N 3-1 ձևի, հաստատված նախագծով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող բոլոր շինարարական-մոնտաժային աշխատանքներն իրականացվելուց և օրենքով ու սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան կապալառուի կողմից ավարտված շինարարական օբյեկտը կառուցապատողին հանձնելուց և կառուցապատողի կողմից այն ընդունվելուց հետո»: Իսկ նույն որոշման հավելված 4-ի ցանկ 1-ով սահմանում են այն շինարարական աշխատանքները, որոնք համարվում են առաջին ռիսկայնության աստիճանի և չեն պահանջում շինարարության թույլտվություն: Ավարտական ակտ ստանալու նպատակով ձևավորվող ընդունող հանձնաժողովի կազմում աշխատանքներ իրականացնելիս՝ Տեսչական մարմնի մասնագետների կողմից արձանագրվում են բազմաթիվ դեպքեր, երբ առանց ընդհանուր օգտագործման տարածքների բարեկարգման և հարդարման աշխատանքների իրականացված են հրդեհային անվտանգության միջոցառումներ, որը Տեսչական մարմնի դիտարկմամբ իրականացվում է ընդունող հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն ստանալու նպատակով:

2. Պետական սուբվենցիոն ծրագրերի շրջանակում իրականացվող շինարարական աշխատանքների նկատմամբ Տեսչական մարմնի կողմից այդ ծրագրերի իրականացման

ամբողջ ժամանակահատվածում իրականացվում է վերահսկողություն, որի արդյունքում Տեսչական մարմնի կողմից արձանագրվում են դեպքեր, երբ կապալառու կազմակերպությունը շեղվելով հաստատված նախագծից չի իրականացրել կամ թերի է իրականացրել շենքի կոնստրուկտիվ համակարգին վերաբերվող հանգույցը, ինչը հետագայում կարող է ազդել կառուցված շենք շինությունների սեյսմակայունության վրա: Սակայն վարչական վարույթի ընթացքում կապալառու կազմակերպության կողմից տրամադրվում է դրական փորձագիտական եզրակացություն այն մասին, որ կապալառու կազմակերպության կողմից թույլ տրված խախտումը չի ազդում կառուցված կառույցի սեյսմակայունության և հուսալիության վրա: Փաստորեն առաջանում է կրկնակի փորձաքննության անհրաժեշտություն: Նմանատիպ խնդիր առաջանում է նաև ընդունող հանձնաժողովի կազմում Տեսչական մարմնի մասնագետների կողմից աշխատանքեր իրականացնելու ժամանակ, երբ կառույցի ծածկված աշխատանքների ակտերի բացակայության դեպքում կառուցապատողը Տեսչական մարմին է ներկայացնում շենքի վիճակի մասին դրական տեխնիկական եզրակացություն:

3. քաղաքաշինության բնագավառում ստուգումները դեպի առավել ռիսկային օբյեկտներ նպատակաուղղելու համար ՀՀ կառավարության 28 նոյեմբերի 2019 թվականի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին թիվ 1697-ն որոշմամբ սահմանվել են քաղաքաշինական օբյեկտների ռիսկայնության հաշվարկի չափորոշիչներ: Պահանջվող տեղեկատվությունը հնարավոր է ստանալ միայն շինթույլտվությունից, եթե այդ տեղեկատվությունը ներառված է շինթույլտվության մեջ: Սակայն հիմնականում շինթույլտվությունների մեջ բացակայում են վերը նշված տվյալները, ինչի հետևանքով անհնարին է իրականացնել ռիսկի հաշվարկ պահանջվող ձևաչափով:

10. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Տեսչական մարմոi կատարողականի գնահատման աշխատանքները կատարվել են ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-254-Ն օրենքի 11-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի «Տեսչական մարմինների գործունեության կատարողականի գնահատման սկզբունքները, չափորոշիչները և կարգը հաստատելու մասին» թիվ 693-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները և հաշվի առնելով Տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 18 որոշմամբ հաստատված «ՀՀ Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատման մեթոդաբանությունը»:

Տեսչական մարմնի կատարողականի գնահատման չափորոշիչներն են՝

1. նպատակի չափորոշիչներ,
2. գործընթացի չափորոշիչներ,
3. արդյունքի չափորոշիչներ:

1. ՆՊԱՏԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

1.1) ***Տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակը*** գնահատելու համար յուրաքանչյուր ոլորտի համար վերլուծվել է հաշվետու ժամանակահատվածում տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների ընդհանուր կշիռը:

Տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակի գնահատումը կատարվում է հաշվետու ժամանակահատվածում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումարի և վերահսկողության ընթացքում նախատեսված ստուգաթերթերի ընդհանուր կշիռների հանրագումարի հարաբերությամբ:

Այսպիսով, 2025 թվականին Տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակը ***0.21*** է. ցուցանիշը 2024 թվականին եղել է ***0.20:***

Ոլորտ	1.1. Տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակը		
	S1- հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումար	S-ստուգաթերթերով սահմանված կշիռների գումար	$L = S_1/S$
Տեխնիկական և հրդեհային անվտանգության	8631	35733	***0.241541432***
Էներգետիկայի	8342	12210	***0.683210483***
Տրանսպորտի	326	1515	***0.215181518***
Քաղաքաշինության	1832	42516	***0.04308966***

Տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հաշվետու ժամանակաշրջանում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների ամենացածր ցուցանիշը արձանագրվել է քաղաքաշինության ոլորտում, իսկ ամենաբարձր ցուցանիշը էներգետիկայի ոլորտում:

Պատկերն ըստ ոլորտների՝



*

	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ	
		2024թ.	2025թ.
1	Տեխնիկական և հրդեհային անվտանգության	0.22	0.24
2	Էներգետիկայի	0.6	0.68
3	Տրանսպորտի անվտանգության	0.16	0.24
4	Քաղաքաշինության	0.04	0.04

Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտում իրականացվող ստուգումները և վերահսկողությունը չեն կարգավորվում «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքով. Վերոգրյալ գործառույթների իրականացումը կարգավորվում է «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին», «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» օրենքներով. ուստի ոլորտի ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայության և գնահատման հաշվարկ չի կատարվել:

1.2) ***Ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը*** գնահատելու համար վերլուծվել է հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի կողմից ոլորտի առավել ռիսկային բնագավառներում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների ընդհանուր կշիռը:

Ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը գնահատվում է հաշվետու ժամանակահատվածում ոլորտի առավել ռիսկային բնագավառներում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումարի և վերահսկողության ընթացքում նախատեսված ստուգաթերթերի ընդհանուր կշիռների հանրագումարի հարաբերությամբ:

2025 թվականին Տեսչական մարմնի ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը ***0.23*** է. ցուցանիշը 2024 թվականին եղել է ***0.22***:

Ոլորտ	1.2. Ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը		
	SR – հաշվետու ժամանակահատվածում ոլորտի բարձր ռիսկային բնագավառներում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումար	S– վերահսկողության արդյունքում ստուգաթերթերով սահմանված կշիռների գումար	C = SR/S
Տեխնիկական և հրդեհային անվտանգության	8250	33967	0.242882798
Էներգետիկայի	8342	12210	0.683210483
Տրանսպորտի	267	1110	0.240540541
Քաղաքաշինության	1101	31561	0.034884826

Տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հաշվետու ժամանակաշրջանում առավել բարձր ռիսկային տնտեսավարողների մոտ իրականացված ստուգումների արդյունքում խախտումների ամենացածր ցուցանիշը արձանագրվել է քաղաքաշինության ոլորտում, իսկ ամենաբարձր ցուցանիշը կրկին էներգետիկայի ոլորտում: *Պատկերն ըստ ոլորտների՝*



	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ	
		2024թ.	2025թ.
1	Տեխնիկական և հրդեհային անվտանգության	0.24	0.24
2	Էներգետիկայի	0.61	0.68
3	Տրանսպորտի	0.16	0.24
4	Քաղաքաշինության	0.04	0.03

1.3) ***Ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները.***

2024 թվականին ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար աշխատանքներն իրականացրել են Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչության հաստիքացուցակով նախատեսված 7 աշխատակիցներից 6-ը՝ մեկ հաստիքը թափուր է դարձել 12.12.2022թ.-ին և դեռևս չի համալրվել:

Ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար լրացուցիչ ֆինանսական միջոցներ և մարդկային ռեսուրսներ չեն հատկացվել:

1.4) ***Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները.***

Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցառումներն իրականացվել են համապատասխան ոլորտային ստորաբաժանումների, ինչպես նաև իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի աշխատակիցների միջոցով:

Բաժնի 5 հաստիքներից համալրված է 2-ը, բաժնի աշխատանքների իրականացմանը ներգրավված է նաև 1 փորձագետ:

Հաշվետու ժամանակաշրջանում Տեսչական մարմնի գործունեության տարեկան նախատեսված միջոցառումները կատարվել են 93 %-ով, 2024 թվականին՝ 88%-ով:

Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար Տեսչական մարմնի կողմից ֆինանսական լրացուցիչ միջոցներ չեն հատկացվել:

1.5) ***Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ համապատասխան ոլորտների քաղաքականություն մշակող պետական մարմիններին ներկայացված առաջարկների քանակը.***

Հաշվետու եռամսյակի ավարտի դրությամբ Տեսչական մարմնի կողմից մշակվել է թվով 11 օրենսդրական առաջարկ՝ տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտում՝ 3, տրանսպորտի՝ 5, քաղաքաշինության՝ 3 և ընդհանրական՝ 1, որոնցից 3-ը՝ տարեկան ծրագրի շրջանակներում, 9-ը՝ Տեսչական մարմնի նախաձեռնությամբ:

2. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

2.1) Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների միջին տևողությունը գնահատելու համար վերլուծվել է հաշվետու ժամանակահատվածում տարեկան ծրագրով չնախատեսված, սակայն Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների միջին տևողությունը:

2025 թվականին Տեսչական մարմնի կողմից ըստ անհրաժեշտության իրականացրած ստուգումների միջին տևողությունը ***2.65*** օր է. ցուցանիշը 2024 թվականին եղել է ***2.48***:

Ոլորտ	2.1. Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների միջին տևողությունը		
	T – ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընթացքում ստուգման գործընթացի ընդհանուր տևողություն	N – ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակ	R = T/N
Տեխնիկական և հրդեհային անվտանգության	3	1	***3***
Էներգետիկայի	3	1	***3***
Տրանսպորտի	99	34	***2.911764706***
Քաղաքաշինության	31	16	***1.9375***
Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման	28	10	***2.8***

Տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հաշվետու ժամանակաշրջանում ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընթացքում ստուգման գործընթացի ընդհանուր տևողության ամենաբարձր ցուցանիշը արձանագրվել է էներգետիկայի և տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտներում: *Համեմատական պատկերն ըստ ոլորտների՝*



	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ	
		2024թ.	2025թ.
1	Տեխնիկական և հրդեհային անվտանգության	2.38	3
2	Էներգետիկայի	0	3
3	Տրանսպորտի	3	2.9
4	Քաղաքաշինության	2.08	1.9
5	Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման	4.4	2.8

2.2) Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակը՝ ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ չափորոշչի գնահատման համար վերլուծվել է բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում հաշվետու ժամանակահատվածում կատարված ստուգումների քանակի և Տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրում նույն ժամանակահատվածում ընդգրկված և իրականացված ստուգումների քանակի հարաբերությունը:

2025 թվականին բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակը՝ ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ ***0.87 է***: ցուցանիշը 2024 թվականին եղել է ***0.82*** :

Ոլորտ	**2.2. Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակը՝ ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ**		
	N2– բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակ	**N1– ստուգումների տարեկան ծրագրով հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված և իրականացված ստուգումների ընդհանուր քանակ**	**R= N2/N1**
Տեխնիկական և հրդեհային անվտանգության	153	160	***0.95625***
Էներգետիկայի	115	115	***1***
Տրանսպորտի	14	19	***0.736842105***
Քաղաքաշինության	129	176	***0.732954545***

Տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հաշվետու ժամանակաշրջանում ստուգումների գերակշիռ մասը նախատեսվել և իրանացվել են առավել բարձր ռիսկայնություն ունեցող տնտեսավարողների մոտ: *Պատկերն ըստ ոլորտների՝*



	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ	
		2024թ.	2025թ.
1	Տեխնիկական և հրդեհային անվտանգության	0.72	0.96
2	Էներգետիկայի	1	1
3	Տրանսպորտի	0.7	0.74
4	Քաղաքաշինության	0.82	0.73

2.3) Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների միջին տևողությունը հաշվարկվել է ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների ընդհանուր տևողության և դրանց քանակի հարաբերությամբ:

2025 թվականին ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների միջին տևողությունը կազմել է ***3.5*** օր. ցուցանիշը 2024 թվականին եղել է ***3.51***:

Ոլորտ	2.3. Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների միջին տևողությունը		
	T - ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և իրականացված ստուգումների ընդհանուր տևողություն	N – ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և իրականացված ստուգումների քանակ	A = T/N

Տեխնիկական և հրդեհային անվտանգության	489	160	***3.05625***
Էներգետիկայի	366	115	***3.182608696***
Տրանսպորտի	40	19	***2.105263158***
Քաղաքաշինության	721	176	***4.096590909***
Պետ և տեղ նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման	58	8	***7.25***

Տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հաշվետու ժամանակաշրջանում ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների ընթացքում ստուգման գործընթացի ընդհանուր տևողություն ամենամեծ ցուցանիշը արձանագրվել է պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտում, իսկ ամենացածր ցուցանիշները տրանսպորտի ոլորտում:

Պատկերն ըստ ոլորտների՝



	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ	
		2024թ.	**2025թ.**
1	Տեխնիկական և հրդեհային անվտանգության	2.97	3.06
2	Էներգետիկայի	3.2	3.18
3	Տրանսպորտի	2.2	2.1
4	Քաղաքաշինության	4.38	4.1
5	Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման	8	7.25

2.4) ***Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակի (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ) հարաբերակցությունն ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակին.***

2025 թվականին Տեսչական մարմնի կողմից ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակը (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ) ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և իրականացված ստուգումների ընդհանուր քանակին ***0.1*** է. ցուցանիշը 2024 թվականին եղել է ***0.5***:

Ոլորտ	2.4. Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակի (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ) հարաբերակցությունը ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակին		
	N2– ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակ (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ)	N1 -ստուգումների տարեկան ծրագրով հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված և իրականացված ստուգումների ընդհանուր քանակ	R = N2/N1
Տեխնիկական և հրդեհային անվտանգության	1	160	***0.00625***
Էներգետիկայի	1	115	***0.008695652***
Տրանսպորտի	27	19	***1.421052632***
Քաղաքաշինության	13	176	***0.073863636***
Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման	8	8	***1***

Տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հաշվետու ժամանակաշրջանում ամենաբարձր ցուցանիշը արձանագրվել է տրանսպորտի ոլորտում, ինչը պայմանավորված է ոլորտում ըստ անհրաժեշտության ստուգումների քանակի աճով:

Պատկերն ըստ ոլորտների՝



	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ	
		2024թ.	2025թ.
1	Տեխնիկական և հրդեհային անվտանգության	0.38	0.006
2	Էներգետիկայի	0	0.009
3	Տրանսպորտի	0	1.42
4	Քաղաքաշինության	0.48	0.07
5	Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման	0.6	1

2.5) Ստուգման ենթարկված օբյեկտների բավարարվածության աստիճանը տեսչական մարմնի աշխատանքների անաչառությունից, ընթացակարգերի թափանցիկությունից, տեղեկատվության որակից և տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժությունից.

Չափորոշչի գնահատումը կատարվել է հիմք ընդունելով նշված հարցերի վերաբերյալ ստացված դիմում-բողոքները: 2025 և 2024 թվականների ընթացքում նշված հարցերի վերաբերյալ տեսչական մարմնի դեմ դիմում-բողոքներ չեն ներկայացվել:

3. ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

3.1) ***Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակական հարաբերությունը.***

2025 թվականին ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակական հարաբերությունը ***0.13*** է ցուցանիշը 2024 թվականին եղել է ***0.11***:

Ոլորտ	3.1. Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակական հարաբերակցությունը		
	N2 – ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակ	N1– ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և իրականացված ստուգումների ընդհանուր քանակ	R = N2/N1
Տեխնիկական և հրդեհային անվտանգության	1	160	***0.00625***
Էներգետիկայի	1	115	***0.008695652***
Տրանսպորտի	34	19	***1.789473684***
Քաղաքաշինության	16	176	***0.090909091***
Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման	10	8	***1.25***

Տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հաշվետու ժամանակաշրջանում ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ամենամեծ ցուցանիշը արձանագրվել է տրանսպորտի ոլորտում: *Պատկերն ըստ ոլորտների՝*



	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ	
		2024թ.	2025թ.
1	Տեխնիկական և հրդեհային անվտանգության	0.07	0.006
2	Էներգետիկայի	0	0.009
3	Տրանսպորտի	0.1	1.8
4	Քաղաքաշինության	0.2	0.09
5	Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման	1.25	1.25

3.2) Տեսչական մարմնի վերահսկման բարձր ռիսկային բնագավառներում իրավիճակի փոփոխությունը.

Չափորոշչի գնահատման համար հիմք է հանդիսանում վերահսկողության արդյունքում բարձր ռիսկային բնագավառների տնտեսվարող սուբյեկտների ռիսկայնության փոփոխությունը: Չափորոշչի գնահատումը կատարվում է տարեկան մեկ անգամ: Տրամադրված տեղեկատվության համաձայն բարձր ռիսկային բնագավառների տնտեսվարող սուբյեկտների ռիսկայնության փոփոխությունը ներկայացված է աղյուսակով՝

Ոլորտ	Տարեկան ստուգումների քանակ (հատ)	Մինչև ստուգումը բարձր ռիսկ ունեցող տնտեսավարողների քանակ (հատ)	Ռիսկայնության փոփոխությունը ստուգումից հետո		
			Բարձր (3)	Միջին (2)	Ցածր (1)
Տրանսպորտի	19	14*	***0***	***9***	***4***
Էներգետիկայի	122	120**	***60***	***52***	***2***
Քաղաքաշինության	176	128	***17***	***108***	***3***
Տեխնիկական և հրդեհային անվտանգության	167	159**	***80***	***64***	***14***

Ծանոթություն.
** 1 կազմակերպություն դադարեցրել է գործունեությունը*
*** ստուգումների արդյունքների ամփոփումը դեռևս ավարտված չէ*

3.3) Ըստ առանձին ստուգման հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները.

Հաշվարկվում են հաշվետու ժամանակահատվածում ստուգման համար հատկացված ֆինանսական միջոցների և մարդկային ռեսուրսների միջին ցուցանիշները:

2025 թվականին իրականացված առանձին ֆինանսական միջոցներ և մարդկային ռեսուրսներ հատկացված ստուգումներին միջինում 1 ստուգման համար հատկացվել է ***106.495*** ՀՀ դրամ, և միջինում 1 ստուգմանը մասնակցել է ***2*** աշխատակից, 2024 թվականին իրականացված առանձին ֆինանսական միջոցներ և մարդկային ռեսուրսներ հատկացված ստուգումներին միջինում 1 ստուգման համար հատկացվել է ***55.408*** ՀՀ դրամ, և միջինում 1 ստուգմանը մասնակցել է ***1.66*** աշխատակից :

ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ (միջին 1 ստուգում)			
	2024թ.		2025թ.	
	Ծախս/ հազ. ՀՀ դրամ	Ռեսուրս/ աշխատակից	Ծախս/ հազ. ՀՀ դրամ	Ռեսուրս/ աշխատակից
Տեխնիկական և հրդեհային անվտանգության	***30.14***	***1.75***	***43.15***	***1.8***
Էներգետիկայի	***31.86***	***1.1***	***44.83***	***1.7***

Տրանսպորտի	***24.0***	***2***	***12.00***	***2***
Քաղաքաշինության	***49.5***	***1.8***	***31.33***	***1.7***
Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման	***169.0***	***2.86***	***637.720***	***4.4***

Տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հաշվետու ժամանակաշրջանում ստուգման համար հատկացված ֆինանսական միջոցների և մարդկային ռեսուրսների միջին ցուցանիշներով ամենաբարձր ցուցանիշ արձանագրվել է պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտում՝ ինչը կարող է պայմանավորված լինել ոլորտում ստուգումների երկար տևողությամբ և գործուղումների անհրաժեշտությամբ, ամենացածր ցուցանիշները՝ արձանագրվել են էներգետիկայի և քաղաքաշինության ոլորտներում:

Պատկերն ըստ ոլորտների՝



3.4) Տեսչական մարմնի, տեսչական մարմնի աշխատակիցների դեմ բերված դիմում-բողոքների քանակը և դրանց արդյունքները.

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում վերադասության կարգով բողոքարկվել է 224 վարչական ակտ, 2024-ին՝ 165: 149-ով վարչական ակտերը թողնվել են անփոփոխ, իսկ բողոքներն՝ առանց բավարարման, 1 գործով բողոքը բավարարվել է մասնակի, 67 գործով՝ բավարարվել է, 7 բողոք քննության փուլում է:

Ըստ ոլորտների պատկերը հետևյալն է՝

Տրանսպորտի ոլորտ.

Հաշվետու ժամանակահատվածում վերադասության կարգով բողոքարկվել է 62 վարչական ակտ, որից 58-ով վարչական ակտերը թողնվել են անփոփոխ, իսկ բողոքներն՝ առանց բավարարման, 4 գործով՝ բավարարվել է:

Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ.

Հաշվետու ժամանակահատվածում վերադասության կարգով բողոքարկվել է 148 վարչական ակտ, որից 82-ով վարչական ակտերը թողնվել են անփոփոխ, իսկ բողոքներն՝ առանց բավարարման, 59 գործով՝ բավարարվել է, 7 բողոք քննության փուլում է:

Քաղաքաշինության ոլորտ.

Բողոքարկվել է 11 վարչական ակտ, որից 8-ով վարչական ակտերը թողնվել են անփոփոխ, իսկ բողոքներն՝ առանց բավարարման, 3 գործով բողոքը բավարարվել է:

Էներգետիկայի ոլորտ.

Բողոքարկվել է 1 վարչական ակտ, որի քննությամբ բողոքը մերժվել է և վարչական ակտը թողնվել է անփոփոխ:

Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտ.

Բողոքարկվել է 2 վարչական ակտ, 1 գործով բողոքը բավարարվել է և 1 գործով բողոքը բավարարվել է մասնակի:

ԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

2025 թվականին դատարան է մուտքագրվել 538 հայցադիմում, վարույթ է ընդունվել 476 հայցադիմում, 12-ի ընդունումը մերժվել է, 12 հայցադիմում վերադարձվել է, 37 գործ վարույթ ընդունելու ընթացիկ փուլում է:

Հաշվետու տարում 476 դատական գործերով կայացվել է Տեսչական մարմնի 371 վարչական ակտերն անվավեր ճանաչելու, 94-ով՝ անփոփոխ թողնելու մասին վճիռ. 11 գործով դատական վարույթները կարճվել են:

Ներկայացվել է 126 վերաքննիչ բողոք՝ 78-ը Տեսչական մարմնի կողմից և 48-ը՝ տնտեսավարողի: Նախկինում տնտեսավարողի կողմից ներկայացված՝ 20 և Տեսչական մարմնի կողմից՝ 50 վերաքննիչ բողոք մերժվել է: Տնտեսավարողի կողմից ներկայացված 19 և Տեսչական մարմնի կողմից՝ 18 վերաքննիչ բողոք բավարարվել է:

Տրանսպորտի ոլորտ.

Ընդդեմ Տեսչական մարմնի դատարան ներկայացված 298 հայցադիմումից վարույթ է ընդունվել 268-ը, 3-ի ընդունումը մերժվել է, 5 հայց վերադարձվել է, 22 գործ վարույթ ընդունելու ընթացիկ փուլում է:

Կայացվել է 296 վճիռ, որոնցից 42-ով տնտեսավարողի հայցերը մերժվել են, իսկ 254-ով՝ Տեսչական մարմնի դեմ ներկայացված հայցապահանջները բավարարվել են: 2 գործով դատական վարույթը կարճվել է:

Ներկայացվել է 60 վերաքննիչ բողոք՝ 36-ը Տեսչական մարմնի կողմից և 24-ը՝ տնտեսավարողի: Նախկինում տնտեսավարողի կողմից ներկայացված՝ 7 և Տեսչական

մարմնի կողմից՝ 14 վերաքննիչ բողոք մերժվել է: Տնտեսավարողի կողմից ներկայացված 6 և Տեսչական մարմնի կողմից՝ 3 վերաքննիչ բողոք բավարարվել է:

Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ.

Ընդդեմ Տեսչական մարմնի դատարան ներկայացված 198 հայցադիմումից վարույթ է ընդունվել 172-ը, 9-ի ընդունումը մերժվել է, 6 հայց վերադարձվել է, 11 գործ վարույթ ընդունելու ընթացիկ փուլում է:

Կայացվել է 140 վճիռ, որոնցից 49-ով տնտեսավարողի հայցերը մերժվել են, իսկ 91-ով՝ Տեսչական մարմնի դեմ ներկայացված հայցապահանջները բավարարվել են: 9 գործով դատական վարույթը կարճվել է:

Ներկայացվել է 62 վերաքննիչ բողոք՝ 39-ը Տեսչական մարմնի կողմից և 23-ը՝ տնտեսավարողի: Նախկինում տնտեսավարողի կողմից ներկայացված՝ 13 և Տեսչական մարմնի կողմից՝ 35 վերաքննիչ բողոք մերժվել է: Տեսչական մարմնի կողմից ներկայացված՝ 18 և տնտեսավարողի կողմից՝ 6 վերաքննիչ բողոք բավարարվել է:

Քաղաքաշինության ոլորտ.

Ընդդեմ Տեսչական մարմնի դատարան ներկայացվել է 25 հայցադիմում: Վարույթ է ընդունվել 22-ը, 3 գործ վարույթ ընդունելու ընթացիկ փուլում է:

Կայացվել է 23 վճիռ, որոնցից 20-ով տնտեսավարողի հայցը բավարարվել է, 3-ով՝ մերժվել:

Տեսչական մարմնի կողմից ներկայացվել է 1 վերաքննիչ բողոք: Նախկինում տնտեսավարողի կողմից ներկայացված 1 վերաքննիչ բողոք բավարարվել է:

Էներգետիկայի ոլորտ.

Ընդդեմ Տեսչական մարմնի դատարան ներկայացված 14 հայցադիմումից վարույթ է ընդունվել 11-ը, 1-ի ընդունումը մերժվել է, 1 հայց վերադարձվել է, 1 գործ վարույթ ընդունելու ընթացիկ փուլում է:

Կայացվել է 2 վճիռ, որոնցով տնտեսավարողի հայցերը բավարարվել են:

Տնտեսավարողի կողմից ներկայացվել է 1 վերաքննիչ բողոք: Նախկինում տնտեսավարողի կողմից ներկայացված 2 վերաքննիչ բողոք բավարարվել է:

<u>Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման:</u>

Ընդդեմ Տեսչական մարմնի դատարան ներկայացվել է 3 հայցադիմում, որն ընդունվել է վարույթ: Կայացվել է 4 վճիռ, որոնցից 4-ով էլ տնտեսավարողի հայցերը բավարարվել են:

Տեսչական մասրմնի կողմից ներկայացվել է 2 վերաքննիչ բողոք: Նախկինում Տեսչական մասրմնի կողմից ներկայացված 1 բողոք մերժվել է, տնտեսավարողի 1 բողոք բավարարվել:

2025 թվականի ընթացքում ստացված բողոքների և իրականացված ստուգումների ընդհանուր քանակական հարաբերությունը 0.99-ն է, ցուցանիշը 2024 թվականին՝ ***<u>2.13</u>*** է:

Հ = բողոքների քանակ/ ստուգումների քանակ = 538/540 = 0,99

**Հափորոշիչը չի կարող արտահայտել ամբողջական, իրական պատկերը, քանի Տեսչական մարմինն իրեն վերապահված լիազորություններն իրականացնում է, ոչ միայն ստուգումների, այլև մեծամասամբ վերահսկողական այլ գործառույթների միջոցով, ինչը չափորոշչի հաշվարկման բանաձևում ընդգրկված չէ:սված* բցվել